

1911

Կ. ԿՈՍՏԱՆԵՍՆՅՈՒՆ

ՄԻ ԷԶ

ԱՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՅՈՒՆ

Գպրոցի բառամասնակին

Հրատարակելոյ

ՏԻՐՈՒՇԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՅՈՒՆ



Էլէքտրատպարան օր. Ն. Ազանեանի. Թիֆլիս, Պոլից. 7

373

4-75



00 OCT 2010

373
4-75

Կ. ԿՈՍՏԱՆԵՍՆՑ

ՄԻ ԷԶ

ԱՐՂՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Դպրոցի քառամսակին

Հրատարակեց

ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵՍՆՑ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլէկտրագրւոյ սպարան Օր. Ե. Ազանեանցի, Պօլից. 7.

1911



23 MAY 2019

51.434

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Քառասուն տարի մեզանից յառաջ Աղէքսանդրապօլու հասարակութեան բազմադիմի կարիքների մէջ նշանաւոր տեղ էր գրաւում ընթաց սեռի սկզբնական դաստիարակութեան պահանջը:

Ժամանակի ոգուն հակառակ էր և շատ անբնական, որ այնինչ տղաների կրթութեան համար գոյութիւն ունէին դաւառական ուսումնարանն, հոգևոր դպրոցն և մի քանի մասնաւոր տնային ուսումնարաններ, աղջիկները մնում էին առանց տարրական ուսման, առանց գրագիտութեան, այն պատճառով, որ նոցա համար յատուկ դպրոց չկար:

Գրէթէ միմիայն հայ տարրից բաղկացած հասարակութիւնը չբաւորութեան պատճառով անձեռնհաս էր հոգալու ուսումնարանների պահպանութեան ծախսը: Գաւառական ուսումնարանը պահուում էր պետական դանձարանի հաշուով, իսկ հոգևոր դպրոցի պահպանութեան գլխաւոր աղբիւրն էր Եօթնվերաց ս. պատկերի արդիւնքը, որի միայն $\frac{2}{3}$ էր հասնում քաղաքի դպրոցին:

Այս ամենն աչքի առաջ ունենալով, անկասկած, Աղէքսանդրապօլին մեծ բարիք էր իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արղութեանի ձեռնարկութիւնը, որով նա օգնութեան հասաւ տեղացի հայ աղջիկների սկզբնական դաստիարակութեան գործին:

Մահկանացու դուրով, նա չկարողացաւ ինքնին իրագործել իւր խորհուրդներն և թողեց միայն մի կտակ, որ մի կողմից իրաւունք առեց Աղէքսանդրապօլու հայ հասարակութեանն և հոգևոր ծայրագոյն իշխանութեանն հետամուտ լինելու կտակի իրագործմանն, և միւս կողմից առիթ առեց իշխանի ժառանգներին, հիմնուելով նոյն իսկ կտակի վերայ, վէճ յարուցանել և խոչընդոտան լինել նոյն կտակի իրագործմանը: Գատարանն և ղեկավարող շրջանները կարծես, շատ նպաստաւոր էին, ինչպէս կը տեսնի ընթերցողն իւր տեղում, կտակի եղմանն, եթէ իշխանի վերջին ցանկութիւնն և կամքն իւր եռանդուն հետապնդութեամբ և իւր իսկ խոհական հանճարով հանդէս չդարի կատարածելու տէր Յովսէփ քահանայն Կոստանեանց, որն Արղութեան օրիորդական զբաւրոցի շուտափոյթ բացման նախապատճառն եղաւ և ամենայն անձնուիրութեամբ պաշտպան կանգնեցաւ հասարակական շահերին, ազատելով եղծումից Արղութեան կտակի 11-րդ յօդուածը:

Եթէ իշխան Ղահրաման յղացաւ Աղէքսանդրապօլու աղջիկների սկզբնական դաստիարակութեան բարի խորհուրդն և իւր կարողութիւնից յատկացուց քառասուն հազար ըւրլի, տէր Յովսէփն եղաւ այն անձնաւորութիւնը, որ այդ բարի խորհուրդը բարի գործի վերածեց և կտակեալ գումարն, ազատելով ժառանգների յափշտակութիւնից, ծառայեցուց նշանակեալ նպատակին:

Այս և կը տեսնի ընթերցողն առաջիկայ հակիրճ պատմութիւնից:

* *

Երկու խօսք սոյն հրատարակութեան մասին:

Մի խումբ տիկիներ և օրիորդներ իրախտադիտական ազնիւ զգացմունքից թելադրուած, նախաձեռնեցին յաւելրժացնել Արղութեան օրիորդական դպրոցի քառասնամեակը, որ լրանում է 30-ին Յունուարի 1911 ամի, հանդանակելով հիմնադրի և բարեբարների յիշատակին մի կամաւոր նուէր:



4484-2010

Համեստ հաստատութեան համեստ տարեգարձին համեստազոյն մի ձօն էր ծրագրուած. այն է զարգարել զպրոցի դանլիճն հիմնադիր իշխանի, Ղահրաման Երկայնաբազուկ Արղութեանի, մեծագիր պատկերով, որպէսզի մատաղ սերունդն առիթ ունենայ ճանաչելու իւր բարերարին:

Ինչպէս ամէն մի նախաձեռնութեան մէջ, այստեղ էլ համեստ ծրագիրն ինքն իրեն աճեցաւ բնքոյշ սեւի օդուն զեղուն զգացմունքների թելադրութեան տակ:

Խնդակից այդպիսի ձեռնարկութեան և տեղեակ, որ քառասնամեկի ծրագրի մէջ փափագելի է համարուել ունենալ նաև գպրոցի պատմութիւնը, որն, եթէ գլուխ գոյ, պիտի փառաւոր յուշարձան լինի ապագային, մենք ինքնաբերաբար յօժարամիտ գտնուեցանք զրի առնելու այն ամէնն, ինչ որ Արղութեան զպրոցի սկզբնաւորութեան և կտակի իրագործման վերաբերութեամբ մեր անմիջական ծանօթութեան առարկան է եղել թէ յիշողութեան միջոցով և թէ հաւաստի գրաւոր յիշատակարաններով: Եւ այս փոքրիկ աշխատութիւնը գրուեցաւ մեր սիրեցեալ տիկնաջ, Տիրուհի Կոստանեանցի, տրամադրութեան տակ, որը և ցանկացաւ նոյնը հրատարակութեան տալով, նուիրել բարերարներ ի յիշատակին: Հոգեկան մեծ բաւականութեամբ ողջունելով և կատարելով տիկնայ այդ բարի ցանկութիւնը, միևնոյն ժամանակ քաղցրիկ պարտականութիւն ենք համարում շեղմ համակրութիւն ու խրախուսանք յայտնել քառասնամեկի նախաձեռնող տիկիններին և օրիորդներին, որոնք, իրենց ուսման առաջին քայլերն Արղութեան բուրաստանում անելով, իբրև անուշահոտ ծաղիկներ երախտադիտութեան զուարթարար բուրումը տարածում են իրենց շուրջ, նախանձելի օրինակ հանդիսանալով իրենց քոյրերին ամեն տեղ:

Ճոխ ու փարթամ չէ այն նոցա ձօնը, մեծագանձ նուիրաբերութիւն չէ արգարև նոցա հանգանակութիւնը, և այդ ոչ ոքի մտքով էլ չի անցնում պահանջել նոցանից, սակայն անգնահատելի գօրեղ նեցուկ է զպրոցի համար ներկայիս առնասարակ այնքան հազուադիւս զգացմունքը, որ նախկին սաներն իրենց սրտերում սնուցանում են առանց նիւթապաշտական հաշիւների իբրև մի սրբազան կայծ: Այդ զգացմունքը, ճշմարիտ երախտադիտութիւնն, այն այն մեծ գրաւականն է, որ ոքի է տալիս գաղափարական կեանքին: Այդ է իսկական վարձ ու բաժինն այն սերունդների, որոնք բարի գործեր ու հասարակաշահ հիմնարկութիւններ են ստեղծում իրենց եղբայրների և քոյրերի համար. նոքա իրենց վաստակի պտուղը չվայելած անցնում գնում են յաւիտենականութեան ծոցն այն յուսով ու հաւատով, որ բարի գործը կ'ապրի և կըծնուցանէ նոր սերունդներ, որոնք, արժանապէս ճանաչելով և գնահատելով իրենց ժողովութիւն հասած բարիքները, կըվառուին նոր սիրով, նոր նախանձախնդրութեամբ պահպանելու նոցա ազնիւ յիշատակն ապագաների համար:

Այս է ահա, որ պիտի շեշտուի միշտ նման բարի նախաձեռնութիւնների խորհուրդն ու արժէքն հասկանալու համար:

Թող անսպառ լինի երախտադիտական զգացմունքը բարի գործերի բարգաւաճման համար:

Ա. Ա.



Ա.

Իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արղութեան



ար ժամանակ, և այդ ժամանակը մեզանից շատ հեռու չէ, որ Շիրակայ ցորենն ու գարին տեղական առևտրի արդիւնաւոր առարկաներն էին: Աղէքսանդրապոլն այդ առևտրի կեդրոնն էր համարուում այն պատճառով, որ Արփաշայի երկու կողմերի հացն այնտեղ էր բերում վաճառահանութեան: Օրական հարիւրաւոր սայլեր Օսմանեան հողից անցնում էին Արփաշայի և քաղաքի շուկան հեղեղում էին ամէն տեսակ բնական բերքերով ու լիացնում էին երկիրը: Երկար ժամանակ Թիֆլիսի շուկայի ընտիր և գովական ապրանքներից մէկն էր Շիրակայ ալիւրը, որ վաճառուում էր համեմատաբար շատ թանկ գնով:

Ակնբեր է, որ այդպիսի առևտուրն և շատերի հարստութեան աղբիւրն էր. նոցանից մէկն էր կոլլէժսկի ասսէսօր իշխան Ղահրաման Դաւթեան Երկայնաբազուկ Արղութեանը. սա, պետական ծառայութիւնը թողնելով, անցեալ դարու յիմնական թուականների սկսում է պարագել արքունի կապալներով: Զինուորական ամբարներին հաց հասցնելու համար նա առժամանակ հաստատուում է Աղէքսանդրապոլում և իւր գործակատարների միջոցով սկսում է գնել Շիրակայ հացը: Նորա գործակատարներից մէկն էր Զանլաթեան Պօղոս վարդապետի եղբորորդին, Մկրտիչը, որ Սահ-

րատեան Սարգսի հետ միասին կուպէցի *) խանութ ունէին. իսկ միւս գործակատարն էր, Գորոյեանց Սիրական աղայի փեսան Ստեփան Անանիկեանը, որի ձեռին էր գլխաւորապէս Ախալքալակի հացի առևտուրը:

Ժողովրդի բարեսրտութեան և երկրի բերքերի օգուտը տեսնելով, իշխան Արղութեանը դեռ իւր կենդանութեան ժամանակ յաճախ հանում էր իւր կարողութիւնից բաժին և տեղական հասարակութեան պէտքերի համար: Այսպէս՝ 1857 թուին նա 3800 ռուբլի գումար նուիրեց Ս. Նշան եկեղեցու շինութիւնն սկսելու համար, որի նախնական վերակացուներն էին Դիւզբեանդցի տէր Անտոնն և յիշեալ Մկրտիչ Զանլաթեանը:

Վաթնական թուականներին իշխանը քաշուած էր գործերից և ապրում էր Թիֆլիսում իւր սեփական տան մէջ Սաղօվայա (այժմ Բէհրութեան) փողոցում: Անզաւակ մարդ լինելով, նա որդէգրել էր մի օրիորդ, որին ամուսնացուց շտապ կապիտան Միքայէլ Յակովբեան Սահակեանի հետ, ընդունելով վերջինիս ևս իբրև որդէգիր տնփեսայ: Իւր առաքինի կեանքի վերջին տարին, 1868 թուի Յունուարի մէկին իշխան Արղութեանը կազմեց իւր կտակն և ձեռնամուխ եղաւ իւր բարի նպատակներն իրագործելու նախապատրաստութեան:

1868 թուին, երբ տ. Գէորգ Դ. կաթողիկոսը, Ս. Պետերբուրգից վերադառնալով, գտնուում էր Թիֆլիսում, իշխան Արղութեանը մի քանի անգամ ներկայանում է վեհին և յայտնում է նորան իւր սրտի ցանկութիւնը Աղէքսանդրապօլում մի օրիորդական ուսումնարան հաստատելու Ս. Նշան եկեղեցու գաւթում կամ ուր որ կաթողիկոսն յարմար դատէ. թէպէտև վեհն յորդորում է նորան իւր կարողութիւնից մասն հանել Ս. Էջմիածնի և նորա մօտի Ս. Գայիանէի և Ս. Հոփոսիմէի վանքերի նորոգութեան համար, որոնք կարօտ են բարերարների օժանդակութեանը, բայց իշխանն յայտնում է, որ արդէն իւր կտակը կազմուած է և ինքն իւր ուխտը փոխել չի կարող: Աւելի ևս ամրապնդելու համար իւր ուխտը իշխան Ղահրամանը 22 Փետրուարի 1868 ամի մատուցանում է կաթողիկոսին և մի խնդրագիր, դնելով նորա առաջ իւր վերջնական ցանկութիւններն և որոշումներն Աղէքսանդրապօլում օրիորդական դպրոց բանալու մասին:

*) Այն ժամանակ Աղէքսանդրապօլում կուպէց էին ասում գալանտէրէյնի խանութ պահողներին. այդպիսի խանութներն 3—4 հատ էին և դառնում էին Աղէքսանդրեան փողոցում. առաջնակարգ կուպէց էր համարում Նազարէթ Կոստանեանցը, որի խանութը գտնուում էր Աղէքսանդրեան և Պուշկինեան փողոցների անկիւնում իւր կայքի մէջ:

Իշխանի այս խնդրագրին ընթացք տալու համար տ. Գէորգ Դ. հայրապետական կոնդակով թ. 220 նոյն 1868 Յունիսի 8ին պատուիրում է տէր Յովսէփ աւագ քահանային Կոստանեանց և Սիրական աղային Գորոյեանց ձեռնարկել շինութեան: «Իբրև վաղածանօթ բարեգործական նպատակի իշխանի Ղահրամանայ երկայնաբազուկ Արղութեանց, խորհրդակցեալ ընդ միմեանս և ընդ այլ բարերար անձինս, գրում է կաթողիկոսը, փոյթ տարջիք այժմէն որոշել զտեղի դպրոցին առանց յետաձգելոյ, և եթէ հնար ինչ իցէ արկանել զհիմունս նորա ի գաւթի յիշեալ (Ս. Նշան) եկեղեցոյն և կամ ուր ուրեք և յարմար դատեսցի ի ձէնջ ի հաշիւ բարեպաշտի և աստուածասիրի իշխան Ղահրամանի»:

Կաթողիկոսի այս պատուէրն ի կատար ածելով տէր Յովսէփն և Սիրական աղան նոյն 1868 Յունիսի 25ին հրաւիրում են խորհրդի Աղէքսանդրապօլու առաջաւորներին, որոնք յիշեալ կոնդակը լսելուց յետոյ յարմար են դատում Արղութեան ուսումնարանը շինել Ս. Նշան եկեղեցու գաւթի արևելեան կողմում, նախապէս քարուկրեայ կամարով ծածկելով ջրանցքը: *)

Այս որոշման զօրութեամբ 1868 Յունիսի 28ին տէր Յովսէփն և Սիրական աղան գրաւոր պայմանադիր են լինում «եափուճի» Աղապապ մահտեսի Վահրատեանի և Պետրոս Յարութիւնեանի հետ յիշեալ ջրանցքը քարուկրեայ կամարով ծածկելու համար և վճարում են նոյն վարպետներին այդ շինութեան ծախքերի համար կանխապէս ութ հարիւր ռուբլի գումար, որը նոքա վճարեցին իշխանից այդ նպատակի համար ստացած մի հազար ռուբլի գումարից: Բարի, կրի և այլ նիւթերի պատրաստութեան ժամանակն ուշ լինելու պատճառով պայմանաւորում են նոքա, որ եթէ նոյն 1868 թուի աշնանը չկարողանան շինութիւնը աւարտել, 1868ին անպատճառ աւարտուի:

Այս ամենի մասին տէր Յովսէփն և Սիրական աղան հազորդեցին իշխանին Ստեփան Անանիկեանի միջոցով, որն այն ժամանակ ապրում էր Թիֆլիսում Բ. Խոսրովեանցի տանը (անկին

*) Այդ ժողովի արձանագրութեանն ստորագրել են տէր Յովսէփը, պօղպօղկոզնիկ Յովհ. Տիգրանեանց, նազիօրնի սովէտնիկ Ս. Մելիք Աղամեանց, կապիտան Թադէոս Տիգրանեանց, պօղպօրուչիկ Սիրական Գորոյեանց, մահտեսի Մկրտիչ Բարայեանց, զուրերնսկի սեկրետար Արշակ Վարդպատրիկեանց, ազնուական Պաշտուր Աւրանեանց, Նազարէթ Կոստանեանց, Մկրտիչ Քեանդարեանց, Թադէոս Բարայեանց, Պետրոս Զիթոզեանց, Գէորգ Կոստանով, Կարապետ Դ. Բարայեանց, Կարապետ Անանիկեանց, Սիմէօն Թումանեանց: Մարգար Խալաթեանց, որոնց բոլորն ստորագրութիւնը վաւերացուցել է քաղաքի զէպուտոս Աղապապ Խօջայեանց:

Լերմոնտովի և Գանսուկայա փողոցների): Իշխանի նախնական հոգացողութիւններից մէկն էր և այն կանոնադրութեան նախագիծը, որ նա պատրաստել էր օրիորդական ուսումնարանի համար և մտադիր էր առաջարկել հաստատութեան:

Սոյն նախապատրաստութիւնների ժամանակ իշխան Ղահրաման Դաւթեան Երկանաբագուկ Արղութեան կնքեց իւր մահկանացուն 1868 ամի Դեկտեմբերի 16ին: Նոյն ամսի 19ին տեղի ունեցաւ նորա թաղումը. Թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը (յետոյ կաթողիկոս), որ պատարագիչ էր Մոզնու Ս. Գէորգ եկեղեցում, դամբանականի մէջ զրուատեց իշխանի առաքինի գործերն և յայտնեց հասարակութեանը, որ հանգուցեալն իւր կարողութիւնից քառասուն հազար ուրբի գումար է կտակել այն նպատակով, որ նորա տոկոսով Աղէքսանդրապօլում հայ օրիորդական ուսումնարան պահուի: Տողերիս գրողն շտապեցաւ այդ լուրն հաղորդել նամակով իւր հօրը, տէր Յովսէփին. նոյնը հաղորդեց իւր աներոջը, Սիրական աղային, և Մտեփան Անանիկեանը: Աղէքսանդրապօլու հասարակութիւնն այնքան ուրախացաւ և իրեն բաղաւոր զգաց այդ լուրի առթիւ, որ փութաց անմիջապէս հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել տալ Ս. Աստուածածին եկեղեցում իշխանի հոգու համար և աղքատներին հոգու հաց տալ հասարակութեան հաշուով:

Բ.

Իշխան Ղ. Արղութեանի կտակն և կանոնադրութիւնը:

1869 Փետրուարի 1ին Թիֆլիսի նահանգական դատարանն հաստատեց իշխան Ղահրաման Արղութեանի կտակն: Այդ ժամանակ և յայտնի եղաւ կտակի ճիշդ բովանդակութիւնը: Այն յօդուածները, որոնք վերաբերում են Աղէքսանդրապօլին, հետևեալն են:

Յօդ. 10. Աչքի առաջ ունենալով, որ տակաւին աւարտուած չէ Ս. Նշան եկեղեցու շինութիւնը, որի հիմնարկութեան ժամանակ իշխանը նուիրել էր 3800 ուրբի, նա կարգադրում է, որ իւր մահից յետոյ նոյն եկեղեցուն տրուի այլ ևս 2200 ուրբի:

Յօդ. 11. «Չնանարկելով այժմէն իսկ հիմնելու վերոյիշեալ (Ս. Նշան) եկեղեցու բակում կամ ուր աւելի յարմար կըլինի Աղէքսանդրապօլում օրիորդական ուսումնարան նոյն տեղացի հայ լուսաւորչական աղքատ ընտանիքներից ընտրուած տասներկու

աղջիկների համար, մշտնջանապէս իմ անունովս և իմ սեփական ծախքով, և կանգնելու նորա համար յարմարաւոր շինուածք, ես նշանակում եմ այդ ուսումնարանի օգտին քառասուն հազար ուրբի, և այն ուսումնարանը միայն իմ մահից յետոյ պէտք է մտնի Աղէքսանդրապօլու Հայոց հոգևոր կոնսիստորիայի անմիջական տնօրինութեան և հսկողութեան, ևս և հասարակութեան կողմից ընտրուած Աղէքսանդրապօլ քաղաքացի երկու աշխարհական անձերի հոգաբարձութեան ներքոյ, որոնք իմ կտակատարներիցս իմ կտակած գումարն ստանալուց յետոյ անմիջապէս պէտք է յանձնեն նոյն գումարն Ռուսաց կայսերութեան որ և է մի վարկային հաստատութեան, և նոյն գումարից ստացուած տոկոսով մշտնջանապէս պահեն յիշեալ ուսումնարանը»:

Յօդ. 13. Կտակեալ քառասուն հազար ուրբին լրացնելու համար իշխանը թողնում է քսան հազար ուրբի պետական տոկոսաբեր թղթեր և վեց հազար ուրբի ստանալիք պարտավորահաններով, ընդ ամէնը 26 հազար ուրբի. իսկ պակասորդ տասնեչորս հազար ուրբու համար կտակի 13 յօդուածով կարգադրում է՝ իւր ամուսին իշխանուհի Սոփիայի մահից յետոյ վաճառել իշխանի սեփական տունը, որի մէջ նորա մահից յետոյ բնակելու էր իշխանուհին մինչև իւր մահը, և ստացուած գնից տասն չորս հազար ուրբին ուսումնարանին վճարելուց յետոյ մնացորդն յանձնել իշխանի եղբօր դստերը, իշխանուհի Սալօմէ Գէորգեան Շալիկովային:

Կտակին նայելով, իշխան Ղահրամանը թողել է շարժական և անշարժ կարողութիւն 159519 ուրբի գումարի: Այդ կարողութեան միայն մի քառորդն է, որ նա տուել է Աղէքսանդրապօլու օրիորդական ուսումնարանին, իսկ մնացեալ մասի ամենամեծ բաժինը կտակել է իւրայիններին: Այսպէս իւր ամուսին իշխանուհի Սոփիա Աւետիքեանին թողել է քսանեկերկու հազար ուրբի կանխիկ գումար, մի այգի կրկնայարկ քարաշէն անով Օրթաճալայում, որ գնահատել է տասն և մէկ հազար ուրբի, իւր տան շարժականը, կանկարատի և ամէն սարք, այլ և իրաւունք բնակելու ցմահ իւր սեփական տան մէջ: Իւր այլիք բրոջը, Թագուհի Դաւթեան Ղորղանեանցին, կտակել է մի այգի, որն արժէ երկու հազար ուրբի, և երեքհազար ուրբի կանխիկ դրամ: Իւր եղբօրն, իշխան Յովհաննէս Դաւթեանին, կտակել է հինգ հազար ուրբի, նորա որդի, իշխան Գէորգին, և չորս դուստրներին երկու հազարական ուրբի: Իւր հանգուցեալ եղբօր, իշխան Գէորգ Դաւթեանի, երկու ուստրներին, Աղէքսանդրին և Միքայելին, և երկու դուստրներին, իշխանուհի Սալօմէ Շալիկովային, և Մակայ Գուլբասարովային, երկու հազարական ուրբի: Իշխանուհի Սալօմէ Շալիկովայի որ-

դու, իշխան Նիկողայ Շալիկովի, անունով, որն ուսանում էր կլաս- սիքական գիմնազիայում, պատուիրում է տոկոսով շահեցնել երեք հազար ուրբլի, որպէսզի յետոյ այդ գումարն և իւր տոկոսը գործ դրուի տղայի կատարելագործութեան վերայ կայսերութեան բարձրագոյն ուսումնարաններէից մէկում:

Կտակակատար նշանակել է իւր կղբօրն իշխան Յովհաննէս Դաւթեանին, իւր փեսայ շտապս կապիտան Միքայէլ Յակովբեան Սահակեանին և իւր ամուսին իշխանուհի Սոփիա Աւետիքեանին, վերջինիս յատկացնելով երկու ձայն:

Հանգուցեալ իշխանի վերջին կամքը կատարելու համար շտապս կապիտան Մ. Սահակեան 24ին Մայիսի 1868 ամի առան- ձին խնդրագրով դիմում է կովկասեան փոխարքայի գլխաւոր կա- ռավարութեան և առաջարկելով նորա հաստատութեան իշխան Արղութեանի պատրաստել տուած կանոնադրութեան նախագիծը, խնդրում է, սր այն ժամանակուայ փոխարքայ մեծ իշխան Մի- խայէլ Նիկողայիվիչի միջնորդութեամբ բարձրագոյն հաճութիւն ստացուի Աղէքսանդրոպօլում իշխան Ղահրաման Արղութեանի ա- նունով օրիորդական ուսումնարան բանալու. միևնոյն ժամանակ կտակակատար Սահակեանը խոստանում է նախ՝ կտակեալ գումարի քսանհազար ուրբլին, որ տոկոսաբեր թղթերով պահուում են, յանձնել ուր որ հարկ համարուի և երկրորդ՝ վեց հազար ուրբլին, որ պարտավորակներով ստացուելու էր, նմանապէս և տասն և չորս հազար ուրբլին, որ տան վաճառումից ստացուելու է, ժամանակին ներկայացնել ըստ պատկանութեան: Գլխաւոր կա- ռավարութիւնը կտակակատար Սահակեանի խնդրին ընթացք տալու համար նոյն 1869 Սեպտեմբերի 6-ին թ. 3873 գրութեամբ Թիֆլիսի նահանգապետին է ուղարկում կանոնադրութեան նա- խագիծն և պատուիրում է առաջարկել կտակակատարին բարե- փոխել այդ նախագիծն այն ցուցումների համեմատ, որոնք նշանա- կուած են նոյն գրութեան մէջ: Գլխաւոր կառավարութեան առա- ջարկած փոփոխութիւններէ մէջ առաւել նշանակելի են հետե-ւեալները.

Ա. 4 յօդուածում յիշուած գլխաւոր հսկողութիւնն ուսումնա- րանի ուսումնական մասի վերայ կարող է պատկանել միմիայն ու- սումնարանական իշխանութեանն և ուրիշ ոչ ոքի:

Բ. 11 յօդուածում յիշուած չէ թէ սրպիսի իրաւունքներ պէտք է ունենայ ըստ իւր կրթութեան ուսումնարանի տեսուչը կամ տեսչուհին.

Գ. 14 յօդուածում պէտք է նշանակել, որ թուարանութեան գասախօսութիւնը լինելու է ուսերէն.

և Դ. 14. յօդուածի ծանօթութեան խմբագրութիւնը պէտք է փոխել, որովհետև ուսումնարանի ծրագրի ընդարձակումը կարող չէ տեղի ունենալ առանց ուսումնարանական իշխանութեան թոյլ- տուութեան:

Թիֆլիսի նահանգապետը գլխաւոր կառավարութեան այս տնօրէնութեան համաձայն նախագիծն յանձնեց շտապս կապիտան Սահակեանին Թիֆլիսի ոստիկանութեան միջոցով, ինչպէս երե-ւում է Սահակեանի ստորագրութիւնից, սր տուել է այդ մասին 1869 Սեպտ. 25ին:

Գ.

Կանոնադրութեան հաստատութիւնը

Թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսն իւր ունե- ցած տեղեկութիւններէ հիման վերայ կարեւոր էր համարում, որ Աղէքսանդրապօլու Հայոց հասարակութիւնը միջամտութիւն գործէ կտակի կատարումը փութացնելու 1869 Հոկտեմբեր ամսի ա- ռաջին օրերում նա իւր մօտ կանչեց տողերիս գրողին, որն այն ժամանակ կլասիքական գիմնազիոնի է. գասարանի աշակերտ էր, և գործի դրութիւնը պատմելով, պատուիրեց շուտով մի նամակ գրել հօրս, տէր Յովսէփին, և հրաւիրել քաղաքացւոց յատուկ պատգամաւոր ուղարկելու Թիֆլիս և խնդրելու, որ կտակի իրա- գործումը չձգձգուի: Սրբազան հօր պատուէրն անմիջապէս կա- տարուեցաւ: Տէր Յովսէփին իւր կողմից հաղորդեց այն ժամա- նակուայ քաղաքացի առաջաւորներին գործի դրութիւնն և խնդ- րեց հոգալ ինչոր պէտք էր:

Երկար չքաշեց, Աղէքսանդրապօլու Հայոց հասարակութիւնն իւր կողմից ընտրեց երկու պատգամաւոր. մէկն էր հոգեւոր կա- ռավարութեան անդամ տէր Յովսէփ աւագ քահանայն Կոստա- նեանց, միւսը՝ քաղաքային դէպուտատ Աղապապ Սօջայեանց: Տէր Յովսէփը վիճակային գործերով և գաւառական ուսումնարա- նի դասերով ծանրաբեռնուած՝ չէր կարող առանց պատշաճաւոր իշխանութիւններէ հրամանին հեռանալ Թիֆլիզ գնալու համար: Իսկ Ա. Սօջայեանցը, նոյն տարին քաղաքի դէպուտատի պաշ- տօն ունենալով և առանց տէր Յովսէփին միայնակ գործելու ի- ռեն անընդունակ համարելով, հրաժարուեցաւ Թիֆլիս գնալուց: Հասարակութիւնը նորա փոխարէն ուրիշին չընտրեց: Գործին սկիզ- բըն դնելու և ընթացք տալու համար սակայն ընտրեալ պատ- գամաւորներն իրենց կողմից հաւատարմագիր ուղարկեցին

Թիֆլիս համաքաղաքացի Պետրոս Զիթողեանցին և Գրիգոր Ռափայէլեանցին, որպէսզի նորա Ստեփան Անանիկեանի աջակցութեամբ աշխատին կտակեալ գումարն ստանալ: Վերջիններին յաջողուեցաւ, միայն Ս. Նշան եկեղեցուն հասանելի կտակեալ 2200 ուրբլի գումարն ստանալ կտակակատարներէց, իսկ օրիորդական ուսումնարանի համար նորա ոչինչ չկարողացան հոգալ:

Այն ինչ հասարակական ընտրութեան մասին ծանուցուեցաւ ծայրագոյն հոգևոր իշխանութեանը: Տնօրինելով, որ տէր Յովսէփին կարևոր արձակուրդը տրուի, տ. Գէորգ Դ. կաթողիկոսը մինչոյն ժամանակ հրամայեց, որ Ս. էջմիածնի Սինօզը տէր Յովսէփին յանձնէ քննելու Ախլցխայի հայ հասարակութեան և յաջորդ Սուքիաս վարդապետ Պարզեանցի մէջ ծագած գժտութեան պատճառները: Հրամայուեցաւ տէր Յովսէփին նախ Ախլցխայ գնալ և գործը վերջացնել և ապա անցնել Թիֆլիս:

Քննութեան գործն աւարտելուց յետոյ տէր Յովսէփն 1870 Ապրիլի ամսին եկաւ Թիֆլիս: Այստեղ նա հաւաստի աղբիւրներից տեղեկացաւ, որ գլխաւոր կառավարութիւնը վերադարձուցել է կտակակատարներին իշխանի կազմած կանոնադրութեան նախագիծն և առաջարկել է բարեփոխել, իսկ կտակակատարներն իրենց իրաւունք չէին համարում հանգուցեալ իշխանի վերջին կամքի մէջ փոփոխութիւն անել: Տէր Յովսէփին ֆուում էր կտակակատարների վերայ ներգործել այն ուղղութեամբ, որ օրիորդական ուսումնարանի բացումն և պահպանութիւնն համապատասխան լինի հանգուցեալ կտակարար իշխանի բուն նպատակներին և ցանկութեանը: Այդ գործը նա կատարեց ամենայն յաջողութեամբ: Յաճախ խորհրդակցելով Մակար արքեպիսկոպոսի հետ, նա առիթ ունեցաւ թէ Թիֆլիսի առաջնորդարանում և թէ իւրաքանչիւրի տներում օգուտ քաղել և այն ժամանակի բանիմաց և փորձառու ազգայիններից: Նորան յատկապէս իրենց խորհուրդներով օգնեցին Պետրոս Շանշեանց, որին նա յաճախ այցելում էր, տէր Ստեփան Մանգիլեան, տէր Յովսէփ Օրբէլի, Գրիգոր Իւանիչ Իգմիրեանց, Աւետիք և Համբարձում էնֆրաճեանները, որոնք հանգուցեալ իշխանին ծանօթ էին և տեղեկ էին նորա ցանկութեանն և ակնկալութիւններին: Բարեբաղաբար տէր Յովսէփը շատ շուտով ազդեցութիւն ձեռք բերեց նոյն իսկ կտակակատարների վերայ, որոնք նորան յանձնեցին կազմել ուսումնարանի կանոնադրութեան նոր նախագիծ և ընթացք տալ նորան այնպէս, ինչպէս որ հաճելի է նորան իբրև Աղէքսանդրապոլու Հայոց պատգամաւորի: Իշխանուհի Արղութեանն ամէն անգամ, երբ տէր Յովսէփը գնում էր նորա տունն և Հոգևոց էր

ասում հանգուցեալ իշխանի համար, և այդ լինում էր միշտ, խնդրում աղաչում էր նորան շտապեցնել ուսումնարանի բացումը, որպէսզի իւր ամուսին իշխանի հոգին վերջապէս հանգստանայ. բարեպաշտ իշխանուհին ասում էր. Տէր Հայր, Քու վերայ է իմ յոյսը, Քու հոգու խաթեր ջանք արն, որ մեր սրտի փափագը կատարուի և իմ կնիազի հոգին գինջանայ»: Նոյնն էր կրկնում միշտ և շտապ կապիտան Սահակեանը: Նոցա երկուսի այսպիսի վերաբերումը, նոցա վստահութիւնն, և այդպիսի աղերսական խօսքերը տէր Յովսէփին այնքան սրտապնդեցին, որ նա մեծ եռանդով ձեռնամուխ եղաւ գործին և սկսեց իմբազրել նոր կանոնագրութիւն, աչքի առաջ ունենալով իշխանի նախագիծը:

Բարեբաղաբար այդ ժամանակ Թիֆլիս ժամանեց տ. Դեորգ Դ. կաթողիկոսը (1870 Մայիսի 1-ին). տէր Յովսէփը փութաց հանգամանօրէն զեկուցանել վեհ. կաթողիկոսին գործի դրութիւնն և կտակակատարների խնդիրը: Վեհը կանչեց կտակակատարներին իւր ներկայութեանն և նոցա իսկ բերանից հաւաստի եղաւ տէր Յովսէփի զեկուցումների ստուգութեանը, մխիթարեց և օրհնեց նոցա, և յորդորեց, որ փութան գրով առաջարկել իրենց խնդիրը իշխան Արղութեանի վերջին կամքն ի կատար ածելու համար: Կաթողիկոսի խօսքերից քաջալերուած կտակակատարները խնդրեցին շուտով կազմել կանոնադրութեան նախագիծն և խնդրագիրը: Մայիսի առաջին օրերումն էր. տողերիս գրողն զբաղուած էր գիմնազիոնի աւարտական քննութիւններով, երբ հայրս ուրախութեան արտասուքն աչքերին ասաց: Արիք, տղէք, աշխատելու ժամանակն է, պէտք է կանոնադրութիւնը շուտով կազմենք, որ երկաթը տաք տաք ծեծուի: Տղէքն էին մեր քաղաքացի երկրաչափ Կարապետ Ջուլալեանց, որի մօտ ֆուում էինք տողերիս գրողն և Արիսողում Յովհաննիսեանը. արդէն տէր Յովսէփի հետ եկած էր Աղէքսանդրապոլու հոգևոր կառավարութեան քարտուղար Կարապետ Չանիրէկեանցը: Մեր բոլորիս համար էլ մեծ ուրախութիւն և պատիւ էր այդպիսի մի նուիրական գործի մասնակցել ու ինչպէս կարող էր: 2—3 օր շարունակ աշխատանքը մեր մէջ բաժանելով նստանք և կազմեցինք, խմբագրեցինք, գրաբառ կոկեցինք, ուսերէն թարգմանեցինք և արտագրեցինք կանոնադրութեան նախագիծն երկու երկու օրինակ հայերէն և ուսերէն իրար կողքի. առանց այն չէր, որ վիճաբանէինք ամէն մի կէտի վերայ. սակայն տէր Յովսէփը, որ մեր նախագահն էր և մեր աչքում փորձառու մարդու մեծ հեղինակութիւն ունէր, գիտէր ժամանակին կանոնեցնել վիճաբանութիւններն, ասելով. Օրհնածներ, թէ կանոնի մէջ

թերութիւն կայ, յետոյ էլ կըփոխուի, մէկ թողէք ուսումնարանը բացուի: Վերջապէս՝ ամէն ինչ պատրաստուեցաւ. կըտակակատարները Մայիսի 4ին 1870 ամի մատուցին վեհ. կաթողիկոսին իրենց խնդրագրի հետ և կանոնադրութեան նախադիժը, Վեհ. կաթողիկոսն ինչ ինչ բարեփոխումներ անելով նախագծի մէջ, 15ին Մայիսի հաստատեց Արղութեան օրիորդական ուսումնարանի կանոնադրութիւնն և հայրապետական կոնդակով թ. 149 Աղէքսանդրապօլու Հայոց հոգևոր կառավարութեան անունով պատուիրեց ի կատար ածել հետևեալ հրամանները:

Ա. Աղէքսանդրապօլու Հայոց հասարակութեան մէջ կոնդակի իմաստը հրատարակելուց յետոյ կանոնադրութեան համաձայն հոգաբարձուներ ընտրութիւն կատարել և առջարկել կաթողիկոսին հաստատութեան համար.

Բ. Կարգադրել, որ ուսումնարանն անուանուի «Արղութեան Հոգևոր Դպրոց Օրիորդաց Հայոց Աղէքսանդրապօլու».

Գ. Մինչև նոր շինուածքի պատրաստելը կտակակատարների և իրեն իսկ կաթողիկոսի ցանկութեան համեմատ այժմէն իսկ բանալ դպրոցն հանգուցեալ իշխանի բաղձանքին համաձայն եկեղեցական կամ ուսումնարանական սենեակներում և կամ ուր որ յարմար դատուի, որպէս զի դպրոցի սկզբնաւորութիւնը իսկապէս տեղի ունեցած լինի:

և Դ. Այդ ամենի մասին տեղեկութիւն տալ Մ. Աթոռի ուսումնական յանձնաժողովին:

Այս պատուէրներն աւանդելուց յետոյ վեհ. կաթողիկոսը վերջացնում է կոնդակն յորդորական խօսքերով և միանգամայն յայտնում է, թէ պատշաճաւոր հրահանգները նա բերանացի աւանդել է տէր Յովսէփին.

«Հուսկ ուրեմն, դրում է նա, քաջայոյս եմք, զի կրօնասէր ժողովրդականք տիրապահ քաղաքիդ ոչ անփոյթ գտցին ըստ անձնիւր յարտբերութեանց ձեռներէց լինել յայս ազգապիտան և ամենակարևոր հոգատարութիւն, զո՛նելով զջանս և զարդիւնս ի բարւոք պահպանութիւն և ի կարգաւորութիւն նորոգ դպրոցիդ. և որ ինչ պատշաճ և արժանն էր պատուիրեցաք բերանացի աստ Յովսէփ աւագ քահանային Կոստանեանց, զի որպէս անձնազո՛ մշակ ազգի և եկեղեցւոյ անձանձրոյթ ջանադիր լիցի զպատշաճաւոր կտտարմանէ պատուիրանացն ի մէնջ»:

Դ.

Արղութեան դպրոցի անդամիկ հոգաբարձութեան հաստատութիւնն և դպրոցի բացումը:

Հայրապետական կոնդակն ընդունելուց յետոյ տէր Յովսէփը Մայիսի 18 ին վերադարձաւ Աղէքսանդրապօլ: Կտակակատարները դործի այսպիսի յաջող վախճանից մխիթարուած և սփոփուած, յանձնեցին տէր Յովսէփին հինգհարիւր ուրբի միանուագ դումար ուսումնարանի բացման սկզբնական կարևոր ծախքերի համար: Մեծ ուրախութիւն պատճառեց Աղէքսանդրապօլ քաղաքացւոց տէր Յովսէփի վերադարձը հայրապետական աւետարել կոնդակով: Մայիսի 24 ին Ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցաւ այդ կոնդակի հանդիսաւոր ընթերցումը: Նախապէս արուած ծանուցման համաձայն նոյն իսկ օրն հրաւեր եղաւ ժողովրդին փութալ հոգևոր դպրոցի դահլիճն և ընտրել քառասուն պատգամաւոր կանոնադրութեան համեմատ հոգաբարձուներ ընտրելու համար: Ս. Պատարագից յետոյ կատարուեցաւ հոգեհանգիստ հանգուցեալ իշխան Ղահրամանի համար: Ապա ժողովուրդը զիմեց տղայոց հոգևոր դպրոց և այնտեղ սահմանեալ կարգին համեմատ կատարեց քառասուն պատգամաւորների ընտրութիւնը: Մի շաբաթից յետոյ Մայիսի 31ին ընտրեալ պատգամաւորները ժողովուցեան նոյն հոգևոր դպրոցի դահլիճն և ձայների բացարձակ առաւելութեամբ Արղութեան օրիորդական հոգևոր դպրոցի համար չորս հոգաբարձու և երկու անձնափոխանորդ ընտրեցին: Հոգաբարձու ընտրուեցան տէր Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց, փոխգնդապետ Յովհաննէս Տիգրանեանց, կօլլէժ, ասսէսոր Յարութիւն Յարութիւնեանց և պատուաւոր քաղաքացի Պետրոս Զիթողեանց. անձնափոխանորդ ընտրուեցան պատուաւոր քաղաքացիք Կարապետ Անանիկեանց և Յովհաննէս Բաբայեանց:

Կատարուած ընտրութեան մասին Աղէքսանդրապօլու հոգևոր կառավարութիւնն Յունիսի 18ին զեկոյց վեհ. կաթողիկոսին, մատուցանելով հաստատութեան և ընտրողական թերթը. նոյն ամսի 24 ին վեհ. կաթողիկոսն օրհնութեան կոնդակով հաստատեց հասարակական այդ ընտրութիւնը: Հաստատութեան կոնդակով ամենայն Հայոց հայրապետը պատուիրում է նորընտիր հոգաբարձուներին «արիութեամբ, անձանձիր վաստակօք, իտհական ընթա-

4784 - 2010

ցիւք և ամենայն հաւատարմութեամբ վարել զնորոգ ստանձնեալ պաշտօն ձեր ի նպաստ անսայթաք կառավարութեան դպրոցիդ յօգուտ լուսաւորութեան ուսումնական օրիորդացն մերադնէից քաղաքիդ համաձայն նպատակի կտակաւանդ բարեպաշտ հանգուցելոյն և մերս մշտաբաղձ ցանկութեան, որպէսզի աշակերտուիիր նորոգ դպրոցիդ լիցին զարգացեալք և՛ ուսմամբ և՛ բարոյականութեամբ՝ աստուածպաշտութեամբ, համեստութեամբ և ամենայն առաքինութեամբ»:

Կտակին համաձայն հոգաբարձութեան հաստատութիւնից յետոյ կտակակատարներն յանձնեցին նորան կտակեալ գումարի այն մասը, որ պահուում էր պետական տոկոսաբեր թղթերով և ստացուելու էր մուրհակներից այն է քսաննվեցհազար ուրբլի գումարը: Մինչև որ տեղի ունեցան որոշ ձևականութիւններ և կարելի եղաւ ստանալ յիշեալ գումարն, հասաւ 1870 ամի վերջը: Դեկտեմբերի 30 ին Ստեփան Անանիկեանը հոգաբարձութեան յանձնարարութեամբ ստացաւ Թիֆլիսում կտակակատարներից 26 հազար ուրբլու արժէթղթեր և հասուց հոգաբարձութեան գանձապահին: Այդ արթիւ 1871 Յունուարի 1 ին Ս. Աստուածածին եկեղեցում հոգեհանգիստ կատարուեցաւ: Այն օրից և սովորութիւն եղաւ ամէն տարի Յունուարի 1 ին նոյն հոգեհանգիստը կատարել, մտաբերելով, որ հանգուցեալ իշխանն իւր բարի կամքն Աղէքսանդրապօլու չքաւոր օրիորդների կրթութեան համար կըտակով արձանագրել էր Յունուարի 1 ին 1868 ամի:

Միւս կողմից՝ նորընտիր հոգաբարձութեան վերայ պարտք կար նախ յարմարաւոր տուն վարձել դպրոցի համար, պատրաստել տալ դպրոցական կահկարասի, ընտրել ուսուցիչներ և վարժուհիներ, որոնց թիւն այն ժամանակ շատ քիչ էր, մանաւանդ համապատասխան վարժուհիներ, և վերջապէս ընտրել տասներկու աղջիկ հայ լուսաւորչական աղքատ ընտանիքներից, և այլն: Այդ ժամանակի հանգամանքներին նայելով, այդ ամէնը պահանջում էր զգուշաւոր հոգացութիւն: Մի հանգամանք ևս պէտք էր հաշուի առնել, այն է՝ նորահաստատ դպրոցի պահպանութեան պղբիւրները: Կտակեալ գումարի տոկոսիքով բոլոր ծախքերը ծածկել կարելի չէր. հարկ էր կամ նպաստներ հայթայթել և կամ կարող աշակերտուհիներից թոշակ ստանալ: Մահմանուեցաւ որ՝ զեզրող բարերարներ հրաւիրել, գլխաւորապէս զազափարին համակրող տիկիներէից. այդ նպատակի համար հոգաբարձութիւնը տպագրեց յատուկ հրաւիրաթերթեր, որոնց վերայ նշանակուում էր դպրոցին բարերար լինելու յօժար տիկիներին անունն և նոցա տուրքը: Հոգաբարձութեան այդ ձեռնարկութիւնն արձագանք գտաւ շատ ազնիւ տիկիների սրտերում. ինչպէս հոգաբարձու-

թեան եռամեայ հաշուից երևում է, 1870—1874 Յունուարի մէկն «ի բարեգործուհի անդամոց օրիորդական դպրոցի» ստացուել է 295 ուրբլի:

Արդէն վարձուած էր Ս. Նշան եկեղեցուց ոչ շատ հեռու՝ աստիճանաւոր Տկէշէլովի տունը, որը մի կերպ յարմարուեցաւ դպրոցի համար, պատրաստուած էր կահկարասի, կային որդեգրող բարերար տիկիներ, ընտրուած էին որդեգիր աշակերտուհիք, նշանակուած էին ուսուցիչներ և վարժուհի (տիկին Զարուհի Գիւլումեանց) և կարգադրուած էր դպրոց բանալ և դասատուութիւնն սկսել:

Այդ ժամանակ Աղէքսանդրապօլու յաջորդ նշանակուեցաւ Աղափիրեան Գրիգոր վարդապետ (ապա արքեպիսկոպոս), սա համալսարանական ուսում առած շատ բարեհամբոյր և բանիմաց հոգևորական էր. 1870 թուին վարում էր Թէոդոսիայի Խալիպեան ուսումնարանում փոխ տեսչի պաշտօն, սակայն յիշեալ ուսումնարանի փակման պատճառով մնացել էր անգործ. նորընտիր հոգաբարձութիւնը տէր Յովսէփի աղղեցութեամբ խնդրեց վեհ. հայրապետին, որ նորան նշանակէ փոխանորդ Աղէքսանդրապօլու, որպէսզի թէ՛ նորահաստատ օրիորդական դպրոցն և թէ՛ նոյն իսկ տղայոց հոգևոր դպրոցն ունենան մի ուսումնական մերձաւոր իշխանաւոր և ղեկավար: Վեհ. կաթողիկոսը չզլացաւ այդ խնդիրն: Երբ Աղափիրեան վարդապետը ժամանեց Աղէքսանդրապօլ և ընդունեց իւր յաջորդական պաշտօնը, կարգադրուեցաւ, որ Յունուարի 30-ին, շաբաթ օրը, լինի Արղութեան դպրոցի օրհնութիւնն և բացումը: Այդ օրը ս. պատարապ մատուցուեցաւ Ս. Նշան եկեղեցում, որի շինութեան ծախքին մասնակից էր եղել իշխան Ղահրամանը 6000 ուրբլի նպաստադրամով: Այդ եկեղեցու շինութիւնն արդէն աւարտուել էր և 1870 թուի Դեկտ. 22-ին տեղի ունեցաւ նորա օծումը: Յունուարի 30-ին 1871 ամի եկեղեցում զրուած՝ դիտարդի շուրջը բոլորուած էին Արղութեանի անունով ընտրուած 12 որդեգիր աղջիկները միակերպ միատարազ հագնուած, ներկայ էին բազմաթիւ հանդիսականներ և հիւրեր քաղաքի հայ և օտար երևելիներից, հոգևորական և աշխահական: Նոյն օրն հանդիսաւոր կերպով կարգացուեցաւ եկեղեցում Գրիգոր վարդապետ Աղափիրեանին Աղէքսանդրապօլու յաջորդ նշանակելու հայրապետական կոնդակը: Նոր յաջորդը կոնդակից յետոյ խօսեցաւ իւր անդրանիկ քարոզը. ս. պատարագից յետոյ կատարուեցաւ հոգեհանգիստ նորահաստատ դպրոցի հիմնադիր իշխան Արղութեանի հոգու փրկութեան համար: Ապա բոլոր հանդիսականներն և հիւրերը 12 որդեգիրների հետ միասին ժողո-

վուեցան դպրոցի մէջ. առաջին անգամն էր, որ աղէքսանդրապօլ-
ցի մի քանի յարգելի տիկնայք, գլխաւորապէս բարերարներ, ա-
ռանց քաշուելու մասնակցում և ականատես էին լինում դպրո-
ցական հանդէսին: Տեղի ունեցաւ դպրոցի օրհնութեան կարգը,
որից յետոյ յաջորդը ողջունեց Աղէքսանդրապօլու Հայոց անդ-
րանիկ օրիորդական դպրոցի բացումն և խրախոյս կարգաց, որ
ամէն ոք իւրովսանն նպաստաւոր լինի նորա զարգացմանն. ապա
ճառեր կարդացին դպրոցի նոր վարժունի տիկին Չարունի Գիւ-
լումեանց, և տղայոց հոգևոր դպրոցի նոր տեսուչ. Սարգիս Բէկ-
նազարեանց:

Վերջինս բարեյիշատակ Մկ. Սանասարեանի և մի քանի
այլ բարերարների հաշուով յատկապէս մանկավարժական ուսումն
էր առել Չուիցերիայում, Կիւսնախտի ուսուցչական սեմինարիա-
յում, յայտնի մանկավարժ Ֆրիդրի ձեռքի տակ, և Ս. Պետեր-
բուրգի հայ ուսանողների յատկապէս դօքտ. Ա. Բարայեանի
յանձնարարութեամբ և տէր Յովսէփի ազդեցութեամբ, որն այդ
ժամանակ ընտրուած էր և հոգևոր դպրոցի հոգաբարձու, 1870
ձմեռն հրաւիրուած էր Աղէքսանդրապօլ նոյն դպրոցի տեսու-
թեան: Որքան յիշում եմ, այս առաջին անգամն էր, որ Աղէք-
սանդրապօլու հոգևոր դպրոցը տարեկան 400 ուրբի ոտձիկ վճա-
րեց մի տեսչի, որ ունէր և ուսուցչական պարտաւորութիւններ.
որպիսի ոտձիկ մինչ ցայն տեսնուած չէր և ոչքի մտքից էլ
չէր անցնում:

Հանդէսից յետոյ տեղի ունեցաւ նախաձաշ, որի ժամանակ
արևշատութեան բաժակներ պարպուեցան յատկապէս թագաւոր
կայսեր և վեհափառ կաթողիկոսի անունով, ապա հոգւոյ հան-
գստեան բաժակ բարերար իշխան Ղահրամանի, և կենաց բա-
ժակներ կտակակատար իշխանուհի Սօֆիայ Աւետիքեանի և շտ.
կապիտան Միք. Սահակեանի համար:

Փետրուարի 1-ին 1871 ամի, երկուշաբթի օրն, սկսուեցաւ
դասատուութիւնն: Այն օրից Արղութեան օրիորդական հոգևոր
դպրոցն իւր բեղմնաւոր կեանքը շարունակեց շնորհիւ եռանդուն
գործունէութեան թէ հոգաբարձուների և թէ ընտրուած մանկա-
վարժական խմբերի *): Թողնենք, որ ուրիշները կատարեն նորա

*) Ինչպէս առաջին տարուայ պաշտօնական հաշիւներից երևում է, Ար-
ղութեան օր. դպրոցում ուսուցիչ էին Ղազարոս Աղայեանց, Աբգար Գիւլու-
մեանց (յետոյ տէր Մեսրոպ) և սորա ամուսինը, Չարունի: Ղազարոս Աղայեանցն
երկրորդ դասարանում աւանդում էր Ռուսաց լեզու:

Հետաքրքիր է և հոգաբարձութեան հաշիւն առաջին եռամեկի համար:
Մուտք ունեցել են 10902 ուրբի 1870ից մինչև 1874 Յունուարի 1. այդ դու-
մարի մէջ են մտնում դրամագլխի տոկոսադրամից դատ և այլ կողմնակի ար-
դիւնքներ, ինչպէս օրինակ թոշակադրամ 3591 ուրբի վիճակախաղի արդիւնք

դպրոցական մանկավարժական կեանքի ճշգրիտ նկարագիրն և
մենք անցնինք համառօտ գաղափար տալու այն դատի մասին,
որ տարիներ շարունակ իբրև դամոկլեան սուր սպառնում էր
նորաբողբոջ դպրոցի կեանքին:

Ե.

Արղութեանի կսակի դատը:

1871 Ապրիլի 10-ին Արղութեան իշխանի եղբորորդիք, Ա-
ղէքսանդր և Միքայէլ Գէորգեան Ե. Արղութեան իշխաններն և
նոցա քրոջ, իշխանուհի Սալամէ Շալիկովայի, որբերի խնամա-
կալները բողոք մատուցին Թիֆլիսի նահանգական դատարանն
և խնդրեցին անգործադրելի ճանաչել կտակի 11-րդ յօդուածը,
պատճառաբանելով թէ հանգուցեալ իշխան Ղահրամանն իւր կեն-
դանութեան ժամանակ դպրոցը չէ շինել, ուստի և գոյութիւն
չունեցող հաստատութեանը կարելի չէ յանձնել կտակի 11-րդ յօ-
դուածում որոշուած քառասուն հազար ուրբի գումարը: Նահան-
գական դատարանը, նոյն 1871 թուի Հոկտեմբերի 11-ին քննեց
այդ գործն և վճիռ դրեց անհետևանք թողնել ժառանգների խըն-
դիրը: Վերջիններս անբաւական մնացին այդ վճիռից և դիմեցին
դատաստանական պալատ, որն 1872 թուի Սեպտեմբերի 11-ին
քննութեան առաւ այդ գործը: Աչքի առաջ ունենալով, որ ժա-
ռանգները հաստատելու համար թէ դպրոցն արդարև գոյութիւն
չէ ունեցել, ներկայացուցել էին իբրև ապացոյց կտակակատար-
ների առաջարկած և գլխաւոր կառավարութեան կողմից չհաս-
տատուած կանոնադրութիւնը. Թիֆլիսի դատաստանական պա-
լատը վճիռ դրեց Արղութեան կտակի 11-րդ յօդուածը ճանաչել
անգործադրելի և շնչել նահանգական դատարանի վճիռը: Այս-
պէս՝ չնայելով, որ Արղութեան կտակը գործադրուած էր և նո-
րա 11-րդ յօդուածի զօրութեամբ օրիորդական ուսումնարանն ա-
ւելի քան տարի ու կէս յառաջ գոյութիւն առած, դատաստանա-
կան պալատի 1872 Սեպտ. 11-ին դրած վճիռով Աղէքսանդրապօ-
լու հասարակութիւնը պէտք է զրկուէր կտակի բարիքներից, և

1872 և 1873 ամի 507 ուրբի և այլն. Ծախքի դումարն է յիշեալ շրջանում
8809 ուրբի 27 կ. այդ դումարի մէջ են մտնում ուսուցիչների և այլ ոտձիկներ
3924 ուրբի 26 կ. տան վարձ 642 ուրբի 87 կ. որդէգրների հազուստ, ստնա-
ման, ուսումնական պիտոյք և այլն 638 ուրբի 25 կ. Չնաղործութեան պարա-
զաներ 420 ուրբի. 61 կ. վառելիք 245 ու. 25 կ. դատարանական կահկարասի
326 ուրբի 20 կ. վիճողական գործի վերայ սկզբից մինչև 1874 թ. 1615 ուրբ.
ի 10 կ. և այլն:

նորափթիթ ուսումնարանի կեանքն անակնկալ կերպով պէտք է խզուէր: Հարուածը շատ խիստ էր. հարկ էր վտանգի առաջն առնել և արդարութեան ձայնը լսելի անել ուրոր պէտք էր: Սեպտեմբերի 28ին 1872 ամի Աղէքսանդրապօլու փոխանորդը, Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան, հրաւէր ուղարկեց Աղէքսանդրապօլու հասարակութեան այն պատգամաւորներին, որոնք մասնակցել էին օրիորդական դպրոցի հոգաբարձուների ընտրութեանը, ժողովուել քաղաքի դեպուտատարանում նոյն դպրոցի մասին խորհելու: Այդ հրաւիրաթերթի վերայ ստորագրել են թէ դպրոցի հոգաբարձուներն և թէ նոցա ընտրող պատգամաւորները: Հոկտեմբերի 1ին 1872 ամի պատգամաւորները * ժողով կազմեցին և, դատաստանական պալատի Սեպտ. 11ին դրած վճար հետեանքները քննութեան տոնելով, եկան այն եզրակացութեան, որ իրենց և քաղաքի բոլոր հասարակութեան կողմից լիազօրութիւն յաճնուի տէր Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին և ասձանաւոր Ստեփան Անանիկեանցին, որ նոքա երկուսն ի միասին պաշտպանեն օր. դպրոցի դատը: Ընտրողները միևնոյն ժամանակ իրենց կազմած արձանագրութեան մէջ որոշում են իրենց լիազօրների ձանապարհորդութեան ծախքերն հոգալ, պարտք են դնում օր. դպրոցի հոգաբարձութեան վերայ, այժմէն տալ տէր Յովսէփին երկուհարիւր ուուրի «ի պէտս միմիայն անձնական ծախուց» և ուրիշ ինչոր ծախս լինի թղթագին, փաստաբանի, հեռագրի և այլ անակնուկների պէտքերի, հասարակութիւնն յանձնէր առնում վճարելու, երբ լիազօրները հաշիւ ներկայացնեն: Բացի այս՝ եթէ հարկն ստիպէ թիֆլիսում կամ բացակայութեան մէջ մնալ երկու ամսից աւելի, վճարել տէր Յովսէփի անձնական ծախքերի համար ամսական մի հարիւր ուուրի. իսկ եթէ հարկն ստիպէ նորան որևէ մի այլ տեղ գնալ թիֆլիսից, այն ժամա-

*) Ստորագրել են 34 պատգամաւոր, որոնք են, պետպօլիտիկ Յովհաննէս Տիգրանեանց, պատպարուչիկ Սիրայկան Գորոյեանց, Կարապետ Անանիկեանց, Պետրոս Զիթողեանց, Պետրոս Քէշիշեանց, կապիտան Թադէոս Տիգրանեանց, Յովհանէս Սահրատեանց, Գ. Վէքիլեանց Ա. Վարդպարիկեանց, Գրիգոր Զալալեանց, Աւետիք Խան-Անուշեանց, Մարգարէ Խալաթեանց, մահտ. Դարեպաշան Բունիաթեանց, Աղապապ Խոջայեանց, Գրիգոր Սիմոնով (Չաւահիրճի), Յարութիւն Վանեցեանց, մ. Թաթէոս Նօհրատեանց, մահտ. Հանպար Մանուկեանց, Գէորգ Խոյեցեանց, Յովհանէս Կոռանեանց, Յակոբ Դասապեանց, ախուլեարնի սովետնիկ Յովհանէս Լաբադեօզեանց, Մկրտիչ Կոստանեանց, Յովհաննէս Բաբայեանց, Յակոբ Աղուլեանց, Յարութիւն Պալասանեանց, Մկրտիչ Արաբաշեանց, Գէորգ Մկրտումեանց, Աւետիք Նալեանց, Ստեփանոս Բաղրամեանց, Ստեփանոս Ա. Աղապալեանց, Յարութիւն Միքաբեանց, Յակոբ Մատակեանց, (մէկն անընթեանի). սոցա ստորագրութիւնները վաւերացուցել են քաղաքի դեպուտատները Մկրտիչ Քեանդաբեանց և Յարութիւն Զիթողեանց:

նակ հասարակութիւնը պէտք է որոշէ, նորա համար «գայլ իմն եղանակ ձանապարհածախուց»: Նմանապէս հասարակութեան պատգամաւորները խոստանում են ամեն աջակցութիւն ցոյց տալ ինչոր պէտք լինի գործի յաջողութեան համար, տալով տէր Յովսէփին և Ս. Անանիկեանցին «գօրինատահման հաւատարմագիր», և յայտնում են, որ եթէ, Տէր մի արասցէ, գործն անյաջող վերջանայ, իրենք չունին» բնաւ յարուցանել ի վերայ սոցա գտըրտունջ անբաւականութեան մանաւանդ ի մասին առնելի ծախուցն»:

Հասարակութեան կողմից իւր վզին դրուած լծի ծանրութիւնն զգալով, տէր Յովսէփը Հոկտեմբերի 7ին հրաւիրաթերթ ուղարկեց հոգաբարձուներին և պատգամաւորներին և յայտնեց, որ ձանապարհ ելնելուց յառաջ Հոկտեմբերի 8-ին կիրակի օրը պատարագ է մատուցանելու Ս. Նշան եկեղեցում և հոգեհանգստեան պաշտօն կատարելու հանգուցեալ իշխան Դահրամանի յիշատակին, ուստի և հրաւիրում է նոցա ներկայ լինել. «զվերջին պարտիս հոգեկան միթիթարութեան հանգուցելոյն, գրում է տէր Յովսէփը, գոլով ի կատար ածեալ, ի կողմանէ անարժանութեանս և բարեպաշտօն հասարակութեան քաղաքիս հրաւիրեցից զհոգի արժանայիշատակ հանգուցելոյն և զքաղցր սիրտ բարեխնամ կրտակակատարացն ի գործակցութիւն և յաջակցութիւն առաջիկայ աշխատանացն»: Այդ բարոյական պարտքը կատարելով, տէր Յովսէփն յոյս ունէր ամրապնդել կտակակատարների տրամադրութիւնը զպրոցի օգտին:

Պատգամաւորներն հասարակութեան կողմից յանձնարարական գրեր գրեցին թիֆլիս Արդութեանի կտակակատարներին և Հայոց առաջնորդ Մակար արք եպիսկոպոսին, խնդրելով չզլանալ իրենց աջակցութիւնը տէր Յովսէփին. նմանապէս նոքա մի խնդիր ուղարկեցին և վեհ. կաթողիկոսին, որին յայտնելով իրենց կատարած ընտրութեան մասին, խնդրեցին նորա բարձր հովանաւորութիւնը: Այդ թղթի մէջ նոքա գրում են թէ առ ի գերծուցանելոյ զմեզ ի պատասխանատուութենէ առաջի Աստուծոյ, խղճի մերոյ և զմեզ ընտրող հասարակութեան ևս և լրութեան ողջոյն հայ ազգի, մանաւանդ ի դատապարտումնէ ապագայ սերնդոց մերոց և անաչստ պատմութեան որպէս սառնասիրտ և անտարբեր առ յայսպիսի վսեմ- և ազգօգուտ բարիս հասարակութեան մերում՝ միաձայն համաձայնութեամբ ընտրեցաք պատգամաւոր զբարեկրօն տէր Յովսէփ աւագ քահանայն Կոստանեանց, որ իւրով եռանդուն, գովելի, բազմադիմի աշխատութեամբ յօգուտ հասարակութեան մերոյ

և փորձեալ ժրաջան գործունէութեամբ և շրջանկատ խոհեմութեամբ գրաւեալ է արժանապէս զվարկ հասարակութեան տեղոյս»:

2.

Բողոքագրի պատճառութիւնը

Դատաստանական պալատի վճռից յետոյ մի ամիսն արդէն անցել էր, երբ տէր Յովսէփն հասաւ Թիֆլիս: Մնում էր երեք ամիս ժամանակ բողոքի իրաւունքը չկորցնելու համար: Նպատակն յայտնի էր. անծանօթ և անորոշ էին նորան հասնելու ճանապարհները ոչ միայն տէր Յովսէփի համար, այլ մինչև անգամ իրաւագէտ անձինքներին:

Դատաստանական գործի ուսումնասիրութիւնն սկզբում բաւական ժամանակ խլեց տէր Յովսէփից: Նա ինքն էր ամէն ինչ կարգում, ինքն էր արտագրում պատճէնները, ամէն մի զատաւորի և փաստաբանի հետ ինքն էր տեսնում և խօսում:

Բանիմաց մարդիկներին առաջին կարծիքն այն էր, որ տէր Յովսէփը կամ մի ուրիշ պաշտօնական անձն, հոգևորական, ուղևորուի Ս. Պետերբուրգ և այնտեղ հոգայ ինչ որ պէտքն էր: Այդ մասին տէր Յովսէփն իւր որդու միջոցով, որը Ս. Պետերբուրգում ուսանում էր (տողերիս գրողը), այնտեղի բանիմաց ազգայինների կարծիքն ուզեց իմանալ, հաղորդելով, իհարկէ, գործին վերաբերեալ կարևոր տեղեկութիւնները: Ս. Պետերբուրգում կարևոր չհամարեցին յատուկ մարդու այնտեղ գնալը, այլ խորհուրդ տուին ամէն պատրաստութիւն և նախազգուշութիւն ձեռք առնել Թիֆլիսում, ուր աւելի կարևոր էր համարում աջալուրջ և հաւատարիմ մարդու ներկայութիւնը: Երբ այդ խնդիրը վերջացաւ, տէր Յովսէփը գլխաւորապէս կտակակատարների և նոցա փաստաբան Աստուածատուր (Բողդան) Եակուլեանի աջակցութեամբ հետամուտ եղաւ գործնական պատրաստութիւններին:

Բայց այդտեղ նորա դէմ ելան ծանր դժուարութիւններ: Հարկ եղաւ փաստաբանների խորհրդակցութիւն կազմել որոշելու համար գործողութիւնների ծրագիրը: Պատմում էր Գէորգ Եւանգուլեանը, որ նոյնպէս իբրև խորհրդատու մասնակցում էր այնտեղ, թէ ինչպէս յուսահատեցուցիչ կարծիքներ էին յայտնում ներկայ փաստաբաններն և ցոյց էին տալիս տէր Յովսէփի առաջարկած փաստերի պակասաւոր կողմերը: Տէր Յովսէփն սկզբում լուռ լսում էր, բայց վերջն, իրեն չկարողանալով զբսպել, սրտի կսկծից լաց եղաւ: Մենք, ասում է, շփոթեցանք և չիմացանք ինչ անել. աշխատեցանք նորան մի կերպ հանգս-

տացնել և խնդրեցինք, որ, եթէ գիտէ, թող ինքը մեզ մի հնար ցոյց տայ. «Ես մի խեղճ քահանայ մարդ եմ, ասաց նա մեզ, չունիմ ձեր գիտութիւնն ու հասկացողութիւնը, բայց սիրտս ինձ ասում է, թէ անկարելի է, որ այդ գործին ճար չլինի, որովհետև համոզուած եմ թէ մեր դատն արդար է. կ'աղաչեմ, օրէնքների յօդուածները մի ժամանակ մոռացէք, խղճացէք ինձ վերայ. ես դատարկաձեռն Աղէքսանդրապօլ վերադառնալ և իմ քաղաքացւոցս երեսը տեսնել չեմ կարող. ես այստեղ կըմեռնիմ, եթէ այդ գործին մի ճար չլինի»: Բոլորս էլ զգածուեցանք, պատմում էր Եւանգուլեանը, և խորհուրդը շարունակեցինք: Այդ ժամանակ տէր Յովսէփը մեզ մի միտք տուեց, որ մեր գլուխը չէր եկել, մենք տեսանք, որ նորա ցոյց տուած ճանապարհով գործը կը պաշտպանուի, եթէ ապացոյցներն, ինչպէս պէտք է, պատրաստուին: Այն ժամանակ տէր Յովսէփը սիրտ առաւ, և խոստացաւ անմիջապէս հոգալ հարկաւոր թղթերը:

Այս առաջին ծանր խորհրդակցութիւնից յետոյ, որն անջնջելի տպաւորութիւն էր թողել թէ փաստաբանների և թէ իրեն տէր Յովսէփի վերայ, հարկ եղաւ նորան ճանապարհորդել Երևան և Ս. Էջմիածին և կարևոր փաստաթղթեր ժողովել: Միւս կողմից նա բանակցութեան մտաւ իւր որդու միջոցով Ս. Պետերբուրգի իրաւաբանների հետ նախ և յառաջ պարզելու այն խնդիրը, թէ ո՞ւմ բերանից պէտք է գրուի բողոքը 11րդ յոդուածի պաշտպանութեան համար, և ինչպէս պատճառաբանութիւն պիտի ունենայ:

Այս խնդրում նորա որդուն շատ օժանդակ եղաւ բարեյիշատակ Կարապետ Յարութիւնեան Եղեան, որ կապեր ունէր փաստաբանների և ազդեցիկ պաշտօնեաների հետ: Նորա մօտիկ բարեկամն էր երզուեալ հաւատարմատար պրօֆէսսօր Սամարսկի-Բըխովէց, Վլադիմիր Վասիլեվիչ, որն ամենից լաւ խորհուրդ տուեց: Աչքի առաջ ունենալով, որ իշխան Ղահրաման Արղութեան քառասուն հազար ռուբլի գումարը կտակով յատկացուցել է 12 չքաւոր օրիորդների համար եկեղեցու մօտ մի դպրոց պահելու, որպիսի դպրոցը համարւում է օրէնքի XI հոտրի 1 մասի 1010 յօդուածի զօրութեամբ «եկեղեցու մօտ գտնուող աստուածահաճոյ հաստատութիւն», Սամարսկին պնդում էր, որ դատաստանական պալատի Սեպտեմբերի 11 ինդրած վճռով խախտուել են Հայոց եկեղեցու իրաւունքներն, և կաթողիկոսը, որի թեմի մէջ է գտնուում Աղէքսանդրապօլը, կամ Երևանու թեմական կոնսիստորիայն, պէտք է միջամտի իբրև երրորդ անձն և խնդրէ, որ յիշեալ վճիռը ջնջուի: Սամարսկու այս կարծիքն իս-

կոյն հեռագրով հաղորդւեցաւ տէր Յովսէփին 1872 Նոյեմբերի 27ին: Նոյն ամսի 30ին նա հեռագրով յանձնեց իւր որդուն գրել տալ երկու բողոք՝ մէկն երրորդ անձի բերանից և միւսը կտակակատարներին, և պատրաստի ուղարկել՝ պալատին ներկայացնելու համար. միևնոյն ժամանակ խոստանում էր ուղարկել վաւերաթղթերի պատճէնները:

Բողոքները պատրաստելու համար հարկ եղաւ վերստին բանակցել Սամարսկու հետ, որը սակայն հրաժարուեցաւ կտակակատարներին դատը պաշտպանելու և յանձն առաւ միայն երրորդ անձի իրաւունքներին պաշտպան կանգնել: Բանակցութիւնը ձգձգուեցաւ մինչև Դեկտ. 5 այն պատճառով, որ աւելի վաղ տեսնել Սամարսկուն անհնարին էր: Դեկտեմբեր 3ին նա բաց նամակով հաղորդեց Եղեանին, (նոյնը հեռագրով կրկնեց և Դեկտ. 4ին), որ ինքը դասերի պատճառով 4ին տեսնուել չի կարող և խնդրում է իւր մօտ Դեկտ. 5ին: Այդ օրն Եղեանը գնաց և խօսեցաւ Սամարսկու հետ. վերջինս յանձնառու եղաւ սէնատում պաշտպանել երրորդ անձի իրաւունքներն և այդ մասին խընդիրքը գրել. պայմանին համաձայն նա գործի սկզբին պէտք է ստանար 200 ուռբլի, իսկ յաջողութեան դէպքում այլ ևս 500 ուռբլի: Նոյն իսկ օրն հեռագրուեցաւ տէր Յովսէփին, թէ խընդիրքի օրինակը պատրաստ կըլինի և կ'ուղարկուի Դեկտ. 9ին, և խնդրուեցաւ անմիջապէս փոխադրել 200 ուռբլի: Այդ հեռագիրն ստանալուն պէս տէր Յովսէփը Դեկտ. 6ին հեռագրում է իւր որդուն թէ «խնդիրքների հետ միասին ուղարկեցէք և այն հաւատարմաթղթի օրինակը, որ պէտք է տայ հոգևոր իշխանութիւնը կամ հասարակութիւնը»:

Երրորդ անձի իրաւունքների պաշտպանութիւնն իւր վերայ առնելով, Սամարսկին չհրաժարուեցաւ իւր դատին ոյժ տալու համար գրել խնդիրք և կտակակատարների բերանից առանց խոստանալու պաշտպանել նոցա դատը սէնատում: Այս պարտականութիւնն յետոյ իւր վերայ առաւ երգուեալ հաւատարմատար Գերարդը, որ նոյնպէս նշանաւոր փաստաբաններից մէկն էր մայրաքաղաքում:

Տէր Յովսէփի յանձնարարութեամբ Աղէքսանդրապօլսու փոխանորդ Սուքիաս վարդապետ Պարզեանց (այժմ արքեպիսկոպոս), որն այն ժամանակ յաջորդել էր հրաժարուած Աղափիրեան Գրիգոր եպիսկոպոսին, երկու հարիւր ուռբլին փոխադրեց ուղղակի Եղեանի անունով Դեկտեմբերի 25 ին:

Սամարսկին չկարողացաւ նշանակած օրը, Դեկտեմբերի 9 ին, հասցնել խնդիրքներն և հաւատարմաթուղթը: Հարկ եղաւ

մի քանի օր ևս սպասել: Մինչև ամէն ինչ պատրաստուեցաւ, արտագրուեցաւ և ուղարկուեցաւ Թիֆլիս տէր Յովսէփին, եղաւ Դեկտ. 13 «Իմ բաղձիցս խնդիրները զրկելը յետաձգուաւ որոշածս ժամանակից ուշ, գրում է տէր Յովսէփին տողերիս գրողը Դեկտ. 13 ին. շաբաթ օրը (իմն Դեկտ. 9 ին) չէր կարողացել հասցնել և թողել էր երկուշաբթի օրուան (իմն Դեկտ. 11 ին), երկուշաբթի էլ մինչև երեկոյ հաղիւ ստացանք, և արտագրել տալով, տեսանք, որ մենք ինքներս այստեղ՝ նրա գրածներից բան չենք հասկանում, որովհետև խառն էր գրուած, ուստի հարկաւոր եղաւ նորից գրող անձին, Սամարսկուն, տեսնել և ցոյց տալ արտագրուածները, որ ինքը կարգայ, ուղղէ, ինչպէս հարկն է. այս երկու օր է չէինք կարող նրան տանը տեսնել, և այսօր միայն հաղիւ կարողացանք ուղղել տալ և զրկել քո անունովդ»: Սորա հետ միասին տէր Յովսէփին հաղորդուեցաւ Սամարսկու հրահանգը. «կտակակատարների խնդիրը և մերը միասին մէկ ժամանակ պէտք է տրուին, կարգում ենք նոյն նամակում. սպասել և յետոյ տալը խորհուրդ չէ տալիս. աշխատեցէք ժամանակին ամէն բան հասցնել, ղօկումենտները բոլորը պատրաստել, սուղերնի պալատից վճուի վաւերական պատճէնները խնդրել երկու օրինակ. այս մասին ես չգիտեմ, ինչպէս պէտք է հոգաք դուք. եթէ Դու կոնդակ ունիս կաթողիկոսից, որ հաւատարմացեալ պատգամաւոր ես, լաւ է, որ շտապիս խնդիր տալ պալատին այդ պատճէնները տալու և օր յառաջ պատրաստել այդ թղթերը. եթէ հասարակութիւնից հաւատարմաթուղթ ունիս, կարող ես նոյնպէս խնդրամատոյց լինել պալատին պատճէնների մասին»: Բանն այս է, որ հաւատարմաթղթի օրինակը տէր Յովսէփին ուղարկուեցաւ նոյն Դեկտ. 13 ին, և նորա որդին քաջ գիտէր, որ հայրը տակաւին չունի հաւատարմաթուղթ. այդ գիտակցութիւնից ստիպուած նա գրում էր, որ տէր Յովսէփին ինչ ձևով և կարող էր պատճէններն ստացման մասին յառաջուց հոգար, մինչև որ իսկական հաւատարմաթուղթը պատրաստուի. չէ որ վերջինս պէտք է նրեանու կոնսիստորիայից ստացուէր: «Եթէ այնպէս պատահեց, գրում է որդին հօրը, որ այդտեղ Քեզ բան հոգալու հնար չկայ, նրեան կամ էջմիածին աճապարելդ յաւ կը լինէր, որովհետև վախում եմ թէ առաջիկայ տւների պատճառով այնտեղի գործակալներդ էլ անփոյթ չմտան և ժամանակներս կորչի»:

Հեռագրներից և այլ գրութիւններից երևում է սակայն, որ տէր Յովսէփին իւր որդու յիշեալ նամակից անկախ հոգացութիւն ունեցել է հաւատարմաթղթերի մասին, բայց յաջողութիւն չէ

գտել այն պատճառով, որ գործին ուղղութիւն տալ չեն իմացել էջմիածնում: Դեռ 6 ին Դեկտ. տէր Յովսէփն ստանում է Սինոզի անդամ Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանից հեռագիր, որով նա հաղորդում է թէ պահանջուած վաւերական պատճէնները, բացի մէկից, յանձնուել են փոշթին և թէ բողոքը պէտք է մատուցանել հոգևոր կառավարութեան անունից: Հարկ է լինում տէր Յովսէփին բացատրել նորան, Սինոզին զեկուցանելու համար, որ բողոքը պիտի տրուի կաթողիկոսի կամ կոնսիստորիայի անունից: Այս ցոյց է տալիս, որ էջմիածնում դեռ գաղափար չունէին թէ ինչպէս պիտի սկսուի գործն. ուստի և չգիտէին թէ և ինչպէս պիտի գրուի հաւատարմաթուղթը: Միայն Դեկտ. 29 ին, այսինքն այն ժամանակ, երբ արդէն Թիֆլիս հասել էր Դեկտեմբ. 13 ին գրուած յիշեալ նամակն և հաւատարմաթղթի օրինակն և տէր Յովսէփը կարողացել էր նոցա մասին հաղորդել էջմիածին, ստացւում է Մանկունուց հետեւեալ հեռագիրը.

«Շուտով կըստանաք կոնսիստորիայից հրաման, որը հաւատարմաթղթի գորութիւն կ'ունենայ. եթէ այդ հրամանը բաւարար չլինի, հեռագրեցէք, կըշտապիմ ուղարկել հաւատարմաթուղթ Ձեր ուղարկած օրինակին համեմատ»:

Այս հեռագրի հանդէպ տէր Յովսէփը շեշտում է յատուկ հաւատարմաթղթի կարևորութեան վերայ: Դեկտ. 30 ին վերջապէս նա ստանում է Երևանու փոխթեմակալ Մկրտիչ արք եպիսկոպոսից հետեւեալ հեռագիրը.

«Փօշթով ուղարկւում է կոնսիստորիայից հաւատարմաթուղթ ձեր անունով Արղութեանի գործի համար»:

Այս ամենից ակներև է, որ պաշտօնական գորութիւն ունեցող օրինական հաւատարմաթուղթ տէր Յովսէփի ձեռքն հասաւ 1873 Յունուարի առաջին օրերում միայն:

է.

Հաւատարման խնդիրը

Այդ միջոցին հանդէս եկաւ մի նոր հոգս և տագնապ: Կըտակաւատար Սահակեանն, հաւաստի լինելով, որ Սամարսկին շատ յոյս չունի կտակաւատարների բողոքի յաջողութեանը, իրեն եղած կողմնակի դիմումներին տեղի տալով, համաձայնում է հաշտութեամբ վերջացնել վէճը ժառանգների հետ: Թիֆլիզի փաստաբաններն անվտանգ և ապահով են համարել այդ: Նա դիմում է տէր Յովսէփին և առաջարկում նորան համաձայնել գործն

հաշտութեամբ վերջացնելու: Ծրագրուում էր տալ ժառանգներին հինգհազար ուրբի կանխիկ գումար, մի հազարը վճարելու էին կտակաւատարներն և չորս հազարն Արղութեան օրիորդական զըպրոցը:

Տէր Յովսէփ այդ առաջարկութեանը պատասխան տալուց յառաջ ուղեցաւ նախ խնդիրն ուսումնասիրել իրաւաբանական կողմից և ապա իմանալ նաև վեճ. կաթողիկոսի և Աղէքսանդրապօլու հասարակութեան հաճութիւնը: Դեկտ. 27 ին նա հեռագրում է Ս. Պետերբուրգ իւր օրդուն.

«Կտակաւատարներն առաջարկում են հաշտութեամբ վերջացնել, իրենց կողմից վճարելով մի հազար, մեր կողմից չորս հազար. համաձայնիմ թէ ոչ. չի սպասում ապագային մի վրտանդ վէճի մէջ շմանակցող ժառանգների և այժմ վիճողների անչափահաս զաւակների կողմից»:

Նորա այս հեռագրին պատասխան տալու համար հարկ եղաւ խորհրդակցել Սամարսկու հետ, որ իրեն առաջարկուած հարցերին գրաւոր պատասխանեց Դեկտ. 30 ին այսպէս.

1. Օրէնքով հաշտութեան դաշն կարող է կապուել միմիայն վիճող անձինքների մէջ. այդ պատճառով Հայոց հոգևոր իշխանութիւնն իբրև գործի մէջ շմանակցած մէկը հաշտութեան դաշինքի մէջ մասն ունենալ կարող չէ, մանաւանդ աչքի առաջ ունենալով 1289 յօդուածը, որն արգելում է հաշտութեամբ վերջաւորել այնպիսի գործերը, որոնք կապ ունին արքունի շահերի հետ. իսկ կտակաւատարների և ժառանգների մէջ հաշտութիւն կարող է լինել կամ խնդիր տալով հաշտութեան մասին կամ նօտարական մի ստորագրութիւն կազմելով:

2. Որովհետև հոգևոր իշխանութիւնը դատի մէջ մասնակցած չէ և դատաստանական պալատի վճիռը նորան յայտնի չէ, ըստ իս, գրում է Սամարսկին, նա 895 յօդուածի գորութեամբ չի կորցնում իրաւունքը պահանջելու կտակեալ գումարը:

3. Որովհետև հաշտութեան բանակցութիւնների մէջ մասնում են յօժարակամ, ուստի բանակցողները ոչ մի կանոնի ենթակայ չեն. թէ ժառանգներն և թէ կտակաւատարները կարող են իրենց դաշնագրութեան մէջ մտցնել ինչպիսի պայմաններ որ իրենց հաճելի է:

4. Եթէ կարելի լինէր այժմէն իսկ համաձայնութիւն կայացնել բոլոր ժառանգների հետ, այդ, իհարկէ, աւելի լաւ կը լինէր. իսկ եթէ այդ դժուար է անել և նոքա ապագայում պահանջ յայտնելու լինին, դատաստանական պալատի վճիռը նորա համար ոչ մի գորութիւն չունի և նոքա կարող են պահանջ յայտնել միմիայն

իրենց մասերի համար:

5. Անշափահասները չափահասութեան հասնելով իրաւունք չունին վէճ հանել այն գործերի համար, որոնք հաշտութեամբ վերջացուցել են նոցա խնամակալները (օպէկան):

Սամարսկու գրաւոր այս պատասխանն առնելուց յետոյ, որն ապա ուղարկուեցաւ փոշթով տէր Յովսէփին, նոյն Դեկտ. 30 ին նորան հեռագրուեցաւ այսպէս.

« Լիճողների անշափահաս դաւակներն իրաւունք չունին, վէճին չմասնակցող ժառանգները կարող են բողոքել: Եթէ պայմանները ձեռնառու են, հրաւիրեցէք բոլոր վիճող և չվիճող ժառանգներին մասնակցել հաշտութեան դաշինքի մէջ: Եթէ մինչև պայմանաժամն (իմն Յունուարի 10) հաշտութիւնը գլուխ չգայ, երկու բողոքն էլ ներկայացուցէք: Մանրամասնութիւնները նամակով»:

Այս հեռագրից յետոյ տողերիս գրողն, ուրիշ հեղինակաւոր կարծիքներ ևս լսելով, 1873 Յունուարի 2ին հեռագրեց տէր Յովսէփին հետևեալը.

« Օտար իշխանութիւնների միջամտութիւնը խափանելու համար աւելի լաւ է, որ ժառանգները հաշտութեան գրի միջոցով գումարն յանձնեն Ս. Նշան եկեղեցուն ի սեփականութիւն նոյն եկեղեցու մօտ Հայոց համար աստուածահաճոյ՝ մի հիմնարկութիւն պահելու նպատակով»:

Այս հեռագրների բացատրութիւններն անմիջապէս մանրամասնօրէն հաղորդուեցան նամակով տէր Յովսէփին:

Միաժամանակ տէր Յովսէփը դիմել էր Ս. Էջմիածին՝ վեհ. կաթողիկոսի կամքն իմանալու, ևս և Աղէքսանդրապօլ՝ Հայոց հասարակութեան հաւանութիւնն ստանալու: Վեհ. կաթողիկոսը նոյն Դեկտ. 30ին հեռագրում է տէր Յովսէփին այսպէս.

« Չորս հազարի զիջանելը շատ զգալի է. ըստ իս, պէտք է պակսեցնել քանակը. յամենայն դէպս ես համաձայն եմ հաշտութեան, որը պէտք է լինի օրինական կարգով և զգուշութեամբ, որպէսզի ապագային նոր վէճ չծագի»:

Կաթողիկոսի հաւանութեան մասին գրեթէ նոյն բառերով առանց յիշելու գումարի քանակը հեռագրում է և Սինօզի ատենադպիր Սուքիաս Թաղիանոսեանը:

Հայ հասարակութեան կամքն իմանալու համար տէր Յովսէփը նոյն Դեկտ. 28ին հեռագրով դիմեց Աղէքսանդրապօլու յաջորդ Սուքիաս վարդապետին: Վերջինս նոյն ամսի 29ին առանձին իր սերտագիր ուղարկեց հոգաբարձուներին, նոցա ընտրող պատգամաւորներին և հասարակութեան առաջաւորներին՝ ժողովուրդու և խորհրդակցելու: Դեկտ. 30ին նոքա Սուքիաս վարդա-

պետի նախագահութեամբ ժողով կազմեցին հոգևոր դպրոցի դահլիճում և ծանօթանալով հաշտութեան խնդրին վերաբերեալ տեղեկութիւններին, հաւանութիւն տուին, որ իրենց հաւատարմատար տէր Յովսէփին հաշտութեամբ վերջացնէ ժառանգների հետ, օրիորդական ուսումնարանի բաժնից զիջանելով նոցա չորս հազար ուրբլի այն պայմանով միայն, որ ներկայ ժառանգներն և նոցա յետագայ սերունդներն «օրինական կարգաւ յաւիտեանս ժամանակաց հրաժարեցին յոր և իցէ վիճաբանութեանց ի գործ կտակաւանդութեան քառասուն հազար ուրբլեաց արծաթոյ»*: Հասարակական այս որոշման մասին Սուքիաս վարդապետը Դեկտ. 31 հեռագրեց տէր Յովսէփին այսպէս.

« Պատգամաւորութիւնն և հոգաբարձութիւնը հազիւ համաձայնեցան զիջողութիւն անել, այն էլ եթէ վիճողներն ի դէմս իրենց ժառանգների հրաժարուին պահանջներից: Կըստանաք նամակ»:

Յունուարի 1 ին 1873 ամի Սուքիաս վարդապետն ուղարկեց տէր Յովսէփին արձանագրութիւնն և երկու միանման գրութիւններ, որոնց մէջ հաղորդելով նորան հասարակութեան հաւանութիւնն հաշտութեամբ վերջացնել ժառանգների հետ, մէկ թղթով իրաւունք է տալիս վճարելու երեք հազար ուրբլի և միւսով չորս հազար: Այս ցոյց է տալիս, որ հասարակութիւնը ցանկութիւն է յայտնել, որքան կարելի է, պակաս գումարով վերջացնել գործն և որպէսզի տէր Յովսէփի ազատութիւնը շտկաշկանդուած չլինի, սահման է դրել այդ կրկնակի թուերի մէջ:

Արդէն մօտենում էր բողոք մատուցանելու պայմանաժամն այն է Յունուարի 11. տէր Յովսէփը բանակցութիւնների ընթացքից նկատում էր, որ ժառանգների միջնորդներն անկեղծ չեն, նա համոզեց կտակակատար Սահակեանին պատրաստուել և բողոքը նշանակեալ ժամանակին տալ առանց դադարեցնելու բանակցութիւնները:

*) Արձանագրութեան վերայ ստորագրել են ազատ պօլիովնիկ Յովհաննէս Տիգրանեանց, պօտպօրուչիկ Սիրական Գորոյեանց, կապ տան Թադէոս Տիգրանեանց, գուբերնսկի սեկրետար Ա. Վարդապետրիկեանց. Պետրոս Զիթողցեանց, Յակոբ Մատակեանց, Բազդասար Դրամբեանց, մահտ. Համբար մահտ. Մանուկով, Գրիգոր Սիմոնով, Յակոբ Ազուլեանց, Ստեփան Բազրամեանց, Մկրտիչ Արարաշեանց, Յովհ. Սահրատեանց, Յարութիւն Վանցեան, Մարգար Խալաթեանց, Մահտ. Նիկողայոս Դրամբեանց, Պետրոս Քելչիլեան, Օնտնէս Կառանեանց, Յարութիւն Միրաբեանց, Ա. Յովհաննիսեանց, Մկրտիչ Կոստանեանց, Յովհաննէս Ղարաբոզեանց, Գրիգոր Վերիլեանց, Գէորգ Մկրտումեանց, Գրիգոր Զալալեանց, Յակոբ Ղասարեանց Աւետիք Նալեանց, Գէորգ Խոյեցեան, Ազարաթ Խոջայեանց, Մկրտիչ Քանդարեանց:

Այդպէս էլ եղաւ: 1873 Յունուարի 10 ին տէր Յովսէփն իբրև երրորդ անձն և կտակահատարներն իբրև պալատի վճռից անբաւական կողմ իրենց բողոքները սէնատի վճռաբեկ բաժանմունքի անունով ներկայացուցին պալատին, պահպանելով օրէնքի պահանջած բոլոր պայմանները:

Այնուհետև Յունուարի 27 ին տէր Յովսէփն հաղորդում է իւր որդուն, որ բանակցութիւններն արդիւնք չունեցան և արդէն դադարել են:

Ը.

Տագնապալից օրեր

Երբ երրորդ անձի բողոքը պալատ մտաւ, գործն համարւում էր ապահով ճանապարհի վերայ: Սակայն 1873 Յունուարի 10 ից մինչև 1874 Փետրուարի 27, երբ սէնատը դրեց իւր բաւարար վճիռը, Արդութեան օրիորդական դպրոցի և մանաւանդ տէր Յովսէփի համար, որ սրտին շատ մօտիկ էր առել այդ գործը, տագնապալից ծանր օրեր էին: Անհանգիստ լինելու պատճառներ միշտ էլ հանդիպում էին, և բոլոր ժամանակն անցնում էր միմիայն մաքառման ու յուզմունքների մէջ:

Հակառակ կողմի միջնորդների և փաստաբանների աչքին երրորդ անձի միջամտութիւնը լուրջ և վտանգաւոր իրողութիւն էր: Թուի թէ նոքա էլ համոզուած էին, որ նորա բողոքը կ'ունենայ յաջողութիւն: Հաշտութեան առարկան նոքա մէջ բերին իբրև ծուղակ նոցա նպատակն էր տէր Յովսէփին զբաղեցնել, խաբել և ժամանակ չտալ բողոքը ներկայացնելու, և յոյս ունէին, որ եթէ այդ իրենց չյաջողի, գոնէ նորան որ և է մի սխալ գործել տալով գործը կըխճճեն: Բայց տէր Յովսէփի աշարջութիւնն յազթեց նոցա: Այն ժամանակ նոքա իրենց միտքը կեդրոնացուցին կտակահատարների վերայ և ոչ մի առիթ չէին փախցնում նոցա գոնէ մոլորեցնելու և զիջողութեան ստիպելու:

Նախ և յառաջ նոքա, այդ հակառակորդները, հետամուտ եղան մայրաքաղաքի մամուլի միջոցով մտքերը մոլորեցնել Արդ. օրիորդական դպրոցի գոյութեան մասին: Դեռ 1872 Հոկտեմբերին (տ. С. Петербург. Вѣдом. № 281) ոմն Պ. Кирикин-ի թիֆլիսից գրուած թղթակցութեան մէջ պալատի վճիռն հռչակեց իբրև իշխան Ղահրամանի իսկական ցանկութեան հակառակ գործողութիւն. նա, ի միջի այլոց, գրում է. «փաստաբաններից ամենաճարպիկները, Պրօկօպէնկօ և Բէնկէնդօրֆ, հանդէս եկան

կորզելու 40 հազար ռուբլին ժողովրդական կրթութեան գործից և պալատը հնարաւոր չհամարեց մերժել նոցա պահանջը, և մերժել զէթ ժողովրդական կրթութեան շահերի անունով, որոնք մեծ եռանդով և հիմնաւորապէս պաշտպանում էր Եակուլեանը»: Իւր այս խօսքերին աւելի ոյժ տալու համար նոյն թղթակիցն յարակցում է թէ ռուսումնարանն արդէն մօտ երկու տարի է գոյութիւն ունի և, ասում են, լաւ յառաջ է գնում: Ի՞նչ կըլինի այժմ նորա վիճակը»: Համակրական ոգեով գրուած՝ այս թղթակցութեան վերջում հաղորդում է իբրև լուր և այն թէ՛ իբր Արդութեանի ժառանգները կամենում են 40 հազար ռուբլին տանել ոչ իրենց անձնական օգտի համար, այլ որպէսզի նորանով մի այնպիսի ռուսումնարան հաստատեն, որն աւելի համապատասխան լինէր հանգուցեալ կտակաւանդօղի ցանկութեանը: Այս լուրը ժառանգներն արդարև տարածում էին երրորդ անձի և կտակահատարների ջանքերը ջլատելու և բարձր ռուսումնարանական վարչութեան աջակցութիւնը զբաւելու նպատակով: Գործի մէջ սակայն ոչ մի հաւաստի ցուցմունք չկայ, որ ժառանգներն երբ և իցէ այդպիսի բարի խորհուրդ ունեցած և զորա համար որ և է մի քայլ արած լինէին:

Այս թղթակցութիւնից յետոյ նոյն թերթում (տ. 1873 № 9) մի ուրիշը կարեկցաբար գրում է թէ Բէնկէնդօրֆին յաջողեցաւ տանել գործն, և այն դպրոցը, որ ամէն տարի իւր մէջ պատըսպարում էր եօթանասունից աւելի աղջիկներ, պէտք է խափանուի: Մ. Բէնկէնդօրֆ այս թղթակցութիւններին պատասխանելու դուրս է գալիս 1873 Փետրուարի 20 ին (տ. С. Петерб. Вѣдом. № 73). նա պնդում է, որ Արդ. օրիորդական դպրոցը գոյութիւն չունի. իբրև ապացոյց բերում է դատ. պալատի Սեպտ. 11 ի վճիռը. միևնոյն ժամանակ ասում է, որ այն ռուսումնարանը, որ գոյութիւն ունի, բոլորովին համապատասխան չէ հանգուցեալ իշխանի վերջին կամքին, և մեղադրում է կտակահատարներին, որ փոխանակ կտակեալ գումարը հանգուցեալի կամքին համաձայն պրիկագում պահ տալու, ապօրինի կերպով գործ են դրել ռուսումնարանի վերայ: Բէնկէնդօրֆին պատասխանելով, տէր Յովսէփը փութաց գրել նոյն թերթին յանձնելու համար հերքումն, որի մէջ յայտարարում է թէ երրորդ անձի միջամտութեամբ գործը քննուելու է Սէնատում. և յայտնի կըլինի այն բազմաթիւ փաստերը, որոնցով հաստատում է թէ իշխ. Ղահրաման իւր կենդանութեան ժամանակ անձամբ ձեռնարկել և հոգացել է ռուսումնարանի շինութեան մասին: Ոչ Սամարսկին և ոչ մայրաքաղաքի բանիմաց բարեկամները խորհուրդ չտուին այդպիսի հերքումն

հրատարակութեան տալ, որպէսզի հակառակորդները ձեռքը նոր գէնք չտրուի դիմելու աւելի վտանգաւոր միջոցների: Այդ մտքով և հաղորդուեցաւ տէր Յովսէփին ստանութեամբ սպասել գործի կանոնաւոր վախճանին:

Մամուլի մէջ յերևան եկած դեր և դէմ այս կարծիքներն յիշուեցան՝ ընթերցողին ցոյց տալու համար, թէ ինչպէս Արդ. կտակի 11րդ յօդուածի հակառակորդներն հետամուտ էին մոլորեցնելու հասարակական կարծիքն և այդ ճանապարհով ազդելու կտակակատարները վերայ:

Հակառակորդները վերջապէս իրենց նպատակին հասնելու համար դիմեցին աւելի գործնական միջոցների: Իրենց ձեռին ունենալով պալատի Սեպտ. 11ի վճիռը նորա խնդիր ներկայացուցին նահանգական դատարան և պահանջեցին, որ իրենց յանձնուի այն 20 հազար ուրբլին, որն իբրև կանխիկ գումար յառկացած էր դպրոցին: Նոցա այդ պահանջին բաւարարութիւն տալու համար նահ. դատարանն 1873 Մարտի 19ին ծանուցագիր ուղարկեց կտակակատարներին: Այսպէս յառաջ եկաւ նոր տագնապ:

Այդ ժամանակ տէր Յովսէփն արդէն հեռացած էր Թիֆլիսից: Դեռ Յունուարի 18ին նա հեռագիր ստացաւ Ս. Էջմիածնից, որ եթէ գործերն աւարտել է, վերադառնայ տուն, նախապէս հանգիւղելով Էջմիածին, իսկ Յունուարի 28ին Սուքիաս վարդապետն Ալէքսանդրապոլից հեռագրում է նորան Թիֆլիս, որ իրենից այլևս նամակ չսպասէ, և խորհուրդ էր տալիս ս. Էջմիածին գալուց յառաջ մտնել Աղէքսանդրապոլ: Տէր Յովսէփը կաթողիկոսի հրամանին հետևելով, Թիֆլիսից ուղղակի Ս. Էջմիածին գնաց, որտեղից Փետրուարի կէսերին հազիւ կարողացաւ վերադառնալ տուն հինգ ամիս շարունակ բացակայ քնալուց յետոյ: Այստեղ նա Մարտի սկզբներին ստացաւ կտակակատար Սահակեանից նամակ, որով նա հաղորդում էր, թէ պալատից բողոքութեամբ: Միևնոյն ժամանակ նա գրում է, որ ինքը որոշել է Ապրանալ իրեն հետ, որպէսզի միասին ընդհանուր ուժերով աշխատեն գործին արագ ընթացք տալու: Սահակեանն այս էլ է հաղորդում, որ մօտ օրերս տեսնուելու է Մակար արքեպիսկոպոսի հետ և խնդրելու է նորան, զր միջնորդ լինի կաթողիկոսի առաջ հրամայելու տէր Յովսէփին գնալ Ս. Պետերբուրգ: «Զէ՛ դր գատարանի այս վերջին կէտից (այսինքն սէնատից է կախուած մեր գործի սկիզբն ու վախճանը, գրում է նա, յետոյ ամէն ջանք

կարող է ապարդիւն լինել. ուրիշների վերայ յոյս դնելով կարող ենք մենք յետոյ զղջալ. այդ էլ այն ժամանակ շատ ուշ կըլինի»:

Սահակեանի այս նամակը դարձեալ շփոթութեան մէջ ձգեց տէր Յովսէփին. Ս. Պետերբուրգ գնալու հարցը նորից յառաջ եկաւ. սակայն մինչև նորա որոշուելն հրապարակ ելաւ ժառանգների պահանջը 26 հազար ուրբլին իրենց յանձնելու:

Սահակեանը Մարտի 26ին հաղորդելով տէր Յովսէփին, որ նահ. դատարանի ծանուցագիրը Մարտի 19ին ստացել է և կ'աշխատի պատասխանը ձգձգել, դարձեալ խնդրում է նորան համաձայնել իրեն հետ միասին Ս. Պետերբուրգ գնալու, յայտնելով միանգամայն, որ ինքն արդէն Մակար արքեպիսկոպոսին խնդրել է այդ մասին միջնորդել կաթողիկոսին և նա խոստացել է գրել: Շուտով տէր Յովսէփն արդարև ստացաւ նամակ Սենատի ատենադպիր Սուքիաս Թաղիանոսեանից, որը Մարտի 30ին վեհ. կաթողիկոսի յանձնարարութեամբ ուղարկում է Մակար արքեպիսկոպոսի գրութեան պատճէնն և գրում էր.

«Ըստ պատուիրանի վեհափառ կաթողիկոսի առաքեմ ի տեղեկութիւն զյայտարարական գիր սրբազան Մակար արհուոյն. ճիգնթափ աշխատութեանց պէտք են, զի վճիռ պալատանն յայսպիսի գործս է գրեթէ վախճանական»:

Իսկ Մակար արքեպիսկոպոսը, Մարտի 26 թ. 45 գրութեամբ հաղորդելով կաթողիկոսին ժառանգների պահանջի մասին, ներկայացնում է նորան և կտակակատար Սահակեանի խնդիրը մի պատգամաւոր նշանակելու՝ կամ տէր Յովսէփին կամ մի այլ ընդունակ անձի, որպէսզի նորա հետ միասին Ս. Պետերբուրգ գնայ «առ ի ջանալ գործակցութեամբ իրերաց ամել ի կատար զվերջին կամս հանգուցեալ Ղահրամանի Արղութեանց»:

Ս. Պետերբուրգ մարդ ուղարկելու խնդիրն արդէն վաղուց անխորհուրդ էր ճանաչուել, քանի որ մայրաքաղաքում աշխատող մարդիկ կային: Այս անգամ հարցի լուծումն աւելի դժուարացաւ, աչքի առաջ ունենալով այն ծախքերը, որոնք պահանջուում էին մի այդպիսի անորոշ ճանապարհորդութեան համար: Դեռ այն ժամանակ, երբ պէտք էր ստանալ 200 ուրբլի Սամարսկուն վճարելու համար, Սուքիաս վարդապետն հազիւ կարողացաւ հայթայթել այդ գումարն, այն էլ տէր Յովսէփի բազմադիմի գրութիւններից յետոյ: Պահուած է տէր Յովսէփի այն գրութեան սևագիրը, որ ուղղել է Աղէքսանդրապոլու զէպուտատներին. այդտեղ նա յայտնում է իւր դրամական անձկութեան մասին և խնդրում է պատրաստել տալ յիշեալ երկու հարիւր ուրբլին և նկատի ունենալ, որ վճարուելու է փաստարանին այլ ևս հինգ հա-

բիւր ուրբի, և իրեն համար էլ Թիֆլիսում նկատի կան անհրա-
 ժեշտ ծախքեր, որոնք նա առայժմ պարտքով է հոգում: Դրա-
 մական նեղութեան այս պայմաններն աչքի առաջ ունենալով, որ
 փորձով տեսել էր, տէր Յովսէփին ինքն էլ զգուշանում էր իւր վե-
 րայառնել ձանապարհորդութեան ծանր պատասխանատուութիւնն
 առանց ծայրագոյն իշխանութեան կամ հասարակութեան տնօրի-
 նութեան: Ոչ այն և ոչ այս չարին սակայն այդպիսի տնօրինութիւն:
 Ս. Պետերբուրգ գնալու կամ մարդ ուղարկելու մտքից հրաժա-
 րուելով, տէր Յովսէփին ի վերջոյ ձակատ առ ձակատ զալով 26
 հազար ուրբի վճարելու վտանգին, կտակակատար Սահակեանի
 հետ համաձայնեցան գործը ձգձգելու համար դիմել հետևեալ մի-
 ջոցներին: Նախ որ կտակակատարները, պատասխանելով նահան-
 գական դատարանի ծանուցադրին, Ապրիլի 19 յայտարարեցին
 թէ 26 հազար ուրբի արդէն իւր ժամանակին կտակի 11 յօդ-
 ուածն ի կատար ածելու համար վճարուած է Արդ. օր. դպրոցի
 հոգաբարձութեանն, ինչպէս և վճարուած են զանազան ան-
 ձինքներին կտակի այլ յօդուածներով որոշուած այլ և այլ գու-
 մարները: Եւ երկրորդ որ Արդ. օր. դպրոցի հոգաբարձութիւնն
 ինքն ևս իւր կողմից միջամտեց գործին, որպէսզի կարողանայ
 յետ մղել 26 հազարի վճարման խնդիրը մինչև սէնատի վճիռ
 դնելը: Այդպիսի միջամտութեան համար փաստաբաններն յառաջ
 կարծիք յայտնել էին Թիֆլիսում. դեռ 1873 Յունուարի 7ին տո-
 դերիս գրողն ստացաւ տէր Յովսէփից հետևեալ հեռագիրը.

«Սորհուրդ են տալիս միաժամանակ ներկայացնել խնդիր
 դպրոցի հոգաբարձութեան կողմից, բացատրելով դպրոցական իրո-
 դութիւնները. անենք այժմ թէ թողնենք յետոյ, այն ժամանակն
 իրաւունքը չի կորչիր»:

Աչքի առաջ ունենալով, որ Սամարսկին այն ժամանակ բա-
 ցակայ էր Ս. Պետերբուրգից և Յունուարի 11 շատ մօտ էր, տո-
 դերիս գրողը Եգեանի հետ խորհրդակցելուց յետոյ նոյն իսկ օրն
 այդ հեռագրին պատասխան տուեց իւր հօրն այսպէս.

«Հարցմունքը պարզ չէ. կարծեմ հոգաբարձութիւնն հիմք
 չունի միջամտելու. նորան փոխարինող հոգևոր իշխանութիւնն
 արդէն գործում է նորա տեղ»:

Ապա տէր Յովսէփը նամակներով բացատրեց Թիֆլիսի
 փաստաբանների կարծիքներն և ուղարկեց Սամարսկուն ցոյց
 տալու համար այն խնդրագրի սևը, որ պատրաստուած էր հո-
 գաբարձուների բերանից. Սամարսկին հաւանութիւն տուեց.
 այդ մասին մարտի 6ին հեռագրուեցաւ տէր Յովսէփին Աղէք-
 սանդրապօլ հետևեալը.

«Հոգաբարձութեան խնդիրքը խորհուրդ են տալիս անմի-
 ջապէս ներկայացնել, ոչ մի փոփոխութիւն պէտք չէ: Բողոքնե-
 րը դեռ չեն հասել Սէնատ»:

Մարտի 8ին այս հեռագրի բացատրութեան համար գրուե-
 ցաւ տէր Յովսէփին և հետևեալը.

«Նախընթաց նամակներովս քեզ խոստացել էի հոգաբար-
 ձութեան կողմից խնդիր տալու հարցի մասին շուտով գրել,
 բայց շուտովը բաւական ժամանակ քաշեց իմ կողմից շատ ակա-
 մայօրէն: Արկածը խնդրագրի օրինակը մի առանձին նամակով
 ղրկեցինք Սամարսկուն, որ կարդայ և մտածէ, և յետոյ կամ
 մեզ նամակով իմաց տայ, կամ երբ մօտը գալու լինէինք, պատ-
 րաստուած լինի անմիջապէս պատասխանելու: Մարդը նամակն
 իւր մօտ պահեց մի շաբաթի չափ, բայց դեռ պատասխան չկար-
 վերջապէս երեքշաբթի (իմն Մարտի 6ին) գնացի մօտը և բե-
 րանացի պատասխան ընդունեցի, որն և հեռագրեցի քեզ: Այդ
 հարցի մանրամասնութիւնքը առանձին հետաքրքրութիւն չեն
 շարժում. նա սասաւ, որ խնդրագիրը շատ լաւ պատրաստուած է
 և փոփոխութեան կամ նկատողութիւններ անելու կարօտութիւն
 չունի, միայն մի նկատողութիւն արաւ, թէ խնդրատու-
 թեան պայմանաժամի սկիզբը, որ հաշուում է խնդրագրի մէջ
 այն օրից, երբ հոգաբարձուք տեղեկացել են գործի մասին կոն-
 սիստորիայի հաւատարմացեալի խնդրատուութեան օրից, այդ
 գուցէ չընդունուի. այնուամենայնիւ, նա սասաւ, որ այսպէս թէ
 այնպէս խնդիր տալը օրինաւոր է և ոչ մի ֆլաս չէ տալու, եթէ
 չընդունուի էլ, այն ինչ եթէ ընդունուի, կարող է նշանակու-
 թիւն ունենալ հոգևոր իշխանութեան բողոքի հետ մէկ տեղ՝ որ-
 քան շատ օրինաւոր բողոքարկուներ լինեն, այնքան մեծ կը լինի,
 սասաւ, Սենատի ուշադրութիւնը դէպի սուդ. պալատի վճիռը,
 միով բանիւ նա խնդիր տալուն համաձայն էր. ուրեմն դուք կա-
 րող էք միամտօրէն ձեռնամուխ լինել օր առաջ խնդիրը տա-
 լուն...»:

Այս նամակից յետոյ հոգաբարձութեան խնդիրն երկու հո-
 գաբարձութիւնների, Անանիկեան Կարապետի և Բաբայեան Յր-
 հաննէսի, ստորագրութեամբ օրինական կերպով պատրաստուած
 թղթերի հետ միասին ներկայացոււմ է դատ. պալատին 1873
 Մարտի 28ին:

Պալատն Յունիսի 20ին այդ խնդիրն՝ առանց ընթացք տա-
 լու՝ վերադարձուց, պատճառաբանելով թէ նախ՝ ժամանակն ան-
 ցուցել են, և երկրորդ՝ չեն կարող ապացուցանել, որ ժամանակին
 չեն իմացել պալատի 1872 Սեպ. 11ի վճիռը:

Իսկ այն բացատրական գիրը, որ կտակահատարները Ապրիլի 19-ին ներկայացուցին Թիֆլ. նահանգական դատարանին այն հետևանքն ունեցաւ, որ նոյն դատարանն Մայիսի 15-ին ծանուցագիր ուղարկեց Արդ. օր. դպրոցի հոգաբարձուներին, որոնց մէջ և Տէր-Յովսէփին հրաւիրեց դատաստանական նիստին, որ նշանակուած էր Յուլիսի 19-ին Արդութեան ժառանգների բողոքին համաձայն, այդ ծանուցագիրը Տէր-Յովսէփին յանձնուեցաւ Յուլիսի 3-ին:

Այդ ևս մի խոշոր տագնապ էր: Երբ հոգաբարձութիւնը դատի էր կանչուում, պարզ էր, որ պիտի պատրաստուած լինէր պաշտպանուելու, սակայն ինչպէս պաշտպանուէր: Հաւանական էր, որ 26 հազար սուբլին պիտի ստիպուէր յետ տալ:

Այդ ժամանակ կտակահատար Սահակեանցը գնացել էր Ս. Պետրբուրգ, ուր նա, իհարկէ, ոչինչ էլ չը կարողացաւ հոգալ: Մայիսի 5-ին, երբ տողերի գրողը Սէնատուսն էր և տեղեկացաւ, որ բողոքները դեռ մնում են դիւանատանը և յանձնուած չեն Սէնատորին, Սահակեանցն էլ այնտեղ է եղել և նոյն տեղեկութիւնն է ստացել: Երբ նա յետոյ տողերի գրողի հետ տեսնուեցաւ, միջոց ունեցաւ նորա առաջնորդութեամբ ծանօթանալ Եղեանցի հետ և խնդրել նորան իրեն աջակցելու: Սահակեանցի Ս. Պետրբուրգ գալը նորա համար մէկ այն օգուտն ունեցաւ, որ համոզուեցաւ թէ իւր ներկայութիւնն անհրաժեշտ չէ և մէկ էլ որ անձամբ գտաւ մի լաւ փաստարան իւր դատը պաշտպանելու, այդ էր ինչպէս վերը յիշեցինք, Ս. Պետրբուրգի երևելի իրաւաբաններից մէկը, Գէրարդ, որ նոյնպէս Եղեանցին բարեկամ մարդ էր:

Իւր վերադարձին Սահակեանցը Յուլիսի 19-ին գրում է Տէր-Յովսէփին:

«Ամսիս 3-ին յաջող վերադարձայ Պետրբուրգից. շտապում եմ հաղորդել Ձեզ, որ մեր գործը տակաւին չէ ղեկուցուած և ինչպէս ինձ այստեղ ասացին, դեռ շուտ ղեկուցուելու չէ, որովհետև այն սէնատորը, որ պէտք է ղեկուցանէ մեր գործը մինչև Յուլիսի 15-ին արձակուրդ է տուել: Իսկ ապագայ յաջողութեան մասին այնտեղ ինձ յոյսեր տուին... Ձեր որդին ինձ ծանօթացուց Եղեանցի հետ, որին ևս անձամբ խնդրեցի հսկողութիւն գործել մեր փաստաբանների գործողութիւնների վերայ և նա այնքան սիրալիր էր, որ խոստացաւ հետևել ամեն բանին...» Միևնոյն ժամանակ Սահակեանցն հաղորդում է, որ հակառակորդների բողոքին համաձայն նիստ է նշանակուած Թիֆ. նահ. դատարանում Յուլ. 24-ին, «այդ մասին հաւանական է, որ Ձեզ էլ

է ուղարկած ծանուցագիր և իմ բացատրութեան պատճէնը» գրում է նա, և յոյս ունի, որ եթէ ծանուցագիրը ժամանակին չհասնի Տէր-Յովսէփի ձեռը, նիստը կը յետաձգուի: Սորանից յետոյ Սահակեանցն Յուլ. 9-ին գրում է տէր Յովսէփին. «Ես Ձեր նամակն ստացայ և նորան համաձայն խօսեցայ Եակոբեանի հետ այն պատասխանի մասին, որ պէտք է տալ նահ. դատարանի ծանուցագրի հանդէպ: Նա կարծում է, որ աւելի լաւ է մատնացոյց լինել այն բանի վերայ, ինչոր դուք էլ կարծում էք, այսինքն որովհետև դատ. պալատի վճիռը արուել է առանց Ձեր մասնակցութեան և դուք նորա դէմ բողոքել էք, ուստի խնդրում էք դար տալ գործին մինչև որ այդ Ձեր բողոքը Սէնատում քննուի. միևնոյն ժամանակ Եակոբեանը կարծում է, որ յամենայն դէպս լաւ կը լինի եթէ Ձեր կողմից մէկը ներկայ լինի նահ. դատարանում գործի քննութեան պահուն, հակառակ դէպքում, ասում է, կարող են Ձեր բացատրութիւնը չընդունել»:

Բացի այս կարծիքներից, որ Սահակեանցի միջոցով յայտնի եղան Տէր-Յովսէփին, վերջինս դիմեց նաև Ս. Պետրբուրգ փաստաբանների կարծիքն իմանալու: Սամարսկին այն ամառ արտասահման էր գնացել նորա գործերը վարում էր օգնականը, Զուբարեվ, որ բնակում էր Պաւլովսկում, տողերիս գրողը թէ նորան և թէ Գերարդին դիմեց Եղեանցի միջոցով և նոցա պատասխաններն առնելով Յուլիսի 4-ին հեռագրեց Տէր-Յովսէփին հետևելով:

«Օրինական հիմքեր չկան դադարեցնելու վճուի կատարումը. միմիայն ձգձգումներով կարելի է վաստակել ժամանակ, աշխատեցէք տալ որևէ մի պատասխան»:

Ապա նոյն իսկ օրը նամակով բացատրուեցաւ և հեռագրի միտքն այսպէս.

«Օրիորդական դպրոցի գործի վերաբերութեամբ ուզածդ տեղեկութեան համար՝ փողերը տալ թէ չտալ, գրում է որդին հօրը, շատ դէս ու դէն վազվտեցի, ոչ մի տեղ էլ մի յուսալի ճանապարհ ցոյց տուող չեղաւ, քու գրածներդ էլ մի փոքր մոլթըն էին. բոլորը (բաւական հմուտ փաստաբաններից) ասում են, որ օկր. սուգն իրաւունք ունի պալատի վճիռը գործ դնելու և դրա դէմ ոչինչ գործ դնել չէ կարելի. միայն աշխատելու է մի նոր գրագրութեան անիթ գտնել և բանը յետաձգել տալ մինչև որ այստեղ էլ գործը սկսուի և վերջանայ»:

Այս ամենին հաւաստի լինելով, Տէր-Յովսէփին հոգաբարձութեան կողմից Յուլիսի 15-ին մի բացատրական գիր ուղարկեց նահ. դատարան և մի քանի յարգելի պատճառներ ներկայացնե-

լով խնդրեց հոգարձութեան ազատ համարել պատասխանատու-
թիւնից, իսկ եթէ անհնարին է յարգել այդ խնդիրն, այն դէպ-
քում պահանջն ուղղել այն անձին, որին վեհ. կաթողիկոսը կը-
ճանաչէ իբրև իւր կողմից լիազօրութիւն ստացած հաւատար-
մատար:

Ամառն անցաւ. հասաւ Օգոստոս ամիսը. յայտնի եղաւ, որ
սէնատոր Տալիվիստը, որին յանձնուած էր զեկուցանելու եր-
րորդ անձի և կտակակատարների բողոքներին, արդէն վերադար-
ձել է ամարային արձակուրդից. կասկած կար, որ գուցէ շուտով
կըլինի զեկուցումը. մինչդեռ մեր փաստաբան Սամարսկին դեռ
արտասահմանից վերադարձել չէր: Սէնատի դիւանատանն այն
ժամանակ ծառայում էր պատկառելի ծերունի Սուլթանշահեանը,
Սիմէօն Գրիգորեան, որ իւր պատրաստականութիւնն յայտնել
էր օգտակար լինելու մեր գործին, ինչով կարող է. Տէր-Յովսէ-
փի միջոցով խնդրուեցաւ Տ. Գէորգ Դ. կաթողիկոսից օրհնու-
թեան կոնդակ նորա անունով. այդ կոնդակը ջերմեռանդ ծերու-
նուն խրախուսեց և մխիթարեց, ուստի և սիրայօժար օգնում էր
մեզ կարևոր դէպքերում. նա մեզ հաղորդեց, որ Տալիվիստը պատ-
րաստում է գործը զեկուցանել, հարկ եղաւ դիմել Սամարսկու
օգնական, երդուեալ հաւատարմատար Զուբարեօվին, որ Տալի-
վիստին մօտիկ մարդ էր, որ խօսի նորա հետ այդ մասին. Զու-
բարեվ Օգոստոսի 10ին նամակով հաղորդում է Սուլթանշահին,
որ Տալիվիստն իրեն խոստացել է չզեկուցանել գործը մինչև Սա-
մարսկու վերադարձը: Որքան և անախորժ էր յետաձգել տալն,
այնուամենայնիւ այդ աւելի լաւ էր համարում քան Սամարս-
կու բացակայութեամբ գործի քննութիւնը:

Թէ ինչպիսի ազդեցութեամբ նաև. դատարանի հետամտու-
թիւնն առժամանակ կանգ առաւ, յայտնի չէ. 1873 աշնանն այլ
ևս ոչ մի շարժում տեղի չունեցաւ, այդպիսի դրութիւնն էլ մա-
սամբ, յուզմունք էր պատճառում, բայց մենք աւելի ուրախ է-
ինք, որ մեզ ձեռ տուող չկայ: Տէր Յովսէփի և հոգաբարձու-
թիւնների յուզմունքներն Աղէքսանդրապօլում շուտ շուտ արտա-
տողերիս գրողին, որպէսզի փաստաբանին արթնութեան մէջ
պահենք և գործի նշանակելու համար ժամանակին հաղորդենք:
Սեպտեմբեր ամսից սկսած թէ այդ նամակների ազդեցութեան
տակ և թէ ինքնաբերաբար տողերիս գրողն իւր անձնական հան-
դատութիւնը կորցրել էր, պատուի և ինքնասիրութեան խնդիր էր
դառել նորա համար այդ գործի նկատմամբ իւրայիններին բա-
ւականութիւն պատճառելն, և այդ գլխաւորապէս նորա համար,

որ մասամբ Պետերբուրգի բարեկամներն եղան պատճառ, որ յա-
տուկ մարդ չեկաւ գործին հետեւելու և այդ այն հաշուով իբր թէ
մենք կը հոգանք: Առօրեայ հոգսերիցս մէկն էր կամ Սէնատ զը-
նալ կամ Судебный Вѣстникъ գնել, կամ փաստաբանի մօտ գնալ,
որպէսզի իմանամ թէ, նիստ նշանակում է թէ ոչ. փաստաբանի
մօտ գնալն ամենից շատ էր ժամանակ խլում, Гороховая 48 փո-
ղոցից գնալ Миллионная 24, ուր բնակում էր Սամարսկին, այն
էլ առաւօտեան 9 ժամին Ս. Պետերբուրգում, և նորա յաճախորդ-
ների շարքի մէջ աշխատել գէթ առաջինների թւում լինել, բա-
ւական ապարդիւն հոգս էր, բայց պէտք էր այդ հոգսն առնել, ո-
րովհետև մի անգամ առիթ ունեցած էի հաւաստի լինելու, որ
Սամարսկին չափազանց զբաղուած լինելով, երբեմն սխալ տեղե-
կութիւններով էր առաջնորդում. այսպէս դեռ Մարտ ամսին,
տողերիս գրողն ուզեց Սամարսկուց իմանալ թէ Սէնատը մեր բո-
ղոքներն ստացել է թէ ոչ, նա ինձ ասաց, որ տակաւին ստաց-
ցուած չէ, միայնութեամբ հաւատ ընծայեցի նորան, հետեւեալ
օրը սակայն մտայ Սէնատ և հաւաստի եղայ, որ մեր բողոքն
արդէն մի քանի օր յառաջ մտել է Սէնատի դիւանատունը,
միւս օրն աճապարեցի Սամարսկուն տեսնելու և յայտնեցի իմ տե-
ղեկութիւնս. նա զարմացաւ, որ հերթապահ աստիճանաւորն ի-
րեն սխալ տեղեկութիւն էր տուած եղել, այդ ժամանակից նա
ինձ խնդրեց շաբաթը մի անգամ մտնել Սէնատ և իմանալ թէ
երբ է նշանակուած գործը: Այդ դէպքն և ինձ միշտ կասկածի
մէջ էր պահում, ուստի թէ Судебный Вѣстникъ էին նայում, ուր
որոշ բաժանմունք կար նշանակած գործերի համար, թէ Սէնատ
էի մտնում և թէ իրեն Սամարսկու մօտ, որին յաճախ պէտք էր
լինում կամ մի թուղթ տալ կարգալու կամ մի կարծիք հարցնել
և կամ մի որևէ հրահանգ իմանալ*): Սօսը չկայ որ Աղէքսանդրա-
պօլ տէր Յովսէփին և միւսներին հանգստացնելու համար ամեն
անգամ պէտք էր նամակներ գրել, յաճախ պատահում էր և հե-
ռագրով պատասխան տալ հարցմունքներին:

Պէտք է ասել, որ Ս. Պետերբուրգում Արդութեան կտակի
գործը Հայերի շրջանում մեծ հետաքրքրութեան առարկայ էր դա-
ռել, բոլորն էլ անհամբեր սպասում էին վախճանի և կարեկ-
ցում էին, կարծես մի մեծ ազգային խնդիր էր ամենքի համար
այն թէ Աղէքսանդրապօլու օրիորդների կրթութեան գործը պի-
տի շարունակուի թէ կանգ առնի: Առանձին մի փոխադարձ հա-

*) Աշնանից սկսած Սամարսկու մօտ յաճախել եմ Սեպտ. 17 ին, Հոկտ. 5
14 և 30 ին, Նոյեմբերին 2 անգամ, Դեկտ. 18ին, Յուն. 8 ին, 22 ին, 23 ին և 24 ին:

մերաշխութիւն այդ խնդրի շուրջը բոլորին կապել էր իրար հետ: Եւ այդ մեծ խրատոյս էր սրտով աշխատելու, որ գործն յաջող ելք ունենայ: Վերջապէս Յունուարի 22 ին 1874 Судебный Вѣстник ք ձեռքիս շտապեցի Սամարսկու մօտ: Եզեանցը խորհուրդ տուեց աշխատել այդ անգամ Սամարսկու յաճախորդների մէջ վերջինը լինել, որպէսզի ժամանակ լինի նրա հետ աւելի երկար խօսելու: Դժբաղդարար ես հինգերորդն էի, ինձանից յետոյ եկան այլ ևս վեց հոգի, երբ հերթն ինձ հասաւ, ես թոյլ տուի մըտնել բոլորին: Երբ ես մտայ, Սամարսկին, թէ և յոգնած, մի առանձին բաւականութեամբ շնորհաւորեց, որ մեր գործը նշանակում է Փետր. 27 ին, իբրև պատասխան ևս ցոյց տուի Судебн. Вѣстник և ցաւ յայտնեցի, որ դեռ մինչև մի ամիս էլ պիտի սպասենք. նա ասաց, որ ինքն ապահով է, որ գործն յաջող կը վերջանայ, և պատուիրեց ինձ, որ հետեւեալ օրն իւր մօտ տանեմ բոլոր պատճէնները, որոնք ինձ մօտ պահուում էին: Երկու օր ևս իրար վրայ Սամարսկուն այցելելուց յետոյ մինչև Փետր 27 այլ ևս ազատ էինք տալնապններից և սպասում էինք գործի վախճանին:

Թ.

Սէնասի նիսք

Փետրուարի 27 ին տեղի ունեցաւ կառավարիչ Սէնասի քաղաքային վճռարեկ բաժանման նիստը, նախագահում էր սէնատոր Տօրնաու, զեկուցանում էր սէնատոր Տալկուխտ և եզրակացութիւն տուեց օրէր պրօկուրոր Կնիրիմ:

Ս. Պետերբուրգի և այն ուռն հասարակութիւնից ժողովուել էին դահլիճում բաւական շատ այցելուներ, որոնց ուսանողները հետ միասին կազմում էին պատկառելի բազմութիւն: Այնտեղ էին շատերի կարգում Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, Յովսէփ Աստուածատրեան Իգմիրեանց, Կարապետ Յարութիւնեան Եզեանց, Միքայէլ Մեսրոպեան Միանսարեանց, Սիմէօն Գրիգորեան Սուլթանշահ, նորաւարտ ինժէներ Նիկողայոս Ենայեան Սալամբէկեանց և ուրիշները, որոնք բոլորն էլ միշտ ունէին կենդանի հետաքրքրութիւն դէպի Արդ. կտակի և օր. դպրոցի Դատավարութիւնը: Ըշտագրելու համար տողերիս գրօղը վարձել էր յատուկ ստէնօգրաֆ, որն յանձն էր առել 25 սուրբի վարձով արձանագրել ամեն ինչ որ խօսուում էր նիստի ժամանակ բուն գործի մասին: Այդ ստէնօգրաֆիական հաշիւն յետոյ միքանի օրի-

նակ արտագրուեցաւ և ուղարկուեցաւ Աղէքսանդրապօլ Տէր-Յովսէփին: Հետաքրքրուողները կարող են կարդալ այդ և աւելի հանգամանօրէն ծանօթանալ գործին: Մենք յառաջ կը բերենք այստեղ միայն նորա ամփոփ պարունակութիւնը: Երբ նիստը բացուեցաւ, սէնատոր Տալկուխտ մանրամասն հաղորդեց գործի պաշտօնական պատմութիւնն սկզբից մինչև Սէնատ հասնելը, նախ կտակաւատարները և երրորդ անձի բողոքների ծագումն և հիմունքները բացատրեց, պալատի վճռի թերութիւններն ու հակասութիւնները վերլուծեց և ապա կարծիք յայտնեց, որ այդ վրձիւր պէտք է փոխուի ամբողջապէս բոլոր իւր մասերով:

Տալկուխտի զեկուցումից յետոյ նախագահն առաջին խօսքը տուեց Երևանու Հայոց կոնսիստորիայի ներկայացուցիչ երդուեալ հաւատարմատար պրօֆէսսոր Սամարսկի-Բըխովէցին: Սա իւր ճառի մէջ ապացուցանում էր, որ դատաստանական պալատի 1872 Սեպ. 11ին դրած վճռով խախտուել են Երևանու կոնսիստորիայի իրաւունքները, նախ հաստատեց, որ կոնսիստորիան երբէք մասնակցած չէ կղել դատական այդ գործի մէջ ոչ իբրև բողոքաւոր, ոչ իբրև պատասխանատու և ոչ իբրև երրորդ անձն, ուստի և իրաւունք ունի այժմ խնդրելու վճռի բեկումն այն հիման վերայ, որ օրէնքով իրեն յատկացած իրաւունքներն այն վճռով խախտուած են: Աչքի առաջ ունենալով, որ սէնատի քըննութեան առարկայ կարող է լինել միմիայն այն թէ արդարև այն վճռով կոնսիստորիայի իրաւունքները խախտուած են, Սամարսկին յառաջ է բերում օրէնքի XI հատորի 1010 յօդուածը. «ամէն շարժական և անշարժ գոյք, որ թողնուում է հայ Լուսաւորչական դաւանութեան եկեղեցու, վանքի և ուրիշ օրև է աստուածահաճոյ հիմնարկութեան օգտին, օրէնքի տառին և իմաստին համեմատ, ասաց Սամարսկին, ամբողջ հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութիւնն է»: «Որ այս այսպէս է, շարունակեց նա պարզել, այդ հաստատուում է 985 յօդուածի 13, 14 և 15, կէտերով, որոնց մէջ ցոյց է տրւում, թէ այդ եկեղեցու ներկայացուցիչ հայ լուսաւորչական կոնսիստորիան ինչպէս պարտական է պահպանել և պաշտպանել այդ եկեղեցու շահերն, ինչպէս պէտք է վարէ հաշուապահութիւնն և այլն: Սպա ուրեմն այն շարժական գոյքը, ով թողնուած կամ կտակուած է վանքի, եկեղեցու կամ աստուածահաճոյ հիմնարկութեան օգտին, հայ լուսաւորչական եկեղեցու լրութեանն է պատկանում: Ներկայ դէպքում, ասաց Սամարսկին, ինչպէս երևում է իշխան Երկայն արագուկ Արդութեանի կտակից, դրամագլուխը թողնուած է զուտ բարեգործական նպատակ ունեցող ուսումնարանի օգտին, քանի որ

նորա մէջ պիտի դաստիարակուին հայ լուսաւորչական ամենա-
 չքաւոր ընտանիքների աղջիկներ: Ակներև է որ այդ ուսումնա-
 րանը թէ օրէնքի զօրութեամբ և թէ կտակի, պէտք է գտնուի
 այն կոնսիստորիայի անմիջական կառավարութեան ներքոյ, որի
 ներկայացուցիչ հանդիսանում եմ ես, և որ այդ կոնսիստորիան
 պարտական է պահպանել այդ ուսումնարանի շահերը և յամենայն
 դէպս հսկողութիւն ունենալ, որպէսզի այն զրամագլուխը, որ
 նոյն ուսումնարանին յատկացած է, գտնուի իւր իրաւունքի տակ»:

Այս այսպէս պարզելուց յետոյ Սամարսկի հարցը այլ կերպ
 դրեց Սէնատի առաջ: Նա ասաց. «գնանք աւելի հեռու, թոյլ
 տանք որ ինչ ինչ հանգամանքներով կառավարութիւնը անհնա-
 րին համարէր այն ուսումնարանի գոյութիւնն, երբ նա արդէն
 բացուած էր, և պէտք համարէր փակել: Հարց է, թէ ո՞ւր օգտին
 կամ ո՞ւր սեփականութիւն պիտի մնար այդ դէպքում կտակեալ
 զրամագլուխը: Տարակոյս չկայ, որ ուսումնարանի փակուելով
 այն զրամագլուխը կը յատկացուէր հայ լուսաւորչական եկեղեցու
 պէտքերին: Այսպիսով նոյնպիսի օրէնքի զօրութեամբ և նորա
 հրամաններին համեմատ ինձ երևում է, ասաց Սամարսկին, որ
 հանգուցեալ իշխան Երկայնաբազուկ Արղութեանի կտակած զրա-
 մագլուխը հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութիւն է և
 պատկանում է նորան:»

Ապա Սամարսկին յիշեցուց Սէնատին, որ դատաստանական
 հաստատութիւնների պարտականութիւնն է, պաշտպանել օրինա-
 կան հիմնարկութիւնների շահերը: «Եթէ օրէնքն, ասաց նա, հաստա-
 տում է որոշ տեսակի հիմնարկութիւններ և յանձնում է նոցա ո-
 րոշ տեսակի նոյնպէս կառավարչական հաստատութիւնների ինչ-
 պէս է, կոնսիստորիան, ես կարծում եմ, որ դատաստանական իշ-
 խանութիւնը պարտական է պահպանել և պաշտպանել նոցա շա-
 հերը: Որ այդպիսի ուսումնարանները գոյութիւն ունին և բաց-
 ւում են ոչ այլ կերպ բայց եթէ կառավարութեան թոյլտու-
 թեամբ, այդ պարզ է, աւելի ուշ հրատարակուած օրէնքից, այն
 է ընդհանուր զինուորագրութեան կանոնադրութիւնից, որտեղ
 այն ուսումնարանների կարգում, որոնց տրւում են որոշ արտե-
 նութիւններ զինուորագրութեան նկատմամբ, նշանակուած են և
 այն դպրոցները, որոնց մասին այժմ խօսում եմ»:

Սամարսկին գալիս է այն եզրակացութեան, թէ Արղութեան
 իշխանի կտակած գումարն Հայոց եկեղեցու սեփականութիւնն
 է. դատաստանական պալատի խախտելով Հայոց եկեղեցու իրա-
 ւունքը խախտել էր և կոնսիստորիայինը: «Այսպէս ես պնդում
 եմ, ասաց Սամարսկին, որ Երկայնաբազուկ Արղութեան իշխա-

նի կողմից ուսումնարան հիմնելու և պահպանելու համար կտակած
 զրամագլուխն այնպիսի գումար է, որ պատկանում է Հայ Լու-
 սաւորչական եկեղեցու համայն լրութեանը, և ամեն մի վճիռ,
 որով խախտում են նորա իրաւունքները, խախտում է և Հայ
 լուսաւորչական կոնսիստորիայի իրաւունքները»: Այսպիսի նկա-
 տումներով Սամարսկին, ի վերջոյ պաշտպան կանգնելով կոն-
 սիստորիայի բողոքին, խնդրում է, փոխել դատաստանական
 պալատի վճիռն այն մասով, որ վերաբերում էր հայլուսաւորչա-
 կան եկեղեցու իրաւունքին:

Սամարսկուց յետոյ խօսքը տրուեցաւ երդուեալ հաւատար-
 մատար Գէրարդին, որն իբրև ներկայացուցիչ կտակակատարների,
 պաշտպանում էր նոցա բողոքը: Նորա ճառը շօշափում էր աւե-
 լի բարդ իրաւաբանական խնդիրներ, որոնք յարաբերութիւն ու-
 նէին կտակի մի քանի կէտերի հետ: Այն, ինչոր ասաց նա կտա-
 կի 11 ըդ յօդուածի մասին, կարելի է համառօտել այսպէս.

Գերարդն իւր ճառի երկրորդ մասը նուիրեց այդ հարցին,
 և ասաց, որ դատ. պալատը ճանաչելով 11 ըդ յօդուածն անգոր-
 ծադրելի, սխալուել էր: «Դատ. պալատն, ասաց նա, խախտել էր
 այն բարձրագոյն հրամանը, որ 1872 ին հրատարակել է կա-
 ռավարիչ Սէնատը օրէնսդրութիւնների ժողովածուի մէջ № 21.
 Այդ բարձրագոյն հրամանը դատ. պալատում յիշուած է բողո-
 քաւորների կողմից իբր պաշտպանութիւն իրենց իրաւունքի: Բողո-
 քաւորները վիճում էին Երկայնաբազուկ իշխան Արղութեանի կտա-
 կի 11 ըդ յօդուածի դէմ, որով նա կտակել է 40 հազար ուրբի Ա-
 ղէքսանդրապոլու ուսումնարանի համար: Նոցա պատճառաբանու-
 թիւնն այն է, թէ այդ ուսումնարանը դեռ հաստատուած չէ, ապա
 ուրեմն և չի կարող գործ զրուել կտակաւանդողի կամքին համա-
 ձայն նորա կտակած գումարը: Ահա թէ ինչո՞ւ վերայ էր վէճը:
 Իսկ ի՞նչ է ասում այդ մասին պալատը: Նա ասում է, բողոքա-
 ւորները, չվիճելով կտակի 11 ըդ յօդուածի օրինաւորութեան
 դէմ, ապացուցանում են միայն, որ կտակի այդ յօդուածը չի
 կարող ի կատար ածուել: Այսպիսով պալատն ինքն է խոստո-
 վանում, որ բողոքաւորները վէճն այն չէ, թէ իշխ. Երկ. Արղու-
 վանում, որ բողոքաւորները վէճն այն չէ, թէ իշխ. Երկ. Արղու-
 թեան իւր կտակի մէջ ձևակերպել չէ իւր կամքը և թէ նա
 իրաւունք չունէր այդ կարգադրութիւնն անելու, այլ այն, որ
 այդ յօդուածը պէտք է ոչնչանայ, որովհետև անկարելի է նոյնն
 ի կատար ածել կտակաւանդողի կամքին համաձայն: Իսկ ի՞նչ է
 ասում այս աւարկայի մասին այն բարձրագոյն հրամանը, որի
 վերայ յենուել են իրենք բողոքաւորները:

Նա ասում է. եթէ որոշ պէտքերի համար աստուածահաճոյ

տեղերի և նման հիմնարկութիւնների օգտին նուիրուած գումարների գործադրութիւնը նուիրատուի որոշած նպատակին համեմատ անկարելի լինի, այդ դէպքում նոցա կարելի է տալ ուրիշ նշանակութիւն, բայց միայն նուիրատուի համաձայնութեամբ, իսկ եթէ նուիրատուն կենդանի չէ և առանձին ցուցումն չէ արել, այն ժամանակ պէտք է խնդրուի բարձրագոյն հաճութիւն նախարարների յանձնաժողովի միջոցով: Ըստ այսմ՝ ակներև է, որ մինչև անգամ եթէ ուղիղ ճանաչենք բողոքաւորների նոյն ապացոյցները, թէ կտակի 11-րդ յօդուածն ի կատար ածել անկարելի է և թէ կտակակատարի կողմից չնախատեսուած հանգամանքների շնորհիւ նորա կտակած գումարը կարելի չէ գործածել այն առարկայի վերայ, ինչ բանի համար նա նուիրել է, այնու ամենայնիւ այդ բարձրագոյն հրամանը իշխան Երկայն. Արղութեանի ժառանգների օգտին ոչ մի իրաւունք չէ սահմանել: Իսկ եթէ մինչև անգամ ընդունենք, որ կտակած գումարը չի կարող գործադրուել իւր նշանակութեան համեմատ, և առաջնորդուենք բարձրագոյն հրամանով, այդ դէպքում, որովհետև կտակաւանդողի մահուան պատճառով նորա համաձայնութեան մասին, թէ ինչպէս ցանկալի է նորան գործ դնել գումարը մի այլ առարկայի վերայ, խօսք լինել չի կարող, հարկ էր նախարարների յանձնաժողովի միջոցով հայցել բարձրագոյն հրաման այն մասին, թէ ինչ գործադրութիւն տալու էր զրամագրութիւն, որ կտակարարի կամքին համապատասխան լինէր: Բողոքաւորներն ասում են, որ կտակակատարներն այդ գումարից ծախսել են 26 հազար ռուբլին կտակարարի նշանակած նպատակին անհամապատասխան կերպով և իրենց խօսքը հիմնում են այն բանի վերայ թէ կտակարարն այդ 40 հազար ռուբլի նշանակել է իբր թէ ուսումնարանի պահպանութեան համար, ինչպէս նոքա են կարծում, իսկ կտակակատարները գործ են դրել ուսումնարանի հիմնարկութեան վերայ: Այս խնդրին կարող է վերաբերուել միայն նոյն բարձրագոյն հրամանի 2 կէտը, որտեղ ասուած է որ, եթէ մի որոշ պէտքի համար նուիրուած գոյքին կամ զրամագրութիւն տրուել է այլ գործածութիւն առանց պահպանելու նոյն բարձրագոյն հրամանով սահմանուած կարգը, այդ դէպքում նուիրատուին, իսկ նորա մահից յետոյ նորա ժառանգներին իրաւունք է տրուում պահանջել վերադարձնել այդ գոյքը կամ զրամագրութիւնը: Ներկայ դէպքում պալատն այն հարցի քննութեան մէջ չէ մտել թէ ուղիղ կամ սխալ է ծախսուած 26 հազար ռուբլին: Բայց եթէ պալատը մինչև անգամ ճանաչէր, որ կտակակատարներն ուսումնարանի հիմնարկութեան վերայ գործ դնելով, ինչպէս

ասում են բողոքաւորներն, այդ զրամագրութիւնը, որ տրուած էր նորա պահպանութեան համար, վարուել չեն կտակարար կամքին համեմատ, այդ դէպքում էլ բողոքաւորներին մնում էր միայն իրաւունքը բողոք ներկայացնել այն 26 հազարը վերադարձնելու մասին, որն անկանոն կերպով կտակարարի կամքի հակառակ ծախսուած էր, այլ ոչ իրաւունքը խնդրելու, որ կտակարարի կարգադրութիւնը բոլոր 40 հազարի մասին ոչինչ համարուի և ջնջուի 11րդ յօդուածը: Ըստ այսմ պալատի զբաղնցնող երկրորդ կէտն էլ անկանոն է վճռուելը:

Գերարդն իւր ընդարձակ ճառը, որի մէջ նա վերլուծեց բացի յիշեալ կէտից և ուրիշ երկու կէտեր ևս, որոնք վերաբերում էին կտակակատարների պատասխանատուութեանն, կնքեց խնդրելով Սէնատին, որ պալատի վճիռը փոխուի բոլոր մասերով:

Գերարդից յետոյ խօսեցաւ Արղութեան ժառանգների փաստաբան Սօքարովսկին, որ երբորդ անձի բողոքի նկատմամբ երկար բացատրեց և պնդեց թէ նա իրաւունքներ չունի և եթէ ունի էլ, այդ իրաւունքները պալատի վճռով խախտուած չեն:

Սօքարովսկու կարծիքների դէմ խօսեցան նախ Գերարդ և ապա Սամարսկի, որոնց Սօքարովսկին դարձեալ պատասխանեց: Ապա իւր եզրակացութիւնը տուեց օրէր պրօկուրօր Կնիրիմ: Երբորդ անձի բողոքի վերաբերութեամբ նա յայտնեց այսպիսի եզրակացութիւն.

«Իշխան Երկ. Արղութեանի կտակի զօրութեամբ 40 հազար ռուբլի պէտք է հասնէր դպրոցի օգտին: Այն ուսումնարանը, որ նա միտք ունէր հիմնել Աղէքսանդրօպօլում եկեղեցու գաւթում, նորա ցանկութեամբ պէտք է գտնուի Հայոց հոգևոր կոնսիստօրիայի անմիջական իշխանութեան և խնամքի ներքոյ: Ըստ այսմ՝ այստեղ իբրև շահագրգռուած անձն հանդիսանում է Հայ Լուսաւորչական հոգևորականութիւնը և իսկապէս խօսելով ներկայ գործի նկատմամբ կտակի 11րդ յօդուածի մասին բողոքը պէտք էր տալ ոչ թէ կտակակատարների վերայ, այլ միմիայն այդ հոգևորականութեան: Օրէնքի մէջ ոչ մի տեղ ասուած չէ, որ կտակի ոչնչացնելու մասին բողոքները պէտք է արուին կտակակատարների դէմ»:

Այստեղ Կնիրիմն յիշում է օրէնքի այն յօդուածները, որոնց զօրութեամբ կտրելի է դատ բանալ կտակակատարների դէմ, և վերջիններին ազատ համարելով 11րդ յօդուածի նկատմամբ պատասխանատուութիւնից, յայտնում է, որ ներկայ պահանջը պէտք է ուղղուի այն անձինքների դէմ, որոնք նոյն կտակի նկատմամբ շահագրգռուած են, այսինքն օրինական ժառանգներ:

րի դէմ: Ներկայ դէպքում 11րդ յօդուածի վերաբերութեամբ շահագրգռուած կարող էր լինել ուսումնարանը, և որովհետև ուսումնարանը գտնուում է կամ պէտք է գտնուի կտակարարի կամքին համաձայն հայ լուսաւորչական հոգևորականութեան իրաւունքի տակ, ապա ուրեմն բողոքը պէտք է ուղղուի հայ լուսաւորչական հոգևորականութեան դէմ: Այս պատճառով, վերջացուց Կնիքիմը, ես ընդունում եմ, որ Թիֆլիսի դատ. պալատի վճիռն արդարև խախտում է հայ լուսաւորչական հոգևորականութեան շահերն և որ նորա վճիռը քվդ. դատով. կանոնադր. 795 յօդուածին համաձայն հարկաւոր է փոխել:

Սէնատն այս ամենը լսելուց յետոյ վճիռ դրեց իշխ. Երկ. Արդութեանի կտակակատարների բողոքը թողնել առանց հետեւանքի, իսկ Երեանու Հայոց կոնսիստօրիայի հաւատարմատարի խնդրին համաձայն Թիֆլ. դատաստ. պալատի վճիռը փոխել և գործը յանձնել Թիֆլ. դատ. պալատի այլ բաժանմունքի վերաքննութեանը:

Ճ.

Մինչև վերաքննութիւնը.

Սուք չկայ, որ Սէնատի վճիռը չափազանց ուրախացուց մեզ ամենիս, որ աճտեղ էինք այն օրը: Իբրև մեծ յաջողութեան վերայ մենք իրարու անկեղծ աչքի լոյս էինք ասում, և գոհ էինք շատ: Մկրտիչ Սանասարեանն անմիջապէս հեռագիր ուղարկեց Ս. էջմիածին վեհ. կաթողիկոսին, իսկ տողերիս գրողին վիճակուեցաւ հեռագրով աւետել յաջողութիւնը նախ Աղէքսանդրապօլ տէր Յովսէփին և ապա՝ Թիֆլիս Մեղուի խմբագրութեան:

Տէր Յովսէփն անմիջապէս հեռագրներ է ուղարկում վեհ. կաթողիկոսին, Մակար արքեպիսկոպոսին, կտակակատարներին և մի քանի այլ բարեկամներ: Կաթողիկոսին գրած հեռագրական զեկուցումը տէր Յովսէփի կողմից այսպէս է.

«Հոգեկան բերկրութեամբ դիմում եմ Սրբութեանդ զարշապարներին և յայտնում, որ Սէնատը փոխել է պալատի վճիռն իշխ. Արդութեանի կտակի 11 րդ յօդուածի նկատմամբ, որը վերաբերում է մեր օրինորդական դպրոցին. այդ մասին իսկոյն հեռագրել էր որդիս»:

Միաժամանակ տէր Յովսէփն ինքն ստացաւ Ս. էջմիածնից խնդակցութեան հեռագիր Մանկունու և Թաղիանոսեանի ստորագրութեամբ, որոնք Մարտի 11 ին գրում են.

«Սանասարեանն հաղորդում է, որ պալատի վճիռը Արդ. կտակի 11 րդ յօդուածի նկատմամբ փոխուել է հոգևոր իշխանութեան օգտին. շնորհաւորում ենք»:

Մարտի 2 տէր Յովսէփն հեռագրում է իւր որդուն Ս. Պետերբուրգ.

«Շնորհակալ եմ ուրախ լուրի համար, յատկապէս շնորհակալ եմ գործակիցներից. առաջին փոշթով հաղորդեցէք աւելի հանգամանօրէն, կցելով և Սէնատի վճռի պատճէնը. ողջունեցեք բոլորին»:

Շուտով ուղարկուեցաւ տէր Յովսէփին Սէնատի Փետր. 27 ին կայացած նիստի ստէնօգրաֆիական ճշգրտութիւնը մի բացատրական ընդարձակ նամակով: Ապա Ապրիլի 1 ին ուղարկուեցաւ և այն ծախքերի հաշիւը, որոնք տողերիս գրողն արել էր 1872 Նոյեմբ. 27 ից մինչև 1874 Սպր. 1 ին: Արդ. կտակի գործի համար. գումարն էր 100 ռուբլի 87 կոպէկ. այդ հաշուի մէջ են ստէնօգրաֆի վարձը 25 ռուբլի և արտագրութեան վարձ 9 ռ. 55 կ. մնացեալ 66 ռուբլի 32 կոպէկի մեծագոյն մասը ծախսուած է հեռագրների վերայ և փոքրագոյն մասը փօշթի, կառքի և այլ մանր պէտքերի: Այս հաշիւը մի փոքրիկ չափ է կշռելու համար թէ ինչ կընստէր Արդ. օր. դպրոցին, եթէ յատուկ պատգամաւոր ուղարկուած լինէր Ս. Պետերբուրգ գործի մասին աշխատելու համար. չէ՞ որ բացի վերոյգրեալից պէտք է հազացուէր պատգամաւորի ճանապարհորդութեան, ապրուստի և այլ ամենակարևոր պէտքերի ծախքը: Ակներև է, որ այդպիսի ծախքերը լինելու էին բազմապատիկ աւելի քան յիշեալ 100 ռ. 87 կոպ.

Իեւ գործը Սէնատից փոխադրուած չէր Թիֆլիսի դատ. պալատը: Վրայ հասան ամարային ամիսները: Տողերիս գրողը, որ այն ժամանակ բժշկական ձեմարանի ուսանող էր, իւր վտանգուած առողջութիւնը կազդուրելու համար եկաւ հայրենիք, ուր մնաց մօտ երկու ամիս (Յունիսի կէսից Օգոստ. կէս): Անմոռանալի և ոգէպարար օրեր էին այդ ժամանակաւոր հանգստութեան օրերը չորս տարի չտեսած մայրենի տան յարկի տակ: Առանձնապէս մխիթարական էր տեսնել և հոգևոր կեանքի փոփոխութիւնը դէպի բարին. բազդ ունեցայ տեսնել Արդ. օր. դպրոցը, որ իբրև մի նորածիլ տնկարան յոյսեր էր տալիս. դպրոցն այն ժամանակ գտնուում է Աղէքսանդրեան փողոցի վերայ Միքայէլ աղայ Տիրբանեանի տանը: Ժրաջան յաջորդ Սուքիաս վարդապետ Պարզեանցը տէր Յովսէփի հետ միասին ձեռք ձեռքի տուած մեծ եռանդով և աջողութեամբ գործի գլուխ էին կանգնած և աշխատում էին երկու սեռի դպրոցները զուգընթացաբար յառաջ մղել.

որքան ներում էին տեղական միջոցները, նորա համախմբել էին Աղէքսանդրապօլում այն ժամանակների համար բաւական լաւ ոյժեր: Նոցա գործակցում էին իրենց աշխոյժ համակրութեամբ և օգտակար խորհուրդներով բնիկ աղէքսանդրապօլցի զինուորական բժիշկն Աւետիք Բաբայեան և իւր պարկեշտ ամուսինը, Հայոց մէջ մանկական պարտէզի առաջին նախաձեռնողը, տիկին Սոփիա Բաբայեան, որոնք շատ կենդանի հետաքրքրութիւն ունէին դէպի տեղական մատաղ սերնդի կրթութեան հարցերը: Իրսից հրաւիրուած ուսուցիչները՝ Սարգիս Բէկնազարեան (ապա քահանայ), Ղազարոս Աղայեան և Հայրապետ Ղուկասեան (ապա տէր-Գարեգին) միացած տեղական մանկավարժների հետ, որոնք են Մինաս քահանայ տէր Պետրոսեան, Մկրտիչ վարժապետ Արաբաշեան, Արզար (յետոյ տէր Մեսրոպ) Գիւլումեանց և իւր տիկինը, Զարուհի, Աղարէկ Արշակունի, Սարիբէկ տէր Մելքիսեդեկեան (Ղալալչի Մարգար) և այլք բաւական ներդաշնակ խումբ էին կազմում և վայելում էին յաջորդի և երկու դպրոցների հոգաբարձութիւնների համակրութիւնը: Մխիթարական էր այդ տեսնել Աղէքսանդրապօլում այն ժամանակ, երբ ուրիշ տեղերում, որոնք նոյն քաղաքի աստիճանին էին, գրէթէ խոր խաւարն էր իշխում: Տողերիս գրողի աչքին մեծ երեկցաւ յառաջադիւթութիւնը չորս տարուայ մէջ: Տղայոց հոգևոր դպրոցն արդէն հասուցել էր նոր սաներ. նորա հոգաբարձութիւնը, որի գործունեայ անդամներից մէկը տէր Յովսէփն էր, այլ օգտակար ձեռնարկութիւնների շարքում մի համակրելի գործ էր սկսել, այն է տեղական դպրոցների համար յատուկ ուսուցիչներ պատրաստել մասնագիտական դպրոցներում. բժ. Բաբայեանի աղդեցութեամբ այդ տարին որոշուած էր երկու սաների (Վարոս Գեօնջեանց, յետոյ տէր Մեսրոպ, և Նիկողայոս Կարապետեան) ուղարկել Թիֆլիսի ուսուցչական ձեռնարանը: Արդութեան օր. դպրոցն էլ առանձին մի լոյս էր տարածել Աղէքսանդրապօլու կանացի փակ շրջաններում, այն է ընթերցասիրութիւն, ձեռագործի բարեբաւումը և որ գլխաւորն է անկեղծ ձգտումն աղջիկներին անուսուսն չթողնելու: Այսպէս յառաջ գնալու զարկը տրուած էր, և յաջողութեան գրաւականները շատ էին: Միքանի ուսուցիչների մէջ երեկցաւ ձգտումն հայ դպրոցի գործն աւելի ևս ապահովելու բարի դիտաւորութեամբ հոգևոր կոչումն ընդունել. նոյն ամառը Յուլիս ամսին երբ Տ. Գէորգ դ. կաթողիկոսի հրամանին համաձայն տողերիս գրողն իւր հօր, Տէր-Յովսէփի, հետ գնալու էին Բիւրական, յանձնարարուեցաւ Տէր-Յովսէփին վեհ. հօր հաճութիւնն անելու, որպէսզի Ս. Բէկնազարեան և Ղ. Աղայեան քա-

հանայ ձեռնադրուին: Չեմ յիշում թէ ինչու չյաջողեցաւ այդ, բայց յիշում եմ, որ Բիւրականում այդ մասին խօսք եղաւ և վեհը յոյս տուեց Ս. էջմիածին գնալուց յետոյ կարգադրել շուտով: Սակայն հանգամանքները փոխուեցան. վեհ. կաթողիկոսն իւր նոր բացած ձեռնարանի համար փոխ տեսուչ կարգեց Աղէքսանդրապօլի յաջորդ Սուքիաս վարդապետին, որ ղեկավարն էր տեղական շրջանի իւր մեծ եռանդով ու լուրջ հասկացողութեամբ: Նորա հեռանալով վիճակի փոխանորդութեան գործերը բարդուեցան առանց այն էլ շատ պաշտօններով ու պարտականութիւններով ծանրաբեռնուած տէր Յովսէփի վրայ: Վերջինս թէև սիրալոյսով կրում էր ամեն բան և ընկճուելու կամ լքանելու սիրալոյսէր, սակայն իբրև մարդ դժուարանում էր ամեն բանի հասնել առանց ուրիշների հաւատարիմ աջակցութեան: Դժբաղդաբար որոմն ցանող սատանան կարողացել էր խարբալել ումանց, որոնք իրենց անգործութիւնն ու ապիկարութիւնը քողարկելու համար ընդունակ եղան ամեն բան խառնելու և պղտորումն յառաջ բերելու: Այլ անգամի թողնելով այս նոր փաստակար հոսանքի հետաքրքրել էջերը լիուլի բանալու մեր ընթերցողի առաջ, բաւականանանք այժմ ասելու, թէ քիչ էր մնացել, որ Արդ. կտակի դատն այդ մութ շրջանի պղտորումներին կամ շարամիտ անփութութեանը զոհ գնար, եթէ չլինէր դարձեալ տէր Յովսէփի աշակրջութիւնն ու անկեղծութիւնը, ինչպէս կը տեսնենք իւր տեղում:

ԺԱ.

Վերաբնութիւն:

Դեռ Օգոստոսի սկզբներին, երբ տողերիս գրողը վերադառնալու էր Ս. Պետերբուրգ, տէր Յովսէփն ի թիւս այլոց, յանձնեց նորան տեղեկանալ թէ Արդ. դպրոցի գործի վճիռն ուղարկուած է Սէնատից պալատ: Թիֆլիսում այդ մասին ստոյգ տեղեկութիւն առնելով, որ վճիռն արդէն ստացուած է Սէնատից, անմիջապէս հաղորդուեցաւ տէր Յովսէփին, որ տեղեկակ լինի: Վերջինս Օգոստ. 29ին գրում է իւր որդուն այն տարակուսանքները, որոնցով ինքը պաշարուած է, և յանձնում է նորան փաստաբանից հրահանգներ ստանալ. նոյն նամակով շատ զանգատում է նա իւր վիճակի վերայ, Սուքիաս վարդապետի գնալով նա մեռակ էր մնացել և զբաղմունքները չափազանց աւելացել էին:

Այդ իսկ նամակից իմանում ենք, որ դեռ Օգոստոսի վերջերին տէր Յովսէփին յայտնի չէր թէ Երբ է լինելու պալատի նիստը:

Մինչդեռ նա իւր որդուց հրահանգներն էր սպասում, հասնում է ժամանակը դատական նիստին ներկայանալու, որը տեղի ունեցաւ Հոկտ. 2ին: Թողնենք, որ տէր Յովսէփն ինքը պատմէ ամէն բան այնպէս, ինչպէս որ նա գրել է իւր որդուն Հոկտեմբերի 4ին մանրամասն նամակով. «Հայր Սուրբիասի յէջմիածին գնալուց զկնի, գրում է նա, համարեա այնպէս խառն է եղած իմ գրութիւնս՝ ուսումնարանաց, եկեղեցեաց և վիճակայնոց վերաբերութեամբ, որ չկարեմ պատմել. ի վերջոյ յանցեալ երեքշաբաթի աւուր 24 Սեպտեմբերի հեռագիր ստացուեցաւ ի Տփլիսայ թէ մեր գործի համար (Արդութեանց օրիորդական դպրոցի) ատեան նշանակւած է յ2ն Հոկտեմբեր ամսոյս. իսկոյն աւելի և աւելի շփոթեցաւ դրութիւնս, մէկ կողմանէ վիճակի անկառավար մնալն, միւս կողմանէ ուսումնարանիս (գաւառական դպրոց) անուսուցիչ մնալն, և միւս կողմանէ այդ գործոյ ամենակարեւոր վսեմութիւնն և ժամանակի շատ սուղ լինելն, թէպէտ փոյթ հոգացութիւն անելոյ հոգ տարի հոգաբարձուաց և այլոց հաղորդելով, և այնպիսի միտք արծարծեցի որ եթէ հնար է այս անգամ ինձ ազատ թողուն, և վայրիվերոյ խօսքերուն վախճան տալոյ համար մէկ ուրիշն նշանակեն, բայց տեսայ որ ոչ հոգացող և ոչ գնացող կայ մէջ տեղն, նազ անելս յետ դրի, հեռագրեցի վեհափառին ի տնօրէնութիւն, սուղեպնի պալատին հարցումն թէ երբ արդեօք նշանակուած է ատեանն, և ուսումնարանական վարչութեան արձակուրդ տալ ինձ տասն և հինգ օրեայ ժամանակաւ. հետեւալ չորեքշաբթի յերեկոյին պալատից ստանալով պատասխանն թէ արդարև այն օրն է նշանակուած, յ2ն Հոկտեմբերի, իսկոյն վերստին հեռագրեցի նախագահի պալատան խնդրելով, որ եթէ կալելի է մի քանի աւուրքք յետաձգել մինչև որ կարողանամ հասնել. սորան պատասխան չստացայ և հետեւալ հինգշաբթի օրն հրաման ստացայ վեհափառից, որ շտապեմ գնալ Տփլիս, և ուսումնարանի վարչութիւնից արձակուրդ.* ուրբաթ օրն առաւօտեան շատ կանուխ դուրս եկի... փոշթային ձանապարհով, զանազան արգել-

*) Թղթերի մէջ պահուած են հետեւեալ հեռագրները: Սեպտ. 24 ին թիֆլիսից Սիմէօնեանցն հեռագրում է Հայրապետ Դուկասեանցին.
«Արդութեան կտակի գործը նշանակուած է Հոկտեմբերի 2 ին. հաղորդեցէք այդ մասին հոգաբարձութեանը, որ հոգան»:
Սեպտ. 25 ին պալատի ատենադպիրն հեռագրում է տէր Յովսէփին.
«Արդութեան կտակի գործը նշանակուած է զեկուցանելու պալատում Հոկտ. 2 ին»:

մանց և դժուարութեանց հանդիպելով, հաղիւհազ գիշեր ցերեկ ձանապարհ գնալով կարողացանք կիւրակի օրն զկնի ձաշու ժամն մէկին հասնել ի Տփլիս. փոքր ինչ հանգստանալուց յետոյ գնացի ուղղակի կտակակատարների մօտ և նրանց կարծիքն իմանալուց յետոյ շտապեցի մեր փաստաբան պ. Եագուլեանցի մօտ, որոյ հետ երկար ու բարակ խորհրդածելով, որոշեցինք իբրև թէ մի փաստաբան ինքն լինի և միւս ուսազգի Ստեփանով ոմն, որ երբեմն պալատան անդամակից է եղած. խնդրեց ունեցածս փաստերն տանեմ իրան մօտ ներկայացնեմ և միւս բարեկամների հետ խորհրդակցեմ այդ մասին. արդէն օրն վերջացաւ, և հասանք երկուշաբթի օրն. այդ օրն զանազան բարեկամներու կարեկցութեանն դիմելով ստացայ այնպիսի տարակարծիք խորհուրդներ, որ բուրովին շփոթեցայ, ուստի գնացի պալատն Սէնատի հրովարտակն կարդալոյ, այնտեղ տեղեկացայ, որ վերոյգրեալ Ստեփանով վարձուած է հակառակորդաց կողմանէ. և իմանալով որ մեր գործոյն զեկուցանող նշանակուած է անդամ պալատան Իսպիրովն, ներկայացայ նորա մօտ, խնդրեցի Սէնատի հրամանն կամ արտագրելոյ կամ կարդալոյ. նա ասաւ թէ հրովարտակն չի կարող տալ, ըստ որում պրօկուրօրի մօտ է գործն. իսկ երբ խնդրեցի, որ մի օր յետաձգելոյ կարգադրութիւն անեն, նա ասաւ թէ կարևորութիւն չկայ այդ մասին. որովհետև կայանալի վճիռն այնպէս կը լինի Սէնատի հրովարտակի զօրութեամբ, որ նոքա հակառակորդքն դիմեն նոր վէճով դէպի կոնսիստորիայն Երևանայ և յայնժամ ինչ հոգացողութիւն ունիս արա. սորանով փոքր ի շատէ միթիթարեցայ, այն տեղից դուրս գալով դիմեցի վերստին հասկացող անձանց մօտ, որոնց հաղորդելով այդ ասութիւնն, ոմանք բարւոք դատեցին որ ոչ ինքս և ոչ իմ փաստաբանն այն օրն չներկայանանք, ոմանք թէ առանց այդ երբէք չի լինիլ այսինքն առանց ներկայանալու, ոմանք թէ պալատն պարտաւոր է ոչ ըստ էութեան գործոյն վճիռ կայացնել, այլ միայն հրովարտակն կա-

Կայ տէր Յովսէփի հեռագրի սեր, որ գրել է պալատի նախագահին առանց թուականի:
«Յայտնելով, որ բնակում եմ Աղեքսանդրապօլում իմ սեփական տան մէջ, սպասում եմ հրաւերի. և որովհետև իշխ. Ղահրամեան Արդութեանի գործի վերաբնութեան ժամանակ ևս պէտք է ներկայ լինիմ իմ հոգևոր իշխանութեան հրամանով, ուստի խոնարհաբար խնդրում եմ բարեհաճել զործն յետաձգել պատասխանը վճարուած է»:
Սեպտ. 26 ին Սինօզի անդամ Գրիգոր Եպիսկոպոս Մուշեղեանց հեռագրում է տէր Յովսէփին Ս. Էջմիածնից.
«Կաթողիկոսը թոյլ է տալիս Ձեզ Թիֆլիս Արդութեանի գործի համար. շտապեցէք. հաղորդեցէք այդ մասին հոգաբարձուներին»:

տարել և ոմանք թէ յատուկ ըստ էութեան գործոյն վճռելոց է, և հոգատարութեան կարօտ, ոյր սակս բարուք դատեցաւ, որ մի որ փաստաբան լինի. ուստի ցանկացայ և խնդրեցի Եակովլովից, որ մի հաւատարմագիր պատրաստենք իմ կողմանէ, թող լինի մօտն. եթէ չհարկաւորի, փաստ չի բերել. այս մտօք նա իմ հաւատարմագիրս պահանջեց, որ ըստ այնմ պատրաստէինք, իսկ իմ մօտն կար ոչ իսկական հաւատարմագիրն, որն արդէն Սէնատուսն է, այլ նորա վաւերական պատճէնն. սորա մասին ասացին, որ դորանով ինքս անգամ հաւատարմատար լինել չեմ կարող, ուր թէ ուրիշին փոխանորդեմ, այս տարակուսանքն ևս աւելացաւ միւսոց. բայց երբ Հոկտեմբերի մէկին, որ երկուսիս ատեանն է, էլ ինչ հնար կը մնար ինձ. վճռուայ և ինքս գնացի ներկայացայ ժամանակին. երբ ատեանն կազմեցաւ, իրանց ատենական կարգն պահպանելուց զինի պահանջեցին ինձանից և համատարմագիր, որոյ պատճէնն թէև իրանց ներկայացուցի, սակայն երկար վէճի տակ ընկաւ և այնպէս վերջացաւ, որ ինձ իրաւունք տուին խօսալոյ, և ինքս այնտեղ բերանացի յանձնեցի Եակովեանցին, որն արդէն պատրաստի էր այնտեղ և սկսեց խօսել. և ամենայն կողմանէ խօսակցութիւնն աւարտեցաւ և խորհրդակցելուց յետոյ վճռուեցաւ, որ մինչև ցայժմեան նոցա վէճն 40 հազարի վերաբերութեամբ մնայ առանց նկատողութեան, և եթէ ցանկան, նոր վէճ բանան կոնսիստորիայի հետ կայն...

Իրատական գործի այսպիսի յաջողութեան մասին տէր Յովսէփը փութաց անմիջապէս հեռագրով հաղորդել վեհ. Կաթուղիկոսին. իբրև պատասխան Հոկտ. 3 ին Թաղիանոսեանի ստորագրութեամբ նա ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Ուրախաբեր հեռագիրն ստացուեցաւ, Կաթողիկոսը պատուիրում է, որ դուք վերադարձին անպատճառ մտնիք այստեղ կարևոր գործերի համար»:

Պալատի վճռից յետոյ տէր Յովսէփը, չնայելով ս. Հայրապետի կոչին, դեռ ստիպուած էր մնալ Թիֆլիսում այլ ևս երկու շաբաթ: Որպէսզի հասկանանք թէ ինչ էր պահում նորան այն տեղ, թողնենք, որ դարձեալ ինքը խօսի այն նամակով, որ գրել է որդուն Հոկտեմբերի 18 ին Թիֆլիսից.

«Կարծում եմ որ պէտք է դարմանաս դեռ մինչև այսօր այստեղ լինելուս, ինչպէս ինքս էլ ձանձրացած եմ, գրում է, և նեղացած, որ այսքան մնացի. բաց յայտմանէ, որ չարչարանաց և կարօտութեան նաև փաստուց մէջ մաշուած եմ... Վերջացուցած եմ գործս և այսօր կամ վաղն պէտք է այստեղից հեռանամ և համաձայն ստացածս հեռագրին պէտք է ձանապարհոր-

դեմ յեջմիածին, և եթէ այնտեղ էլ մի նոր ցաւ և մի նոր վիշտ չստացայ, այնտեղից վերադառնամ տուն... Այստեղ այսքան օր երկու շաբաթ միջոցաւ մնալս իզուր չէր. նախ որ ցանկանում էի վաղձանական վճիռն դուրս դար և բոլոր պատճէնն ստանալով հեռանայի. բայց երբ յերեկեան օրն յայտնեցին թէ դեռ տան օր յետոյ հազիւ պատրաստ կըլինի, ուստի վճռուայ, որ թոյլ տամ գնամ. և յանձնեցի փաստաբանին, որ ինքն յետոյ ստանայ և ինձ հասուցանէ. երկրորդ՝ որ իմ և ժառանգաց մէջն բանակցութիւն էր լինում հաշտութեան մասին, բայց չկայացաւ, որովհետև նոքա փող էին պահանջում և հաղարնիւր իբրև իւրեանց փլասն, իսկ ինքս տալու յօժարութիւն և իրաւունք չունէի, այլ իմ առաջարկութիւնս այն էր, որ ոչ նոքա և ոչ մենք փլասն մէկ մէկուց չպահանջենք և այսպէս սիրով և երախտագիտութեամբ բաժանուինք. թէև մնաց թերի, բայց կարծում եմ, որ պտըտցնելոյ է դեռ մի բան խնդրելոյ և ստանալոյ. ըստ որում, ինչպէս կարծում եմ, նոքա յերեան գնալ և նոր վէճ բանալ դժուարանում են. և երկրորդ որ և գլխաւորն է, այստեղի փաստաբանական ժողովն կասկածելով, որ դոքա երբևիցէ գուցէ նոր վէճ բանան և անհանգստութիւն պատճառեն մեզ, ըստ որում կան և շարագրիւր անձինք, խորհուրդ են տալիս, որ ընդ միշտ այդ գործոյ առաջն առնուի. նոքա ինկատի ունելով Պետերբուրգի Սէնատի հրովարտակն ի Մարտի 1872 ամի համարաւ 32, խորհուրդ են տալիս, որ հոգևոր իշխանութեան կողմանէ առաջարկութիւն լինի կամ գլխաւոր կառավարութեանն Վրաստանի և կամ ում որ այդտեղ պատշաճ դատուի, բարձրագոյն լուծումն խնդրելոյ համար նախարարութեան ձեռքով, որ այդ գումարն, կտակեալն ի Ղահրաման իշխանէ, իւր հանգուցելոյ նպատակին համաձայն գործադրուի, ինչպէս և եղած է. այս մասին խնդրեցի նրանցից, որ մի բան գրեն, որ ուղարկեմ առ Ձեզ, սակայն նոքա, սաստիկ զբաղմանց մէջ ընկղմուած լինելով, այսօր և վաղն ձգելով, յետացուցին և ի վերջոյ այնպէս խորհուրդ տուին, որ նախապէս Ձեզ գրեմ, խորհուրդ և տեղեկութիւն ստանամ և ապա անենք ինչ որ անելոյ ենք. իսկ ինքս, ցանկանալով որ դուք փոքր է շատէ ծանօթ լինիք հարցին և առաջարկութեանն, ինքս գրեցի մի թուղթ, նոցա ցոյց տուի, և անհատիկ նոցա խորհրդեամբ ուղարկում եմ առ սիրելի դաւակղ իմ հանդերձ պատճէնիւ հրովարտակի տեղոյդ ձերակոյտի, որ դուք կարգալով նախ հրովարտակն ձերակուտի և ապա իմ գրած թուղթն և մեր ազնուամեծար բարեբարաց հետ խորհրդակցելով կամ նոցա բարեհաճութեամբն և կամօրն ուրիշ ում հետ որ արժան դատէք ուղղել կամ

մշակել տաք թուղթն և ինձ վերադարձնէք Սիդէքսանդրապոլ. կամ ինչոր վաղճանական հաճութիւն կըլինի նոյնպէս այնտեղ ծանուցանէք. մինչ ցայն կարծեմ որ տանը կըլինեմ. խնդրեմ զանցառութեան չտալ և հետևել, գուցէ արժանաւորութիւն և կարեւորութիւն ունի, և այդու նոցա մտաց տատանմունքն ընդ միշտ կը փակուի, իսկ եթէ ոչ, դարձեալ տեղեկութիւն. ի հարկէ, բանն որ ի վերջոյ դադարելոց է այդտեղ նախարարութեան մէջ, ուրեմն այժմէն պէտք է նորա հետևանացն ծանօթանալ օգտաբերութեան կամ ֆլասարբերութեան կողմանէ, և եթէ առանց այդ էլ կարելի է, դուք գիտէք»:

Այսպէս գրելուց յետոյ տէր Յովսէփն իւր նոյն նամակով վիշտ է յայտնում, որ նոր աշխատանք և նեղութիւն է պատճառում որդուն և բարեկամներին. այդ առթիւ նա բաց է անում նաև իւր սիրտն այն վշտերի ու վերաւորանքների համար որ տեսել է այդ գործի երեսից.

«Ի՞նչ գիտես, որ, գրում է նա, այս հինգ տարի է այս գործի համար ընչեր չեմ քաշեր բուն սկզբից. և թէպէտ այս տարի մտածում էի, որ միքանի մեր հասարակութիւնից յիմարների խօսքերին նայելով և ցաւելով բոլորովին հրաժեշտ տամ այս գործից, բայց սիրտս չէր հանգստանում, և գալու օրերս էլ, թէև կամենում էի քիչ ծանր շարժել և նազուտուղ անել, բայց տեսի որ ոչ մէկի փոյթն չէ և ոչ մէկն նազ քաշել չի յօժարում. վասն կը վերադառնամ. թէ որ, Տէր մի արասցէ, գալած չլինէի, բոլորովին այլ կերպարան կըստանար գործն և յայնժամ աւելի մեծ դժուարութիւն. դարձեալ գոհութիւն Արարչին. ուրեմն դուք ևս ուրախակից լինելով ինձ հետ, այդպիսի մտածամբ կարող էք մխիթարուել և իմ տուածս ծանրութիւնն սիրով տանել. ինքըս ասում եմ այստեղ վիճող պարոններին, որ դադարին, բաւական է իւրեանց և մեզ ֆլասելն, ապա թէ ոչ, ուր դըրերարաց օգնականութեամբ մերժել նկատելոց եմ. ուրեմն զուր պէտք է լինի ջանքերն և ֆլասատութիւններն. ափսոս որ մեր ծախսն բաւականաչափ եղաւ և ուսումնարանի յառաջադիմութեան ֆլաս. այսքան առ այս»:

Տէր Յովսէփի այս նամակն ինքնին խօսում է նորա ներքին յուզմունքների մասին: Պէտք է այստեղ յիշել և այն, որ նա նախահոգութեամբ նոյն 1874 Հոկտեմբերին երկու առանձին առանձին ստորագրութիւններ առաւ կտակակատարներից. առաջինը տալիս է իշխանուհի Սոփիա Աւետիքեան այն մտքով, թէ՛ եթէ քա-

ռասուն հազարի դասն Արդութեանի ժառանգների օգտին վճռուի, ինքն ևս իբրև ժառանգներից մէկն ստանալու է բաժին, այդ բաժինը խոստանում է թողնել դպրոցի օգտին. երկրորդ ստորագրութիւնը տալիս են իշխանուհի Սոփիա Աւետիքեան և շտակապետան Միքայէլ Սահակեան այն մտքով թէ՛ նոքա չիմանալով հանգուցեալ իշխանի կարգադրութեան մասին, դեռ իւր կենդանութեան ժամանակ դպրոցի հիմքը դնելու, ներկայացուցել են գլխաւոր կառավարութեանն այն կանոնադրութեան նախագիծը, որ նա կազմել էր դպրոցի համար. սակայն երբոր գլխ. կառավարութիւնը վերադարձուց փոփոխութիւններ անելու այն կանոնադրութեան մէջ և իրենք իմացան, որ իշխանն իւր կենդանութեան ժամանակ կարգադրութիւն արած է եղել, իրենք բարեւոք դատեցին չընդունել հանգուցեալ իշխանի ընտրած ճանապարհից:

Ինչ վերաբերում է նախարարութեան միջոցով Բարձրագոյն հաճութիւն ստանալու խնդրին, Ս. Պետերբուրգում խորհրդակցութիւն եղաւ, կաթողիկոսի գրելիք թղթի ծրագիրն երկու փաստաբանի յանձնուեցաւ կարդալու և կարծիք յայտնելու: Պարզուեցաւ, որ կաթողիկոսի դիմումն երկսայրի միջոց էր, և գուցէ գործը վտանգուի և այլ ուղղութիւն առնի: Այս մտքով և հաղորդուեցաւ Տէր Յովսէփին առժամանակ լուրթեան տալ, գուցէ, ամենևին կարիք չլինի այդպիսի դիմումներ:

Պալատի Հոկոտ. Չին դրած՝ վճիռն իսկապէս փակեց վէճը ժառանգների և կտակակատարների մէջ կտակի 11րդ յօդուածի նկատմամբ. ժառանգներն, եթէ կամենային 40 հազար ուրբու դատը շարունակել, այն վճուից յետոյ պէտք է դիմէին Երևանու նահանգական դատարանն և այնտեղ հաստատէին իրենց իրաւունքը, նոր դատ բանալով Երևանու կոնսիստորի դէմ:

Յայտնի չէ թէ ինչո՞ւ ժառանգներն երկար ժամանակ լուռ մնացին:

Նոյեմբեր ամսին տէր Յովսէփն հազիւ կարողացաւ վերադառնալ տուն և նոյն ամսի 29ին թ. 139 յայտարարութեամբ խնդրեց Երևանու կոնսիստորից առանձին հաւատարագիր տալ փաստաբան Եակոբեանի անունով, որպէսզի վերջինս ժառանգներից պահանջ յարուցանէ դատական ծախքերի համար: Որովհետև կոնսիստորիայում մէկը չէ եղել, որ իմանայ թէ՛ այդպիսի հաւատարմագրի համար դրոշմաւոր թուղթ պէտք չէ, և անտեղի գրագրութիւն է շարունակուել, պահանջելով տէր Յովսէփից երկու ուրբի, և որովհետև տէր Յովսէփին հարկ է եղել նոր յայտարարութեամբ բացատրել այդ պահանջի անտեղութիւնը,

հազիւ Փետր. 15ին 1875 ամի ստացուում է պահանջուած հաւատարմագիրը: Ժառանգներից դատական ծախք պահանջելու գործողութիւնները փաստաբանն հազիւ ուրեմն կարող էր սկսել հաւատարմագիրն ստանալուց յետոյ, որը նորան ուղարկուեցաւ Մարտ ամսին: Թէ ինչ հետեանք ունեցաւ այդ պահանջը և երբ վերջացաւ, տէր Յովսէփի թղթերից չի երևում: Ժառանգների երկար լուծեան հաւանական մի պատճառն այդ էր: Միւս պատճառն էլ այն է, որ նոքա բողոք էին ներկայացուցել սէնատին պալատի Հով. 2ի վճռի դէմ, այդ բողոքը յսէնատում քննուեցաւ 1875 Սեպտ. 30ին և անհետեանք թողնուեցաւ: Այդ մասին տէր Յովսէփը, հեռագիր ստանալով Ս. Պետերբուրգից, յայտարարութիւններով տեղեկութիւն տուեց Հովտ. 2ին թէ սինդիսն և Երևանու կոնսիստորիային և թէ տեղույս հոգ. կառավարութեանն և Արդ. օր. դպրոցի հոգաբարձութեանը:

ԺԲ.

Դատական գործի վերանորոգութիւնը

1878ին վերսկսուեցաւ դատական գործն Երևանու նահանգական դատարանում, ուր Արդութեան ժառանգները բողոք ներկայացուցին կոնսիստորիայի դէմ, խնդրելով անգործադրելի ճանաչել կտակի 11րդ յօդուածը:

Այդ տարին Աղէքսանդրապօլում հանգամանքները խիստ փոխուած էին: Տեղը չէ մի առ մի բացատրել փոփոխութեան պատճառներն: Այդ մեզ շատ հեռու կը տանէր: Այսքանն հարկ է սակայն յիշել, որ Արդութեան դպրոցի հոգաբարձութիւնը, որ նոր կազմ ունէր և որի մէջ չկար տէր Յովսէփը, զբաղուած էր ոչ թէ դպրոցով, այլ ինչ որ կուսակցական հաշիւներով: Հոգաբարձուներէ մէջ կային այնպիսիները, որոնք իրենց մասնաւոր գործերի մէջ շահեցնում էին դպրոցի գումարները կամ չնչին վարձով իրենց առևտրական գործերի համար բանեցնում էին դպրոցապատկան կրպակներն և այլն: Հասարակութեան բանիմաց մարդիկ գիտէին այդ և բողոքում էին. նոցանից մէկն էր և տէր Յովսէփը: Բայց որովհետև այդ ժամանակ տակաւին շատ թարմ էր Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսի և տէր Յովսէփի մէջ ծագած դժուարութեան տպաւորութիւնը, թէ հոգևոր իշխանութիւնն և թէ մասնաւոր տեղական հասարակութիւնը այդ բողոքներն և տրտունջներն համարում էին արդիւնք կուսակցական ատելու-

թեան և դատապարտելի անտարբերութեամբ տարիներ շարունակ զո՛հ էին բերում դպրոցական շահերը: Այդ էր, երևի, պատճառ, որ ոչ Երևանում և ոչ Աղէքսանդրապօլում գործին գլուխ կանգնած մէկը չկար, որ հոգ տանէր Արդութեան դատի մասին:

Միակ հոգատարը կտակակատար Միք. Սահակեանն էր, որ Թիֆլիսից անդադար դիմում էր տէր Յովսէփին և աղաչում, որ թոյլ չտայ իշխանի յիշատակը կորցնելու և աշխատի ջլատել ժառանգների անտեղի ջանքերը: Տէր-Յովսէփին ֆնում էր միայն իրեն եղած դիմումների մասին յայտնել տեղական յաջորդ Սուրէնեանց Գէորգ վարդապետին. սա իւր կողմից բանակցութիւն սկսեց հոգաբարձութեան հետ, բայց ապարգիւն. ինչպէս գրութիւններից երևում է, հոգաբարձուները դատապարտելի անփութութիւն երևեցուցին և փոխանակ գործնականապէս օգտուելու տէր Յովսէփի մերձաւորութիւնից և փորձառութիւնից աւելի ևս արհամարհանքով վերաբերուեցան դէպի նոր անկեղծ ազդարարութիւնները, կարծես, Արդ. կտակի գործը տէր Յովսէփի անձնական շահի կամ փառաւորութեան գործ լինէր:

Այն ինչ ժառանգների բողոքի պատճէնն Երևանու կոնսիստորիայի միջոցով Դեկտ. 13ին մտաւ Ս. էջմիածնի Սինօզը: Այստեղ ամենքին յայտնի էր, որ այդ գործի սկիզբն ու վախճանը տէր Յովսէփին է ծանօթ. և առանց երկար ու բարակ մըտածելու Սինօզի դատաստանական մասից գրում են տէր Յովսէփին մի հրաման 23ին Դեկտ. 1878 ամի թ. 3141, և ուղարկելով նորան յիշեալ բողոքի պատճէնը, վեհ. կաթողիկոսի անունով պատուիրում են նորան իբրև նախածանօթ և մերձաւորապէս տեղեակ» ներկայացնել Սինօզին կարևոր տեղեկութիւնները: Այդ մասին նախապէս հաղորդուեցաւ տէր Յովսէփին մասնաւոր նամակով: Վերջինս դեռ հրաման չստացած, կշռելով իրերի վիճակն և աչքի առաջ ունենալով հոգաբարձութեան առ ինքքն երևցուցած անվստահութիւնը, ապագայ թիւրիմացութիւններից խուսափելու համար շտապում է Դեկտ. 26ին ուղարկել իւր որդուն, որն այն ժամանակ ճեմարանի ուսուցիչ էր, հետեւեալ հեռագիրը. «Ամօթ է Սինօզին, որ յանձնում է Արդութեան գործի պաշտպանութիւնը. ինչպէս կարող եմ յանձն առնել և ս'ըմ հաշուով. մինչ ցայժմ չեմ ստացել հրամանը, որ կարող լինեմ ծանօթանալ գործի էութեանը: Ապա Դեկտ. 26ին նա գրում է որդուն մի ընդարձակ բացատրութիւն, որից երևում է թէ որպիսի կիրք է եղել բորբոքուած Աղէքսանդրապօլում տէր Յովսէփի դէմ, և նա իրաւացի կերպով ցանկացել է հեռու ֆնալ գործից: Ահա թէ ինչ է գրում նա, ի թիւս այլոց, նոյն նամակի մէջ:

«Այդ օրիորդաց դպրոցի համար իմ բացակայութեան միջոցին, գրում է, այստեղ ժողով կըկազմէ պ. Անանիկոյն և զանազան անտեղի առարկութիւններ և վրդովմունքներ մէջ բերելով, դարձաւ քանի խնդրագրեր բռնի ստորագրել կըտայ և կուզարկէ վեհին, կտակակատար Սահակովին և այլն, ինձ՝ նկարագրում է ամենափաստակար մարդ և այլն և այլն, ինչպէս հըրատարակած էին և Մեղուի մէջ»:

Այս տեղեկութեան կից հաղորդում է տէր Յովսէփին և այն, որ քաղաքացի հասարակութիւնն Անանիկովի այդպիսի վարմունքները դէմ բողոքաւոր է.

«Այս քաղաքի ընտրեալ թաղապետներն, գրում է նա, խնդրագիր են ուղարկել զուբերնակի պրաւէնիէն և նկարագրելով Անանիկովի վատթար գործողութիւններն, մէջն յիշած են, որ դէպուտատներն բռնի ժողովներ կըկազմեն և բռնի խնդրագրեր ստորագրել կըտան, խնդրած են տնօրէնութիւն. արդեօք չէ՞ կարելի և կամ ինչպէս պէտք էր անել, որ Սինօզն դորա վաւերական պատճէնն պահանջէ և ստանայ. դորանով այս երկու տարուայ արած ժողովներն կըջրուի և խնդրագրերն անգոր կը մնան... Վերջգրուած ժողովի մէջ Անանիկովն ասած էր թէ մեր տէր Մարտիրոսն մի հազար մանէթ ուսումնարանական փող ստացած է և ծածկեր է. այս մասին տէր Մարտիրոսն բողոք է տուած հաշտարար դատաւորին, և նա վճռած էր, որ Անանիկոյն երկու ամիս բանտարկուի, իսկ որովհետև նա բացակայ էր, վասնորոյ պէտք է բացատրութիւն, տեսնենք ինչ նետանք կունենայ. կարծեմ որ չպէտք է կարողանայ արդարանալ *):

Սինօզի հրամանն ստանալուց յետոյ տէր Յովսէփը Յունուարի 3 ին 1879 ամի մի ընդարձակ յայտարարութիւն է ուղարկում Սինօզին, որի մէջ նախ յիշում է թէ ինչպէս ինքն 1870 թուից սկսած կարողացել էր օգտակար լինել Արղութեան կտա-

*) Կար. Անանիկովը, տէր Յովսէփի հակառակորդներից մէկը, իւր կազմել տուած քմահաճոյ բողոքագրերը տէր Յովսէփի դէմ քաղաքի ստեղծանքների և դէպուտատարանի ծառաների ձեռքով ուղարկում էր խանութներն և գոտով, ձեռ ու շարքով, մտրակ քաշել տալով ստորագրել էր տալիս: Այդ մարդն յետոյ ծանր կերպով իւր արարքների վերայ զղջումն յայտնեց, տէր Յովսէփին մեղայ եկաւ և ներումն ստացաւ: Նոյնպէս ներումն ստացաւ Արղ. օր. դպրոցի ուսուցիչ Հայրապետ (յետոյ տէր Գարեգին) Դուկասեանց, որի մասին տէր Յովսէփը նոյն Դեկտ. 26 ի նամակի մէջ գրում է. «Դուկասեանցն մի նամակ էր գրել ինձ և իւր զղջումն յայտնելով ինչպէս էր ներողութիւն և հաշտութիւն, որոյ մասին երկար մտածելով և քահանայական կոչումս ի նկատի ունենալով, հաճութիւն ցայց տուի»:

կի և օրիորդական դպրոցի գործին և փոխանակ շնորհակալութիւն և արիտուր ժառանգելու ենթարկուած է եղել «տարապարտ զրպարտանաց և հրապարակական նախատանաց ոմանց գրգռամիտ և շահասէր անձանց»: Ապա յիշեցնում է Սինօզին, որ 1878 թուին նոյն Սինօզի տնօրէնութեամբ, Կարապետ վարդապետ Այվազեանցն Աղէքսանդրապօլ գալով ընտրել տուեց Արղութեան դպրոցի համար նոր հոգաբարձուներ, որոնց մէջ կան և այնպիսիները, որ մի քանի տարի շարունակ վարում են այդ պաշտօնն և վայելում են դպրոցի արդիւնքներին և գոյութեանն աւելի հաւատարիմ անդամների համբաւ. ի վերջոյ յայտնում է Սինօզին որ ինքը վերջին երեք տարիներում դպրոցի հոգաբարձութեան մէջ չգտնուելով, անտեղեակ է շատ բանի և դժուարանում է առանց հոգաբարձութեան նախընթաց գիտութեան հաղորդել հաւաստի տեղեկութիւններ. նա քաշում է գլխաւորապէս այն պատճառով, որ չլինի թէ նորից իւր դէմ «անբաւականութիւն և անտեղի բարբանջմունքներ» հանեն, նմանապէս և Սինօզի դէմ: Այդ ամենն աչքի առաջ ունենալով, տէր Յովսէփը խնդրում է Սինօզին, որ կարևոր տեղեկութիւնները նա պահանջէ հոգաբարձութիւնից տեղական հոգևոր կառավարութեան միջոցով, ինչ ինքն իւր կողմից հաղորդում է Սինօզին միայն այն ինչոր իրեն է յայտնի:

Անն թէ ինչպէս էր ձևակերպում նա դպրոցի շահերի պաշտպանութեան ծրագիրն իւր յայտարարութեան մէջ, որով նա գիւրացուցել է ամեն մի փաստարանի գործ.

ա. Սէնատն 1874 Փետր. 27 ի վճռով ճանաչել է եկեղեցու իրաւունքն և վերադարձուցել է ժառանգների բողոքը պալատին վերաքննելու համար. պալատն 2 ին Հոկտեմբերի վճիռը կրեց անհետեանք թողնել ժառանգների բողոքն այն պայմանով, որ եթէ նոքա պահանջ ունին, դիմեն Երևանու դատարան և բողոք ներկայացնեն կոնսիստորիայի դէմ. պալատի այն վճռից զժգոհ մնացած ժառանգները դիմեցին Սէնատ, որն 30 ին Սեպտեմբերի հաստատեց պալատի վերջին վճիռը:

բ. Կտակի 11 ըր յօդուածը կարելի չէ անգործադրելի ճանաչել իբր այն պատճառով, որ գոյութիւն չունի այն առարկան, որի օգտին կտակում էր 40 հազար ռուբլի. միթէ կարելի է անգոյ համարել «եկեղեցու հոգևոր իշխանութիւնը» որին Սէնատը իւր 1874 Փետր. 27 ի վճռով տէր ճանաչեց, հիմնուելով թէ օրէնքի և թէ կտակի 11 ըր յօդուածի վերայ:

գ. իշխ. Արղութեանն իւր կտակի 10 ըր յօդուածով որոշել է գումար իւր սկզբնաւորած եկեղեցու շինութիւնն աւարտելու

համար, և անմիջապէս հետեւեալ 11րդ յօդուածով աւանդում է 40 հազար ուրբի նոյն եկեղեցու գաւթում օրիորդական դպրոց շինելու. ըստ այսմ այն եկեղեցին, որ իրաւունք ունէր ստանալու իրբե նուէր 2200 ուրբի, իրաւունք ունէր ստանալու և իւր գաւթում շինուելիք աստուածահաճոյ հաստատութեանը կտակած գումարը, ինչպէս կարելի է անգոյ համարել այն եկեղեցին, որ ներկայումս էլ կանգուն կայ:

դ. եթէ կտակարարն իւր վաղահաս մահուան պատճառով անկարող եղաւ բանալ իւր «վաղափափազ աստուածահաճոյ հաստատութիւնը» սակայն իւր կենդանութեան ժամանակ արդէն սկսել էր հոգալ բացման մասին, ինչպէս ապացուցանում են զըրաւոր փաստերը, որոնք են, ա, վեհ. կաթողիկոսի կոնդակը 4ին Յունիսի 1878 ամի թ. 22 թ. դպրոցի տեղի որոշման և շինութեան սկսելու մասին. բ. Յունիսի 25ին Աղէքսանդրապօլու առաջաւորների կազմած արձանագրութիւնը նոյն առարկայի մասին. գ. արհեստաւորների հետ կոած դաշնագիրը դպրոցի շինութիւնն սկսելու և իշխ. Արղութեանի հաշուեց ծախքի մի մասն ստանալու մասին. այս ամենը կատարուած են հանդ իշխ. Արղութեանի կենդանութեան ժամանակ:

և ե. այն շինութիւնն այժմ էլ կայ նոյն եկեղեցու գաւթում, 1868 թուին կարելի չէր աւարտել նորա շինութիւնը, ինչպէս հաստատում է ամբողջային ինժեներական իշխանութիւնն իւր վկայագրով 22ին Մարտի 1873 ամի թ. 260.

Այսպիսի հիմունքների վերայ էր կարծում տէր Յովսէփը գնել Արղ. օր. դպրոցի շահերի պաշտպանութեան գործը գատարանում: Վեհ. կաթողիկոսին զեկուցուեցաւ այդ յայտարարութիւնն և նա պատուիրեց յանձնել տէր Յովսէփին անձամբ Երևան գնալ և հոգալ ինչոր պէտք է: Հարց ծագեցաւ թէ ո՞ւմ ծախքով կամ ի՞նչ միջոցներով պիտի հոգացուի գործն: Այդ առթիւ հոգաբարձութեան հետ տեղի ունեցած բանակցութիւնն ապարդիւն եղաւ: Հեռագրների փոխանակութիւնից երևում է, որ հոգաբարձութիւնն անտեղի արգելքներ է յառաջացնում, թէ ինչո՞ւ, յայտնի չէ: Ահա թէ ի՞նչ է գրում տէր Յովսէփն իւր որդուն 1879 Յունուարի 10ին տուած հեռագրով. նա ասում է:

«Հոգաբարձուներն հրաժարուեցան գնալու կամ կարգադրութիւն անելու ծախքերի մասին. ուրեմն կարևոր է ուրիշ մի հաւատարմատար նշանակել, միևնոյն ժամանակ խնդրել յետաձգումն, և կրկին հեռագրել (հոգ.) կառավարութեանը, որ մի հոգաբարձուի ուզարկէ. եթէ ոչ, թող կառավարութիւնը ծանուցանէ հասարակութեանը խորհրդակցելու. իսկ եթէ չյետաձգուի և

վճիւ դրուի, իսկ այն հեռագրեցէք ինձ գատաստ. պալատում պաշտպանելու միջոցների մասին:»

Այս հեռագրից երևում է, որ հոգաբարձուները միանգամայն հրաժարուել են Երևան գնալու կամ տէր Յովսէփին ծախք նշանակելու, գուցէ նոքա և ուրախ էին, որ այդպիսով գործը կը վտանգուի և իրենք վերջապէս կը կարողանան ասել, թէ տէր Յովսէփն Արղութեան կտակի և օրիորդական դպրոցի համար ոչինչ չէ արել: Նոցա այդպիսի տրամադրութեանն, երևի, նպաստում էր և այն, որ տեղական հոգևոր իշխանութիւնը թոյլ էր և համակերպում էր: Բայց այդ աւելի զարգանում էր մի քանի հոգաբարձուների կողմից, որոնք իրենց շահի և փառասիրութեան համար դո՛ւնում էին հասարակաց օգուտը:

Այն ժամանակ մեր տիրապահ Աղէքսանդրապօլում կային հոգաբարձուներ, դէպուտատներ և նոցա ձայնակից ուսուցիչներ, որոնք ձարպիկութեամբ տիրել էին հասարակաց մտքի վերայ և ջուրը պղտորում էին իրենց համար լաւ ձկներ որսալու: Այդպիսիներն այն միտքն էին տարածում, թէ Արղութեան գումարի դատը տարուած է և տէր Յովսէփն օգտակար ծառայութիւն չունի այդ գործում: Վերջին հեռագրից յետոյ տողերիս գրողն ստիպուեցաւ Վաղարշապատից Երևան գնալ և անձամբ տեղեկութիւն առաւ, որ դատական նիստը պիտի յետաձգուի մինչև Մարտ ամիսն այն պատճառով, որ ծանուցագրերը տակաւին միքանիսին յանձնուած չեն: Այնուհետև վեհ. կաթողիկոսը կարգադրեց, որ Արղ. կտակի գործը տէր Յովսէփից գատ ոչ ոքի չյանձնուի, և այդ մասին եղաւ պատշաճաւոր տնօրինութիւն: Չնայելով այսպիսի տնօրինութեանը, տէր Յովսէփը հրաժարուեցաւ յանձն առնելու գործի պաշտպանութիւնը, թէև այդ եղաւ հակառակ նորա կամքիս, որովհետև նա երբէք չէր ցանկանում վեհ. հայրապետի հրամանին զէմ գնալ: Բանից դուրս եկաւ, որ այդ ժամանակ վեհ. կաթողիկոսն ինքը մեծ ցանկութիւն է ունեցել տեսնել տէր Յովսէփին Էջմիածնում անկախ Արղ. օր. դպրոցի գործից: Յունվարի 23ին որդին գրում է տէր Յովսէփին.

«Կաթողիկոսը մասնաւորապէս ցանկացել է քեզ տեսնել, այդ պատճառով և պնդում էր, որ դու գայիր. բայց շատ լաւ արիւր, որ Արղութեան գործի առթիւ հրաժարուար գալու, իսկ այլ դէպք կը պատահի, այն ժամանակ կուգաս»:

Աչքի առաջ ունենալով, որ Միսօղի կողմից նշանակուած է եղիլ գործը պաշտպանելու համար Ռուբէն Զալալեանցը, Յունուարի 29ին նա գրում է հօրն հետեւեալ տեղեկութիւնները.

«Արդութեան գործի կողմից, ասում է նա, այսքան միայն յայտնի է, որ Ռ. Զալալեանցն իւր ժամանակին ներկայացել է դատարան և իւր թուղթը մատուցել է. բայց որովհետև Պրօկօպէնկօն դեռ եկած չէ եղել և ստորագրութիւն էլ չէ եղել ծանուցազրի վերայ, ուստի նիստը յետաձգել են. թէ երբ է լինելու, յայտնի չէ: Քու գալուդ կարևորութիւնն այն ժամանակ կըլինի. երբ Պրօկօպէնկօն ինքը գալու լինի, այսպէս է ասել Զալալեանցը:»

Ապա նա գրում է հօրը.

«Քու հրաժարուելուդ վերայ կաթողիկոսը նեղացած է եղել ոչ թէ յատկապէս այդ գործի պատճառով, այլ նորա համար, որ ինքն ուզում էր քեզ տեսնել: Սկիզբն երբ դեռ քեզ հեռագրով կանչած չէին, ես մօտն էի. ինձ ասաց, որ հայրդ անպատճառ պիտի դայ. ասացի. վեհափառ Տէր, տարածամ է, նորան շատ նեղութիւն կըլինի. եթէ կարելի է, այս անգամ նորան ազատ կացուցէք. ասաց, Չէ, առանց նորան չի լինիր, և պատուիրեց, որ հեռագրով կանչեմ. ես պատասխանեցի, որ լաւ է յառաջ ետևութեանից պատասխան առնենք, յետոյ ես կը գրեմ. նա յօժարացաւ և այնպէս մնաց. երկ' օր յետոյ քո յայտարարութիւնդ եկաւ. և առանց ինձ հարցնելու ուղղակի հեռագիրը տուել և կանչել էին քեզ. յետոյ երբ քու պատասխանդ հոգևոր կառավարութեան կողմից հեռագրով եկած էր, այն միջոցին ես էլ զնացի վեհարան խօսելու. Ստեփան աղան պատմեց, որ դու հրաժարուել ես դալու, բայց միևնոյն ժամանակ ասաց, որ վեհափառն այդ հրաժարուելուն վերայ չի ցաւիր, բայց չզալուն կըցաւի, որովհետև առանձին տեսնել կուզէր: Այնուհետև բանը լսեց. ես մի երկու անգամ ևս պատահել եմ այնուհետև կաթողիկոսի մօտ, բայց նա էլ խօսք չարաւ այդ բանին. և ամեն անգամին էլ յատուկ և յատուկ հարցուցած է քո մասին, և պատուիրած է, որ քեզ իւր ողջոյնը գրեմ: Այդ Արդութեան գործի վերայ սկիզբն ինքը շատ անտարբեր էր. մինչև անգամ ասում էր. Աստուած տայ ժառանգները տանեն. Աղէքսանդրապօլցոց տեղն է. անոնք քու հօրդ աշխատանքը չզնահատեցին, և արժանի չեն, որ վայելեն...»

Երկրորդ անգամ նիստը նշանակուեցաւ Մարտ ամսին. տէր-Յովսէփն հիւանդութեան պատճառով չկարողացաւ գնալ. գործի պաշտպանութիւնը դարձեալ Ռ. Զալալեանցի վերայ մնաց, որը Մարտի 1ին նամակով խնդրեց և ստացաւ տէր Յովսէփից մի քանի կարևոր պատճէններ: Սակայն այս անգամ էլ նիստ չկայացաւ, և յետաձգուեցաւ մինչև Մայիս: Որքան դատական նիստն Երևանում յետաձգուեմ էր, այնքան աւելի տէր Յովսէփի հակառակորդներն

Աղէքսանդրապօլում թե էին առնում նիւթելու նորա դէմ նորանոր չարիք, որպէսզի նորա առջև գործելու ճանապարհները փակուած լինին: Բողոքներ սարքել և կաթողիկոսին ղրկել, լրագրական թղթակցութիւններ յերիւրել արբանեակների ձեռքով և հայ թերթերի միջոցով հասարակական կարծիքը մոլորեցնել, քաղաքի մէջ օրը մի սուտ յօրինել և սրճարաններում ու ժողովարաններում զրպարտութեան և բամբասանաց նիւթն առատացնել և այլն այն ստոր միջոցներն էին, որոնք սակայն անօր գտընուեցան տէր Յովսէփի անօրինակ համբերութեան առաջ և չկարողացան ամենևին մտասել նորա բարի համբաւին և ունեցած հեղինակութեանը: Վերջապէս դիմեցին նոքա և վերջին կարի անարդար և վերին աստիճանի ստոր միջոցին, որով միայն իրենք խայտառակուեցան: Թողնենք որ այդ պատմէ տէր Յովսէփի որդին իւր հօրը գրած նամակով մէկին մայիսի 1879 ամի: «Արժանահաւատ աղբիւրից տեղեկացայ, գրում է նա, որ այդ տեղից մեր բարեհոգի քաղաքացիք խնդիր են ուղարկել գլխաւոր կառավարութեանն և խնդրել են, որ քեզ հեռացնեն այդքաղաքից վարչական կարգաւ իբրև մի խռովարար անձին: Որքան և անհաւատալի է ինձ այս լուրը, բայց կասկածելու բան չէ. որովհետև այդ անարդար գործը կատարել պրծել են մեր քաղաքացիք, ուրեմն այդ մի իրողութիւն է. ես միայն զարմանում եմ, որ այդ բանն այնպէս է եղել, որ քեզանից ծածուկ է մնացել, կամ եթէ զիտես, բանի տեղ դրած չես. զարմանում եմ նաև այն բանի վերայ, որ, այդպէս ծածուկ եղած գործը, այդ անարգ ամբաստանութիւնը, մի քանի մարդիկ կարողացել են գործել յայնուն հասարակութեան, որն ես հաւատացած եմ որ այդ բանին երբէք համակրելու չէր և չպիտի համակրէ, և եթէ իմանայ էլ, պիտի մեծ խռովութիւնների ասպարէզ տայ...»

Կասկած չկայ, որ գլխաւոր կառավարութիւնը իւր կողմանէ ծածուկ տեղեկութիւններ է հաւաքելու, գուցէ նահանգապետի կամ գաւառապետի ձեռքով այդտեղ հարցմունքներ է անելու և այլն. վասնորոյ շտապում եմ յայտնել քեզ, որ այդ չարիքի առաջն առնելու միջոցները մտածես, և մի քանի մարդկանց անիրաւ խորհուրդը ի դերև հանելու զգուշութիւնները ձեռք առնես օր յառաջ: Այս առաւել հարկաւոր է, մանաւանդ այն պատճառով, որ ինչպէս տեղեկացած եմ, նահանգապետը շուտով գալու է այդտեղ, գուցէ, իթիւս այլոց, այդ մասին էլ գաւառապետից կամ տեղւոյդ առաջաւորներից հարցմունքներ անելու լինի...»

Նոյնպէս մի արժանահաւատ աղբիւրից լսեցի որ իբրեթէ ծածուկ զրպարտութիւն է եղել այստեղի պրօկօրօրի հետ (իմասի-

նօղի), և սա իւր կողմից իբրթէ մերժած է բոլորովին այդ բողոքի հիմնաւորութիւնն ու վկայած է, թէ ընդհակառակը քուօգուտներդ և այլ ծառայութիւններդ շատ նշանաւոր են թէ քաղաքի և թէ հայոց հասարակութեան համար. ցոյց է տուած եղիլ և այն պատճառները, որոնցից կարող էր ծագել այդպիսի մի բողոք մի քանի անձանց կողմից: Միով բանիւ այդ գործին կառավարութիւնն ինքն էլ շատ զգուշաւոր ընթացք է տուել, ուրեմն բողոքի զօրութիւնը մեծ չէ»:

Վշտացած սրտով է հաղորդում որդին իւր հօրն այս տեղեկութիւններն և դայրացած է քաղաքացի ստոր մարդիկների այդ անտեղի քայլի վերայ: Համոզուած, որ եթէ աէր Յովսէփն Աղէքսանդրապօլին ոչ մի այլ ծառայութիւն արած չլինէր, միայն Արդ. դպրոցի բացումը և Արդ. կտակի անձնուէր պաշտպանութիւնը բաւական էր, որ արժանի ճանաչուէր երախտագիտութեան իւր համաքաղաքացւոց կողմից, տողերիս գրողն արգար դայրոյթով վառուած էր մոլորեալների դէմ: Չէ որ Աղէքսանդրապօլու և նորա գաւառի ամեն մի անկիւնում պահուած են տէր Յովսէփի բեղմնաւոր գործունէութեան բարի յիշատակները, որոնք և խօսում են նորա մասին: Համեստութիւնն արգելում է այստեղ միառմի հանդէս բերել այդ ամէնը, թողնելով, որ անաշու պատմութիւնը խօսի ապագայում: Բայց և այնպէս այդ գիտակցութիւնն էր թելադրում տողերիս գրողին նոյն նամակի մէջ այսպէս գրել իւր հօրը: «Մահացու մեղքերի թիւը ոչ թէ կօթն է, այլ ութը. ութերորդ մահացու մեղքն է բարերարութիւնն և աշխարհաշինութիւնը: Դու այդ մեղքը գործելու համարձակութիւնն ունեցել ես, գրում է որդին հօրը, ուրեմն գորա դատաստանն էլ մարդիկն իրանց ձեռքովն են տեսնում նախապէս: Դու շինէ Աղէքսանդրապօլը. Դու տքնիր Աղէքսանդրապօլու ուսումնարանների վրայ, դու հայթհայթէ Աղէքսանդրապօլու աղքատները խնամելու նիւթական միջոցներ, Դու կանգնէ փլատակների տակից վանքեր, մեռեալ ու անգործ ժողովրդի միջից հոյակապ եկեղեցիներ ու կրպակներ. Դու գրկէ քու զաւակներիդ օրական հանգիստ կեանքից ու ապահովութիւնից: Դու մաշէ Գուանձդ գիւղերի ու գոհիկների մէջ հասարակական բարեկարգութիւնն ու շինութիւնը պահպանելու համար. Դու մտածէ Աղէքսանդրապօլու ամենայն հասարակական խնդիրների վերայ ջերմեռանդութեամբ և խրատէ որդոցդ նոյնը անելու. Թող այդ Գու գգուածդ ու սնուցածդ Աղէքսանդրապօլը մատնութեամբ ու ապերախտութեամբ հատուցանէ քեզ փոխարէնը, իսկ երբոր Աստուծոյ սրտմտութեան խարազանը արդարապէս կը ձաղէ Գու

այդ մատնիչներիդ, երբ նոցա խմած ջուրը օձի կաթ կը դառնայ, երբ նոցա կերած հացը հուր ու ծծումբ, երբ նոցա երկիրը կը ցամաքի և նոյն ամեն մէկի անմեռ որդը կը սկսի կրծել նոցա սիրտն, այն ժամանակ աղօթէ առ Աստուած, որ թողու նոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»:

Այս նամակի տեղեկութիւններն առժամ մի տէր Յովսէփին վերջովեցին, բայց նա աւելորդ համարեց միջոցների դիմել, վստահ լինելով իւր անմեղութեան վերայ: Կովկ. գլխ. կառավարութիւնը բարեբաղդաբար ընթացք չտուեց քաղաքացւոց բողոքին, չգտնելով տէր Յովսէփի գործունէութեան մէջ ֆրասակար մի դիժ:

Մինչ այս մինչ այն՝ Երևանու նահանգական դատարանում վերջին անգամ նշանակուեցաւ Արդութեան կտակի գործիքնութիւնը Մայիսի 31ին: Վեհ. կաթողիկոսն հրամայեց, որ տէր Յովսէփն անյապաղ գնայ Երևան, տանելով իրեն հետ ամբողջ վիճողական գործը, և հրամայուեցաւ Աղէքսանդրապօլու հոգևոր կառավարութեանը տալ տէր Յովսէփին ճանապարհային ծախք վիճակային արդիւնքներից:

Այս կարգադրութիւնն յայտնուեցաւ տէր Յովսէփին 1879 Մայիսի 27ին հոգևոր կառավարութեան թ. 654 հրամանագրով և յանձնուեցաւ նորան վիճ. արդիւնքներից ճանապարհածախքի համար յիսուհ ուրբի: Նոյն իսկ Մայիսի 27ին տէր Յովսէփն ուղևորուեցաւ դէպի ս. Էջմիածին և ներկայացաւ վեհ. կաթողիկոսին, որը տուեց նորան իւր հրահանգները: Այնտեղից նա անցաւ Երևան և ձեռնամուխ եղաւ կարևոր պատրաստութիւնների, 31ին ներկայ գտնուեցաւ դատական նիստին դատը պաշտպանում էր երդ. հաւատ. Սեն. Արծրունին, նահ. դատարանը ժառանգների բողոքը քննեց և թողեց առանց հետևանքի, հաստատելով և վաւերացնելով կոնսիստորիայի իրաւունքները 40 հազար ուրբու նկատմամբ: Այդ վճռի մասին տէր Յովսէփն անմիջապէս հեռագրեց իւր որդուն հետեւալը.

«Դատարանն իշխան Արդութեանի ժառանգների պահանջը մերժեց, հաղորդեցէք կաթողիկոսին և ում որ պէտք է. վաղը կուգամ»:

Թէև այս դատից յետոյ ժառանգները բողոքեցին և Թիֆլ. դատաստանական պալատը, բայց այնտեղ էլ նոցա բողոքը թողնուեցաւ առանց հետևանքի 1880 Հոկտ. 21ին: Այսպիսով յօգուտ Աղէքսանդրապօլու հասարակութեան վերջացաւ Արդութեան կըտակի վիճելի գործը, որ տեւեց մօտ տասն տարի:

Տասնեւչորս հազարի ստացումը

Մի անգամ ևս տէր Յովսէփին վիճակուեցաւ մտնել Արդու-
թեան կտակի գործի մէջ դարձեալ Վեհ. կաթողիկոսի յանձնա-
բարութեամբ: Այդ էր 1888 ամառն:

Յայտնի է, որ կտակեալ քառասուն հազար ուրբլի գումա-
րի միայն 26 հազարն յանձնուեցաւ օր. դպրոցի հոգաբարձու-
թեանը, իսկ մնացեալ 14 հազար ուրբլին հասնելու էր իշխա-
նունի Սոփիայի մահից յետոյ, երբ վաճառուէր տունն և մաս-
նատրուէր դպրոցին և այլ ժառանգներին:

Իշխանունի Սոփիա Աւետիքեան վախճանեցաւ 1887 Ապ-
րիլի 22ին: Թէ Շալիկովնայի որբերի հաւատարմատարներն և
թէ Արդութեանի այլ ազգականներն անմիջապէս միջամտեցին
օրինական ճանապարհով և արգելք էին ուղում լինել կտակա-
կատար Սահակեանին ի վաճառ հանել տունը: Այդ միջամտու-
թիւններէից խրտնելով, ոչոք չէր մօտենում տունը գնելու, իսկ նո-
քա, որոնք մօտենում էին, աւելի պակաս գին առաջարկում քան
ինչոր գնահատել էր իշխան Ղահրաման իւր կտակի մէջ: Որպէս-
զի այդ անտեղի միջամտութիւնների առաջն առնի և թոյլ չտայ
տան գինն ընկնելու, կտակակատար Սահակեանն, շտապում է
նախ տունն իւր կնոջ անուանն հաստատել և ապա բանակցու-
թեան մտնել թէ ժառանգների և թէ տէր Յովսէփի հետ, որին
նա ճանաչում էր իբրև հաւատարմատար հոգևոր իշխանութեան
կողմից: Յովսէփն յայտարարութեամբ 7ին Յունիսի 1880 ամի
թ. 162 դիմեց Վեհ. կաթողիկոսին և բացատրելով իրերի վիճա-
կը, խնդրեց նորա տնօրէնութիւնը: Տ. Մակար կաթողիկոսը նոյն
ամսի 11ին հրամայեց Սինօզին՝ կարգադրել, որ տէր Յով-
սէփին յանձնուի գնալ Թիֆլիս և կտակակատար Սահակեանից
ստանալ 14 հազար ուրբլի: Սինօզը 15-ին Յունիսի 1885 ամի
թ. 2268 հրամանագրով պատուիրեց տէր Յովսէփին կատարել
յիշեալ յանձնարարութիւնը, միևնոյն ժամանակ հրամանագրե-
լով Արդ. օր. դպրոցի հոգաբարձութեանն տալ տէր Յովսէփին
ճանապարհի և այլ կարևոր պէտքերի համար ծախս և այլ դիւ-
րութիւններ: Հոգաբարձութիւնը Յունիսի 28ին որոշեց տալ
միանուագ երկուհարիւր ուրբլի «ի ծախս ճանապարհին կեցու-
թեան Ձերոյ ի Տպիսիս զմի ամիս հանդերձ ծառայիւ միով» և
եթէ յետոյ հարկաւորի փաստարանի և այլ պէտքերի, որոնք

կարելի չէ նախատեսնել, այդ մասին հոգալ, երբ տէր Յովսէփը
Թիֆլիսից յայտնելու լինի: Բանն այս է, որ այդ ժամանակ
տէր Յովսէփն ինքն հիւանդ էր և հոգ. իշխանութիւնից արձա-
կուրդ էր առել երկու շաբաթ հանգստանալու Հառիճայի վան-
քում:

Մինչև յայտնուեցաւ տէր Յովսէփին Վեհ. կաթողիկոսի հրա-
մանը, մինչև բոլոր հոգացողութիւններն ու ձեականութիւնները
կատարուեցան, եղաւ Օգոստոս ամսի 10, երբ հնարաւոր եղաւ
նորան ճանապարհ ելնել թէև վատաոզ զրութիւնը թոյլ չէր
տալիս նորան այդ տօթագին ամսին Թիֆլիս գնալու: Օգոստոսի
12ին հասաւ նա Թիֆլիս և ձեռնարկեց իրեն ստանձնած գործն
հոգալու: Թողնէնք, որ ինքն, տէր Յովսէփն հաշիւ տայ մեզ իւր
նամակով, որ գրել է Թիֆլիսից հոգաբարձու Յովհաննէս Բաբայ-
եանին նոյն տարուայ Սեպտեմբերի 21ին:

«Մի քանի օր տօթագին եղանակի ծանր և անտանելի ազ-
դեցութիւնից հաւի ձագի պէս թապլտկելով անկարող էի դուրս
գալ, և ապա փոքր ինչ ընտելանալով զհետ եղէ գործոյն զրու-
թեան, քաղցի գանազան տեղեկութիւններ և պատճէններ, խոր-
հրդակցեցայ ոմանց բարեմիտ և հասունամիտ անձանց հետ, լը-
սեցի կողմնակի ձգտումներ և յուզիչ փաստաւոր կարծիքներ, այս
ամէնը մի երկու շաբաթ խլեց ինձանից. և ապա վճռեցի մտա-
նել վաղճանական բանակցութեան պ. կտակակատար Սահակովի
հետ, այնպէս որ հակառակորդների բոլոր շարժումները, բողոք-
ները և ձգտումները մնաց իւր պատասխանատուութեան վերայ, և
երեք տարի ժամանակաւ դպրոցը ստանայ իւր հասանելին. հան-
դուցելոյ տունը թէև այդ վէճերի կրճատման առթիւ հաստատ-
ուած է արդէն կնոջ վերայ, բայց և այնպէս չաժէ ներկայումս
այն ինչոր գնահատել է կտակարարն... ի վերջոյ այս ամէնին
վաղճան զնելոյ և պայմաններն կանոնաւորելու համար հարկա-
ւոր էր ինձ օրինական հաւատարմագիր Սինօզից, որ կարողա-
նամ փոքր և աւագ նօտարաց մօտ թղթեր հաստատել, ուստի
դիմեցի Սինօզին այդ մասին. երեք շաբաթ սպասելուց յետոյ
հազիւ ստացայ, այն էլ կարապետիս և միւսների քանի հեռա-
դրեր և նամակներ գրելուց յետոյ, անաւասիկ անցաւ այստեղ
լինելուս վեց շաբաթն, և վեհափառին հանգամանօրէն գործի
զրութիւնը ծանուցանելուց և հաճութիւնը առնելուց յետոյ վեր-
ջացուցի մեր պայմանն երեք տարի ժամանակ, որ Սահակովի
տան և հինգ հազար ուրբլի վճարէ դպրոցին, ամբողջ տունն
էլ զբաւական մնայ. այսօր գրել տալու ենք թղթերն օրինական
կարգաւ, աւագ նօտարին հաստատել տալու. երկու շաբաթ

ժամանակ սոյն վերջինն է պահանջում, որ ամէն օրինական տեղեկութիւն հաւաքէ և յետոյ հաստատէ. ինձ էլ անհրաժեշտ է մնալը այս տեղ, որ հաստատելուց յետոյ ստանամ և իմ ապահովագիրս էլ տամ Սահակովին *):

Սոյն նամակի բովանդակութեամբ տէր Յովսէփն յայտարարութիւններ ուղարկեց պաշտօնապէս նոյն Սեպտ. 21ին հոգաբարձութեան նախագահ Աղուանեանց Գրիգորիս եպիսկոպոսին, խնդրելով ուղարկել այլևս մի ամսուայ ծախք, որը սակայն չստացաւ: Ապա 19ին Դեկտեմբերի յայտարարութիւններով հաղորդեց Սինօզին, Հոգևոր կառավարութեանն և հոգաբարձութեանը գործի վերջաւորութեան մասին, ներկայացնելով Սինօզին այն դաշնագիրը, որ կազմուած և օրինական ճանապարհով հաստատուած էր տէր Յովսէփի և տիկին Ռամարայ Յարութիւնեան Սահակեանցի մէջ իբրև գրաւագիր այն տան, որի գնից հասնելու էր դպրոցիս 14 հազար ուրբլին: Այդ գրաւագրով էր, որ դպրոցն երեք տարի յետոյ ստացաւ 15 հազար ուրբլի: 20ին Յունուարի 1883 ամի տէր Յովսէփն ստացաւ Սինօզից թ. 164 գրութիւնը, որով վերջինս ապահովում էր նորան գրաւագրի ստացման մասին:

Այսպէս վերջացաւ Արդութեան կտակի վիճողական գործը գէթ այն մասով ինչ որ վերաբերում էր օրիորդական հոգևոր դպրոցին: Ղահրաման իշխանի կտակով որոշած քառասուն հազար ուրբլին ամբողջացած հասաւ դպրոցին նորա մահից քսան տարի յետոյ միայն:

Այստեղ հարկ է համառօտակի յիշել թէ ինչ ծախս նստաւ դպրոցին վիճողական գործը, որ հանգամանքների բերմամբ ծան-

*) Հաղորդում է նոյն նամակով և իւր անձնական նեղութիւնների մասին. «Բազաք մտած օրից իջեանած եմ հիւրանոցներում օրական մի մի ուրբլի վճարով և դանազան այլ պահանջները կատարելով, միով բանիւ թալանճութիւն. կայսեր Դաշտեան պատճառաւ ամենայն ինչ թանկացեր է, ուստի հարկադրեցայ այսօր Աղէքսանդր Եակովլիչի հիւրանոցից դուրս գալ և ուրիշ տեղ վարձել ուրիշ հիւրանոցում թէև անյարմար. ինձ ձեռնտու էր մէկ խնի անկիւնում տեղաւորել քան թէ այսպիսի նեղութիւններ կրել, բայց ոչ ոտներիս ուժը, ոչ առողջութիւնս և ոչ պատուախրութիւնը թոյլ էին տալիս, մինչև անգամ մեր քաղաքացիք արհամարհում էին. լաւ էր որ երկու շաբաթ յառջ ծառայիս էլ ճանապարհ դրի, այժմս մնացած եմ միայնակ. այսքան դժուարութիւններ կրելով և այսքան չափաւոր խնայողութիւն գործ գնելով դարձեալ մինչև հիմայ երկու հարիւր վաթսուն ուրբլուց աւելի ծախս եմ արած. այսուհետեւ էլ տեսնենք. Է՛հ մէկ հոգեկան փափագ էր թէ սկսած եմ վերջացնեմ. եթէ ոչ ինչ գնահատութիւն մեր Աղէքսանդրապօլում և մեր հոգևոր իշխանութեան մօտ. այս եւս անցանկէ:

րացած էր միմիայն տէր Յովսէփի վերայ:

1870 թուից մինչև 1888 թ. ընդամենը ծախս է եղել 2400 ուրբլի: Այդ գումարի մեծ մասը, 1615 ո. 10 կ., ինչպէս կարգում ենք հոգաբարձութեան հաշուի մէջ*), ծախսուել է 1870—1874 Յունուարի 1, այսինքն այն ժամանակամիջոցում, երբ գործն իւր տաքնապալից և վտանգաւոր շրջանումն էր և պահանջում էր բուռն հոգացողութիւն: Այդ 1615 ո. գումարի մէջն է նախ՝ Սամարսկուն վճարուած 700 ո. և Ս. Պետերբուրգում տողերիս գրողի ձեռքով ծախսուած 100 ո. 87 կ.: Մնացեալ 800 ո. մեծ մասով ծախսուել է 1872 թ. Թիֆլիսում թէ դատաստանական այլ և այլ անհրաժեշտ վճարների, թէ տեղական փաստաբանի, թէ գրագրների, թէ փօշտի ու հեռագրի և թէ վերջապէս տէր Յովսէփի ճանապարհորդութեան և 5—6 ամսուայ կեցութեան վերայ: Երբ դատական գործն 1874 թ. շարունակուեցաւ Թիֆլիսում և ապա 1879 թ. անցաւ Երևան, այդ միջոցներին ծախս եղաւ մօտ 400 ո., իսկ 1888 թ., երբ պէտք էր վերջացնել 14 հազարի ստացման գործը, ծախսուեցաւ 380 ո. երկու ամիս ու կէս Թիֆլիզում բաւական ծանր պայմանների մէջ ապրելու, ճանապարհորդութեան և այլ պաշտօնական անհրաժեշտ ծախքերի համար: Ըստ այսմ՝ բոլոր գումարը մօտ 2400 ո.

Այնպիսի բարդ և վտանգաւոր վիճողական գործի պաշտպանութեան վերայ եղած այս յոյժ չափաւոր ծախքն այնուամենայնիւ շատ դժուարութեամբ ու արտունջներով էր հոգացուած: Այդ դնում էր տէր Յովսէփին շատ նեղ ու անյարմար վիճակի մէջ: Հակառակ բարեկամների ու մերձաւորների խորհրդին ձեռնթափ լինել և հեռանալ, նա իբրև երկայնամիտ մարդ, լուրթեամբ տանում էր նիւթական նեղութիւնն ու զրկանքները. «Իմ պարտքս է, ասում էր, բարոյական պարտքս. ինձ հեռանալ ներելի չէ. ես հեռանամ, գործը կը տուժէ, և միայն չար մարդիկ պիտի ուրախանան. ինչպէս հեռանամ»: Եւ յօժարակամ սիրով տանում էր իւր խաչն, ինչպէս սովոր էր բոլոր իւր կեանքում:

Բայց տիրապահ Աղէքսանդրապօլում կային մարդիկ, որոնք թուի թէ բոլորովին ժխտել կամենալով տէր Յովսէփի յանձնառած նիւթական և բարոյական զրկանքները, չէին քաշուած այն միտքն արծարծելու, թէ նա միայն իւր շահի համար է հետեւում կտակի գործին: Թէ ի՞նչ է այդ շահը, մինչև օրս էլ պարզ չէ: Մի գուցէ այն ծախքերը, որոնց գումարն, ինչպէս տեսանք, ընդամենը 2400 ուրբլի է: Բայց չէ՞ որ այդ գումարի չնչին մասն

*) Տես «Արարատ» 1874:

է միայն գործ դրուել տէր Յովսէփի վերայ. միթէ այդ էլ պէտք էր խնայել նորանից այն ժամանակ, երբ նա ամիսներով զրկւած էր մնում իւր ընտանի յարկից, պանդխտութեան մէջ վարում էր չարքաշ կեանք, զրկուած էր քահանայական արդիւնքից և այլ եկամուտներից և այլն: Էլ չենք յիշում, թէ որքան յուզմունք, անհանգստութիւն, անքուն գիշերներ, սրտալի վերաբերմունք էր սպառում նա գործի յաջողութեան համար. Թիֆլիսում թէ հայ թէ օտար, ով որ ականատես է եղել նորա գործունէութեան, զարմացած էին նորա վերայ: Մարդիկ կային, որ մինչև իրենց վերջին շունչն ամէն տեղ և ամէն ժամանակ, երբ առիթ էր լինում, պատմում զրուստում էին տէր Յովսէփի անձնութիւնը: Փաստաբանները նորա հետ խօսելիս իրարու ասում էին. «Ափսոս, որ այս մարդը բարձր կրթութիւն չէ ստացել, սա մեզանից լաւ է հասկանում իւր գործն և իւր սրտալի վերաբերմունքով մեզ աւելի հեշտ է համոզում»:

Թէ որքան անձնութիւններ և անշահասէր ոգւով կապուած էր նա իւր յանձն առած գործի հետ, ամենից լաւ երևում է այն տաղնապից, որ նա ստիպուեցաւ կրել, երբ հրապարակ ելաւ հաշտութեան խնդիրը: Ինչպէս տեսանք, Արղութեանի ժառանգները իրենց գործակիցներով ամէն հնար գործ դրին եռանդոտ հակառակորդին շփոթելու և սխալեցնելու: Նոքա դիմեցին նաև ստոր միջոցներ: Նախ նոցանից ոմանք սպառնալիքների և ահաբեկութեան դիմեցին, իմացնելով նորան, թէ զլուխը կենդանի չը պիտի տանի Թիֆլիսից, եթէ շատ հետապնդի իրենց զրկելու: Նոքա չէին կարող հասկանալ, թէ ինչո՞ւ զլուխը կուտան, ինչպէս սովոր էին Թիֆլիսեցիք անուանել Աղէքսանդրապօլցոց, պիտի ժառանգէին Արղութեանի կարողութեան մի մասը: Այդ սպառնալիքներն ստիպում էին տէր Յովսէփին ձեռք առնել ծայրայեղ զգուշութիւններ. Բայց հակառակորդները փորձ փորձեցին փնասել և տէր Յովսէփի հացին: Որպէսզի ստիպեն նորան հեռանալ Թիֆլիսից, և գործն անտէր թողնել, նոքա զանազան զրպարտութիւններով զրգուեցին Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձու Նեվէրովին. վերջինս, նորա երկարատև բացակայութիւնը պատժածանից, և այդ կըլինէր, եթէ 1873 Ջրօրհնեաց տօներին Մակար արքեպիսկոպոսը պատահամբ տեղեկացած չլինէր Նեվէրովի մտադրութեանն և իւր ազգու միջամտութեամբ արգելք հանդիսացած: Արղութեան ժառանգներից ոմանք այդ ժամանակ փորձեցին նաև կաշառել տէր Յովսէփին, առաջարկելով մի պատկառելի գումար, եթէ նա յօժարի քաշքշել գործն և ժամանակին չներկայացնել եր-

րորդ անձի բողոքը: «Մինչև վերջին շունչս պիտի աշխատիմ թոյլ շտալ ձեզ յափշտակելու աստուածահաճոյ գործին նուիրուած գումարը, որ իշխան Արղութեանը վաստակել է կոօնների մէջ» այս եզրաւ նորա կտրական պատասխանը ստոր փորձիչներին:

Այս այսպէս լինելուց յետոյ շատ հասկանալի է թէ ինչո՞ւ տէր Յովսէփն ամենևին բանի տեղ չէր դնում իւր համաքաղաքացուց ոմանց կարծիքներն իբր թէ նա իւր շահերի համար է հետևում կտակի գործին: Բայց չմոռանանք, որ իւր շահերին հետևող տէր Յովսէփն իւր կեանքի վերջին տարին, հետամուտ լինելով կանգնել Արղութեան օրիորդական դպրոցի արգի շէնքը Ս. Աստուածածին եկեղեցու արևմտեան կողմում և աչքի առաջ ունենալով տեղի անձկութիւնը, թոյլ տուեց նորա գաւթի մէջ առնել իւր սեփական այն տեղը, որ իւր տան արևելեան կողմի ելևտի միակ ճանապարհն էր: 1890 թ. նորա մահից յետոյ, երբ սկսուեցաւ դպրոցական տան շինութիւնը, տողերիս գրողն, յարգելով իւր հօր վերջին կամքն, ամենևին արգելք չեղաւ իրագործելու այն, ինչոր նախազօծել էր հանգուցեալը, մի պայման դնելով, այն էլ դարձեալ հանգուցեալի կամքին համաձայն, որ հոգաբարձութիւնն արևելեան կողմից թողնի ելևտի համար մի դռան տեղ: Ի պրոցի շէնքը շինուեցաւ, տէր Յովսէփի սեփական գետինն առնուեցաւ դպրոցի գաւթի մէջ, արևելեան կողմից դռան տեղը թողնուեցաւ, բայց հոգաբարձութիւնն յայտնի չէ ինչո՞ւ, փակեց տէր Յովսէփի տան արևելեան ելևտի ճանապարհը:



Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Քառասուն տարի յառաջ այլ կեանք և այլ բարքեր էին Աղէքսանդրապօլում: Իշխան Արղութեանը նորա ստիպողական կարիքներին օգնութեան հասաւ, կարծես երախտագիտական մի հատուցումն անելով այն օգուտների փոխարէն, որ նա տեսել էր այնտեղ իւր աւետարից: Նորա ձեռքի գործն, անկասկած, ընդլայնեց հայ կնոջ տեսութեան հորիզոնն, հանեց նորան խորին սգիտութիւնից և ցոյց տուեց նորան նոր կեանքի ուղին:

Անցաւ քառասուն տարին: Մշտախաղաց ժամանակը դրեց իւր դրոշմն և Աղէքսանդրապօլի վերայ: Հանդէս եկան նոր գործօններ: Քաղաքային ինքնավարութիւնը տարեկան տասնեակ հազարներ է ծախսում կրթական գործի վերայ: Պետական գանձարանը նոյնպէս որոշ չափով օգնում է նոյն գործին: Դոցա շնորհիւ Աղէքսանդրապօլն ունի այժմ միջնակարգ առևտրական դըպրոց, օրիորդական գիմնազիօն, քաղաքային ուսումնարան, մի բանի տարրական քաղաքային երկսեռ դպրոցներ, աղջկանցիւրի սրահասագիտական ուսումնարան և այլն:

Բացի այդ ամենից՝ եկեղեցին էլ իւր պատմական կոչումը շարունակեց և յառաջ տարաւ դպրոցական գործը: Ընդարձակուեցան ու ճոխացան եկեղեցական կալուածներն ու եկամուտները, որոնք տուին Աղէքսանդրապօլին միքանի ծխական երկսեռ դըպրոցներ:

Աչքի է ընկնում այժմ այն հանգամանքը, որ մինչդեռ քառասնամեայ շրջանում զարգացած կեանքն ու տնտեսական յաջողութիւնը հանդէս բերին տեղացի հարուստ վաճառականներ ու մեծատուններ, իշխան Արղութեանի օրինակն այլևս չկրկնուեցաւ և տեղացիներից ոչ որ նորա օրինակին չհետևեցաւ:

Այս ունի, անշուշտ, իւր հաւանական բացատրութիւնը: Կովկասեան հայաբնակ քաղաքների մէջ գուցէ չգտնուի մէկ ուրիշը, որ անցեալ քառասնամեկում երկցուցած լինի դէպի եկեղեցին և եկեղեցական հաստատութիւններն այնպիսի հետաքրքրութիւն, ինչպիսին տեսնում ենք Աղէքսանդրապօլում: Բնականից աղբատ,

չափաւոր և չարքաշ կեանքի սովոր աղէքսանդրապօլցին միշտ էլ իւր վաստակից բաժին է հանել եկեղեցուն: Այդ բաժինն իսկապէս աւետարանական այրու լուման է, աչքի չի ընկել, աչք չի շուրջուցել, բայց կաթիլ կաթիլ ծովացել և նշմարելի արդիւնք է տուել: Ժողովրդի այդպիսի բարեպաշտական տրամադրութիւնն յառաջ է կոչել տէր Յովսէփի նման հոգատարներ, որոնք ազնիւ եռանդով այդ տրամադրութիւնից իբրև մի ծաղկաւէտ բուրաստանից գեղեցիկ փունջեր են յօրինել: Տեսէք եկեղեցիների հոյակապ շէնքերը. տեսէք նոցա շուրջ ընդարձակ դպրոցական և այլ տներն ու կրպակները. աչքի առաջ ունեցէք տասնեակ հազարից աւելի արդիւնք բերող եկամտի աղբիւրները: Քառասուն տարի յառաջ ոչ մէկը նոցանից չկար, եղածն էլ անշուք էր, նուազ ու վախտ: Աղբատ ժողովրդի տուրքերով, տեղական յաջորդների, բահանանների և առաջաւորների ուշադիր խնամքով և տնտեսութեամբ միայն գոյութիւն է առել այդ ամենը:

Եթէ քառասուն տարուայ մէջ չկրկնուեցաւ Արղութեանի օրինակն, և եթէ Աղէքսանդրապօլի մեծատան դաւակնները չտուին նոյն օրինակին հետևող գէթ մի ներկայացուցիչ, ինքն աղէքսանդրապօլցի հայ ծխականը, յարած իւր եկեղեցուն, հարուստ թէ աղբատ, ինքնին փոխարինեց մեծատուններին, ունենալով տէր Յովսէփի նման ուղեցոյցներ: Այլ կերպ ասած, Աղէքսանդրապօլի հայոց հոգևոր պէտքերի համար անցեալ քառասնամեկում մեծատուն և բարերար հանդիսացաւ հայրենի եկեղեցին:

Որքան և կրթական վիճակն յառաջադէմ ճանապարհի վերայ համընթաց է հասարակական կեանքի զարգացմանը, պէտք չէ սակայն մոռացութեան տալ այն, որ կան սկզբունքներ, որոնք անփոփոխելի են և պէտք է մնան Արղութեան և նման դպրոցների ղեկավարութեան հիմքում անխախտ և անշփոթ: Այդպէս են կրօնի ուսումը, մայրենի լեզուի և գրականութեան գիտութիւնը, եկեղեցու և աստուածապաշտութեան սէրն ու պահպանութիւնը, ընտանիքի սրբութեան գաղափարը, պատմութիւնից մեկ ժառանգութիւն հասած նուիրական աւանդներն անարատութեամբ մեր յաջորդներին թողնելու գիտակցութիւնն և այլն:

Հայ ժողովրդի մէջ այդ սկզբունքներն այնպիսի խոր արմատներ ունեն, որ դարեւ շարունակ ամեն մի ձեռնհաս հայ քրիստոնեայ մարդ՝ թագաւորներից ու իշխաններից սկսած մինչև վերջին շինականն՝ իւր սրտին մօտիկ և բաղձալի բարեգործութիւն է ճանաչել՝ իւր վաստակից բաժին հանել նոցա տարածման և պահպանութեան համար: Անթիւ են ապացոյցները թէ հին և թէ վերջին դարերում: Այդպիսիներից մէկն էր և իշխան Ղահ-

րաման Երկայնաբազուկ Արղութեան, մի անձն, որ ամենևին բացառութիւններ կարգում չէ. լինելով աշխարհիս հասարակ մահկանացուներից մէկը, մի պարզ հայ քրիստոնեայ մարդ, նա մըտածեց ու գործեց իբրև Հայոց եկեղեցու հարազատ զաւակ և իւր մարդասիրական գաղափարը դրեց յատկապէս աղքատ հայ աղջիկների դաստիարակութեան գործի մէջ նոյն իսկ Հայոց եկեղեցու ծոցում: Մի հեռատես ձեռնարկութիւն է նորա կտակը: Նա, անշուշտ, մտածում էր, որ Աղէքսանդրապօլը կը դարգանայ. ժողովրդի առջև կբացուեն շատ զուներ ամեն չափի և ուղղութեան կրթութիւն ստանալու: Նա, երևի, հոգւոյ ախար տեսնում էր, որ այդ դռներէն շատերը փակ կը մնան աղքատ հայ ընտանիքների զաւակների առաջ: Եւ նա մշտապէս այդպիսիներին յանկացուց անձեռնմխելի քառասուն հազարի տոկոսը:

Տարակոյս չկայ, որ իշխանի և նորա բարի ցանկութիւնն իրագործողների ակնկալութիւնն էր, որ Արղութեան դպրոցն համապատասխանէ հայ ժողովրդի ոգուն և էական շահերին: Այդ ակնկալութիւնը շատ զեղեցիկ ձևակերպել է տ. Գէորգ դ. կաթողիկոսը, երբ գրում է, անդրանիկ հոգաբարձուներին իւր առաջին կոնգակում.

«Աշակերտուհիք նորոգ դպրոցիդ լիցին զարգացեալք և՛ ուսմամբ և՛ բարոյականութեամբ՝ աստուածաշատութեամբ, համեստութեամբ և ամենայն առաքինութեամբ»:

Հեռատես հայրապետի այս խօսքերն արժանի են ոսկի տառերով դրոշմուելու դպրոցի պատերի, ևս առաւել ղեկավարների սրտերի վերայ: Նոքա սահմանում են դպրոցի գոյութեան նպատակն և ուղղութիւնը: Հայ աղջկան կեանքի ասպարիզում ոսկուց և մարգարտից աւելի այդ երկու ջնաշխարհիկ զարդերը պիտի փայլեցնեն, ուսումն ու բարոյականութիւնը. երկուսն իրար հետ լծորդուած, երկուսն իրարուց անբաժան, մէկն առանց միւսին թերի և անկատար, դոքա պիտի պահպանեն հայ ընտանիքի սըրբութիւնն, հարազատութիւնն ու կենսական յաջողութիւնը:

Արղութեան դպրոցի պատմութեան այս առաջին էջը կնքելու ժամանակ քաղցր է մեղ յուսալ, որ հոգաբարձութիւնն և մանկավարժական խորհուրդն, հրատարակութեան տալով դպրոցի քառասնամեայ պատմութիւնը կարևոր վիճակագրական և այլ տեղեկութիւնների հետ միասին, դիւրութիւն կը նծայեն ամէնքին դիտելու դպրոցի անցեալ կեանքի ելեէջներն և օգտակար հրահանգութիւններ քաղելու ապագային:

Ց Ա Ն Կ

- Նախաբան
- Ա. Իշխան Ղահր. Երկայնաբազուկ Արղութեան.
- Բ. Արղութեանի կտակն և նախապատրաստութիւնը.
- Գ. Կանոնադրութեան հաստատութիւնը.
- Դ. Արղութեան դպրոցի անդրանիկ հոգաբարձութեան հաստատութիւնն և դպրոցի բացումը.
- Ե. Արղութեան կտակի դատը.
- Զ. Բողոքագրի պատրաստութիւնը.
- Է. Հաշտութեան խնդիրը.
- Ը. Տագնապալից օրեր.
- Թ. Սէնատի նխադր.
- Ժ. Մինչև վերաքննութիւն.
- ԺԱ. Վերաքննութիւն.
- ԺԲ. Դատական գործի վերանորոգութիւնը.
- ԺԳ. Տան և չորս հազարի ստացումը.
- Վերջաբան.

«Ազգային գրադարան»



NL0254725

51. 434